

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

Համարեցի

Կումարէազիստիք թիկ

9 ապրիլի շնորհական

Վ-1926



1398

Բ. ԺԱՎՈՐՈԽԿՈՎ

ՀԱՍՏԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ԴՊՐՈՑՈՒՄ

3 (075)
Ժ - 33

ԽՈՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1926

25 APR 2013

11638

3(075)
d-33

25 SEP 2006

Բ. ԺԱՎՈՐՈԽԱԿՈՎ

ՅԱՍՏԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՂԱՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Թարգմ. ռուս. III հրատակությունից

Թույլատրված և Գետական Գիտական Խորհրդի
Մանկավարժական Սեկցիայի կողմէց:

398)

22944-59

Խ. Ա. Չ. Մ. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1926

Ա Թ Ա Զ Ա Բ Ա Ն

Աշխատանքի համար անհրաժեշտ ունակություններ ձեռք բերելու խնդիրն զբաղեցնում է նաև մեղ՝ մանկավարժներիս, վորոնք նույնպես, ինչ հասարակակարգի և հին դպրոցի չնորհիվ, չգիտեն աշխատել ինչպես հարկն ե, անծանոթ են կատարելագործված մեթոդներին։ Անայդ հիմնական հարցն ե, վորով այժմ կլանված ե աշխատանքին դպրոցի ուսուցիչը։

Հարցը նոր չե։ Այդ ծագել ե և ծագում ե յուրաքանչյուր ուսուցչի առաջ, վոր նոր ե վոտք դնում ուսուցչական ասպարեզ։


Ի՞նչ և ի՞նչպես ավանդել դպրոցում, — ահա՛ այն հարցերը, վոր տալիս ե առաջին անգամ դպրոց մտնող ուսուցիչը։

Մեթոդի հարցը վողբերգորեն ե հնչել նաև ինչ դըպրոցի ուսուցչի համար, վորովհետև կրթական այն հիմնարկությունները, ուր նա իր «մանկավարժական» պատրաստությունն ե ստացել, դրան պատասխան չեն տվել։ Հետևանքն այն ե յեղել, վոր ուսուցիչն առաջին հինգ տարին վարժվել ե յերեխաների հետ զբաղվելով, յերկրորդ հնդամյակում նրանց տանջել ե, իսկ վերջին հնդամյակում աշակերտներին՝ սփյուռքել ե սովորել…

Այդ, ի հարկե, թույլատրելի չե աշխատանքային դըպրոցում։

Ուսուցիչը դասառուի իր գերից պետք ե անցնի աշակերտներին կաղմակերպողի՝ դերին։ Ուստի և մենք պետք ե աշակենք և ինչ մանկավարժին՝ իր աշխատանքի մե-

Напечатано в типогр. Госиздата
„Красный Пролетарий“
Москва, Пименовская
ул., д. № 16, в коли-
честве 3000 экз.
Главлит
№ 54304.



թողները նորոգելու, ինչպես նաև յերիտասարդ մանկավարժին՝ նրան սովորեցնելով աշխատանքային դպրոցում կիրառելիք իսկական մեթոդները:

Հիշեցեք ձեր ապրումները դպրոցական ձեր աշխատանքի առաջին տարիներում: Ի՞նչ հարցեր եյին ծառանում ձեր առաջ, յերբ դուք նո՞ր եյիք սկսում դպրոցում աշխատել:

Յուրաքանչյուր դասատուի առաջ, աշխատանքի հենց սկզբում, սովորաբար ծագել են և ծագում են յերեք հարց.

ա) Ի՞նչ ե պահանջում ինձնից դպրոցը:

բ) Ի՞նչ են իրենցից ներկայացնում յերեխաները և նրանք ի՞նչ կարող են ըմբռնել:

գ) Յես ինչ չափով կարող եմ ոգտակար լինել և ի՞նչ-պես պետք ե աշխատեմ տվյալ պայմաններում:

Յեվ իրոք, դասառուի աշխատանքը դպրոցում, ավելի ևս աշխատանքային դպրոցում, բնորոշել են և բնորոշում են յերեք գործոններ.—

1) Այն ինդիբները, վոր դպրոցին առաջարկում ե իշխանության դլուխ անցած դասակարգը:

2) Յերեխաների կարողություններն ու պատրաստությունը:

3) Ուսուցիչների կարողություններն ու պատրաստությունը:

Ահա՝ այս գրքում հեղինակն հերթով այդ գործոնների վրա յե կանգ առնում:

Մեր ուսուցիչներին խիստ ողտակար կարող ե լինել այս ձեռնարկը:

II.

ԴՐՈՅՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ. ԱՇԽԱՏԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ.

ԴՊՐՈՅՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄՈ.ՍԻՆ.

Յերեկիցե յեղել ե արդյոք այնպիսի ժամանակաշրջան, յերբ հասարակությունը, հանձինս այս կամ այն խմբակի, այս կամ այն դասակարգի, դպրոցի առաջ վոչ միայն նպատակներ չդներ, այլև վորոշակի չշեշտեր, թե ընդհանրապես ի՞նչպիսի դաստիարակություն ե տալու հասունացող սերնդին: Այդպիսի ժամանակաշրջան մենք չենք կարող ցույց տալ: Սակայն տարբեր ժամանակաշրջաններում զանազան դասակարգեր իրենց զավակների դաստիարակությունն և կրթությանը տարբեր նպատակներ են զրել:

Այդ պրոբլեմը 80-ական թվականներին առաջին անգամ զրեց հայտնի սոց. դեմ., Յյուրիիսի պրոֆեսոր Ռ. Զայդելը: Այդ պրոբլեմը 1913 թվին սոցիոլոգիայի տեսակետից լուսաբանեց Ռյուլի (նույնպես սոց. դեմ.)՝ «Դասկարաբակության հիմնական հարցեր»-ում, և Ռ. Զադելը՝ 1915 թ. մարտ 2-ին Յյուրիի ուսուցչության առաջ արտասանած իր ճառում—«Դաստիարակության նպատակները» (թարգմանված և սուսերեն—«Սոցիալական մանկավարժության միջազգային պրոբլեմներ»-ում):

Այդ ճառում Ռ. Զարդելը այն միաբն ե պաշտպանում, վոր տարբեր ժամանակաշրջաններում, նայած հասարակական ձևերին, պահանջներին և հասարակության դասակարգային բաժանվածությանը, ըստ այնմ ել նպատակներ եյին դրվում յերեխաների դաստիարակությանն ու կրթությանը:

«Յեթե մենք դիմենք,—ասում են նա,—հասարակության հնագույն ձեերին..., ապա կտեսնենք, վոր ձկնորսությամբ պարապող ցեղերի մոտ դաստիարակության նպատակն եր մատաղ սերնդին լավ ձկնորսներ դարձնել վորսորդությամբ պարապող ցեղերը—դաստիարակում եյին վորսորդներ, խաշնարածությամբ պարապողները—խաշնարածներ. յերկրագործությամբ զբաղվող ցեղերի մոտ դաստիարակության նպատակն եր հանդիսանում հռղագործներ պատրաստելը»:

«Դասակարգային հասարակության մեջ, որինակ, ճորտատիրական հասարակության մեջ այլևս մեկ նպատակ չկա, այլ կան բազմաթիվ զանազան նպատակներ. Այնտեղ դաստիարակչական նպատակը իշխանավորների համար այլ եր, զինվորականների համար այլ. աշխատավորների ու ծառայողների—ճորտերի—համար ել մի ուրիշ տեսակի նպատակ կար. ավելի ճիշտը՝ դաստիարակչական և վոչ մի նպատակ—գեմոսի համար. (Եջ 69):

Նույնը կարելի յե ասել ե՛ միջին տարբերի մասին, և կապիտալիստական կարգերի տիրապետության մասին. դաստիարակությանը տարբեր նպատակներ եյին դնում՝ նայած դասակարգային պատկանելիությանը, ըստ վորում դասակարգային հասարակության մեջ այդ նպատակը սկսվում երագործել դպրոցի միջոցով, դպրոցի, վոր առաջ սպասավորում եր միայն իշխող դասակարգին, իսկ հետո—կապիտալիստական հասարակության մեջ—նաև ստորին դասակարգերին. Կապիտալիստական հասարակությունը պետք զգաց զրագետ զինվորի և բանվորի ու հնագանդ և աստվածավախ քաղաքացու: Նա՛ ևս ժողովրդական դըպրոցի նպատակը դարձրեց հենց այդպիսի քաղաքացի պատրաստելը: Իշխող դասակարգի յերեխաների դպրոցների նպատակը դարձրեց մասնագետ-չինովիկներ կամ բուրժուակամակերպիչներ պատրաստելը:

Կարո՞ղ ե արդյոք ժամանակակից հասարակությունը հրաժարվել այն բանից, վորպեսզի դաստիարակչական ու

կրթական աշխատանքին և մասնավորապես դպրոցում տարվող դաստիարակչական ու կրթական աշխատանքին ճիշտ նպատակ չդնի:

Ճեղափոխությունից հետո միանգամայն ճիշտ հայտնաբերվեցին այդ ինդիքները, վորոնք կարելի յե այսպես ձեակերպել.—ժամանակակից հասարակության մեջ դաստիարակչական և կրթական աշխատանքի նպատակը պետք ելինի—պատրաստել աշխատանքի մարդ՝ թե՛ ֆիզիքական և թե՛ մտավոր տեսակետից, պատրաստել նաև կոմունիստական հասարակության համար մարտնչողներ, այսինքն՝ աշխատանքային դպրոցը առաջին հերթին պետք ե սոցիալական և աշխատանքային ունակությունների դպրոց դառնա:

Բուրժուական մանկավարժությունը մշուշապատ պատասխան տվեց դաստիարակության ու կրթության նպատակների ու ինդիքների մասին տված հարցին: Սովորաբար նա խոսում եր ինքնության, բազմակողմանի հարմոնիկ զարգացման մասին կամ բոլորովին հրաժարվում եր նպատակների և խնդիրների ձեակերպումից և դպրոցի միակ նպատակը գտնում ե յերեխաներին իրենց մանկությունը վերադարձնելու մեջ:

Միանգամայն հասկանալի յե, վոր նա չեր կարող պարզ ասել, թե ինքն ի՞նչ բանի յե ձգտում դպրոցի միջոցով: Ուստի և պետք ե ծայր աստիճան զգույշ մոտենալ այն ամենին, ինչ բուրժուական մանկավարժներն են ասում, և ամեն անգամ նրանց ճառերը ստուգել նրանց դասակարգային իդեոլոգիայի տեսակետից: Այդ ճիշտ ե անել, քանի վոր նրանք բոլորը ցանկանում են իրենց սաներին պատրաստել կյանքի համար, հասարակության մեջ գործելու համար՝ վորպես քաղաքացիներ: Հարկավոր ե միայն նրանց հարցնել, թե նրանք ինչպես են իրենց պատկերացնում այն հասարակությունը, վորի համար նրանք քաղաքացիներ են պատրաստում, և կպարզվի նրանց դեմքը, ինչպես և այն, ինչին նրանք ձգտում են:

Լայլ, Կերպենշտեյների հետ միասին, կպատրաստի

քաղաքացիներ Գերմանիայի համար, Միայն թե՛ կերշենցայները իր արհեստագիտական աշխատանքային գպրոցում կալատրաստի վորակյալ բանվորներ, իսկ Լայբ—ինտելիգենտներ և բուրժուա-կազմակերպիչներ:

Հանսբերգը, թեև կհրաժարվի հարցին պատասխան տալ, կալատրաստի լիբերալ—դեմոկրատական պետության քաղաքայիներ, իսկ Դյուլին, թեև նույնպես կհրաժարվի վերջնականապես ձեակերպել դաստիարակության ու կըրթության նպատակներն ու խնդիրները, բայց և այնպես կալատրաստի Միացյալ Նահանգների դեմոկրատական հանրապետության քաղաքացիներ:

Աշխատանքային գպրոցին առաջադրած նպատակը, աշխատանքային գպրոցի շինարարության պրոբեմի մեջ նիմական հարցն եւ հանդիսանում, վորովհետև գպրոցի նպատակները միշտ ել վորոշել են, թե գպրոցում ի՞նչ եւ արվում, և ինչպես եւ արվում, այսինքն՝ զրանք վորոշում են աշխատանքային գպրոցի և մեթոդը, և բովանդակությունը.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴՊՐՈՅԻ ՆՐԱԳՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ,

Դպրոցի կանոնագրության միջոցով հասարակությունը սովորաբար նիշում եւ գպրոցի կազմակերպությունը. ծրագրների միջոցով—նրա աշխատանքի բովանդակությունը. մեթոդներն արդեն կանխապես վորոշված են լինում՝ գպրոցին վորոշ նպատակներ առաջադրելով. մեթոդները մեծ մասամբ իրենց են յենթարկում գպրոցի կազմակերպման և ծրագրների կատուցման ձեռքը (վորպեսզի սովորեցնել, անհրաժեշտ եւ համապատասխան կազմակերպություն, և վորպեսզի աշխատանքը լավ ու արդյունավետ լինի, ծրագրները պետք եւ մեծ չլինեն և կառուցված լինեն համապատասխան կերպով):

Յեկայսպես, ուսուցիչը աշխատանքն ուկաելու համար, յենելով ժամանակակից հասարակության մեջ գոյություն ունեցող գպրոցի խնդիրներից, պետք եւ իրեն հարց տա, թե

ինքն ի՞նչ ծրագրներով պետք եւ աշխատի, իսկ հետո նա պետք եւ դիմի իր աշխատանքը վորոշող մի ուրիշ գործոնի և աշխատի իմանալ, թե ի՞նչ են իրենցից ներկայացնում այն յերեխաները, վորոնց հետ նա պետք եւ գործ ունենա, և ի՞նչ չափով են նրանք պատրաստված՝ աշխատանքի համար: Այդ հարցը բաժանվում է յերկու մասի՝ ի՞նչ և իրենցից ներկայացնում տվյալ հասակը և ի՞նչ են իրենցից ներկայացնում տվյալ դասարանի յերեխաները: Առաջին հարցին նրան պատասխան եւ տալիս պեղալոգիան, իսկ յերկորդ հարցին— ծանոթությունը յերեխաների հետ:

Ահա առաջին աստիճանի ծրագրների այդ սիեման*).

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴՊՐՈՅԻ ՅԵՎ. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ.—ՊԳԽ-ի ՆՐԱԳՐՆԵՐՈՒՄ

Աշխատանքային գպրոցի համար աշխատանքի այդ սիեմաները կազմելիս ինկատի յեւ առնված գպրոցի խրնովիրները: Ահա թե ինչու նյութերի ընտրություն անելիս հիմք եւ ընդունված աշխատանքը և հասարակական կյանքը թե՛ յերեխաների և թե՛ չափահամների: Ծրագրները կազմելիս ուշադրության եւ առնված և մեթոդները՝ յերեխաների հետ պարապելու, և մանկական շահերն ու կարողությունները:

Յեկայսպես, գպրոցի աշխատանքի—ուրեմն և սխմաների—հիմքում դրված և աշխատանքը և հասարակությունը: Անհրաժեշտ եւ բացարել, թե խոսքը վո՞ր աշխատանքի մասին եւ, վորովհետև՝ նայած թե յերեխաներին ի՞նչպիսի աշխատանք կառաջարկվի և նրանք ի՞նչպիսի աշխատանք կառվորեն, ըստ այնմ ել կատեղծվեն նրանց ունակությունները և հոգեբանությունները: Յեթե մենք յերեխաներին մեծ մասամբ մտավոր աշխատանք առաջարկենք, այդ գեպքում նրանցից կստացվեն մտավոր աշխատանքով պարապողները: Յեթե մենք նրանց առաջարկենք արհեստային կամ գյուղացիական աշխատանք (վորը նույնունույթով), այդ գեպքում մենք պատպես արհեստային եւ իր բնույթով), այդ գեպքում մենք պատ-

*) Տես յերես 10.

II.

ԴՐՈՌՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՅԵՐԵՒԱՆԵՐԸ.

Այժմ հարց ե ծագում—արդյո՞ք այս ամենը մատչեց՝ յեւ առաջին աստիճանի դպրոցի յերեխաներին (8—12 տար.)։

Այդ մասին մենք պետք ե հարցնենք պեղալողներին, Նրանք մեզ կարո՞ղ են ասել, թե վո՞րալիսի աշխատանք և վո՞րալիսի աշխատանքի ու հասարակական ձեերի ուսումնասիրությունը հետաքրքիր կլինի այդ հասակի յերեխաներին, համապատասխան կլինի դրանց ուժերին։

ՅԵՐԵՒԱՆՅԻ ԶՈՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ.

Պեղալողները վաղուց պարզել են, վոր յերեխայի զարգացումն անցնում է մի քանի շրջաններով, և շրջաններից յուրաքանչյուրը բնորոշվում է իր առանձնահատկություններով, ըմբռնման իր մեթոդներով։

Դեռ XIX դարի վերջին, բիոլոգները պարզել ու սահմանել են յերեխայի զարգացման յերեք գլխավոր շրջան—մանկուրյուն (մինչև առամեները փոխելլ—մոտավորապես մինչև 8 տարեկան), պատանեկուրյուն (մինչև սեռական հասունությունը—մինչև 13—14 տարին՝ աղջիկների համար և 14—15 տարին՝ տղաների համար) և յերիտասարդուրյուն (սեռական հասունացումից հետո մինչև մոտավորապես 21 տարեկան)։

Պատանեկական հասակում յերեխան ոգտվում է ըմբռնման այն մեթոդներով, վորոնցով սովորաբար ոգտվում են գեղագետ-զբողները, նա ամեն ինչ ըմբռնում է կոնկրետ պատկերներում։ Այդ—ինստինքտների վարժության

շրջանն է, հույզերի վարժության շրջանը։ Այդ—ամեն ինչին նմանվել ցանկանալու շրջանն է։—յերեխան միշտ ձգտում է վերարտադրել կոնկրետ պատկերներում, նմանվելով ամեն ինչին—շոգեմեքենային, ավտոմոբիլին, այերոպլանին, վորոնք նա տեսել ե դրանց շարժման ժամանակ. խաղի մեջ նա մեծերի հանգերն ե անում—յերբ խաղում ե «հյուր», «դպրոց»։ Նրա խաղն այդ հասակում ևս հետզհետե փոխվում ե աշխատանքի, խկական և արտադրողական աշխատանքի։

Այդ հասակում հետաքրքրությունը ուղղված է լինում այն ամենի վրա, ինչ կոնկրետ է, պատկերավոր։ Այդ—ազատ ասոցիացիաների և վերապրումների ու այլախոսությունների հասակ է։ Այդ հասակում, ասում ե Մոյմանը, խկական, տրամաբանական սիլոզիզմը (հավաքաբանություն) անմատչելի յեւ յերեխաներին։ Յերեխան իր կյանքի մոտավորապես միայն 14 տար. հասակն է ընդունակ լինում տեսնելու սիլոզիզմների միջև յեղած կապը և դրանք հասկանալու*）։

Այս ամենը մենք պետք ե ի նկատի ունենանք՝ 8—12 տարեկան հասակ ունեցողների համար ծրագրներ կազմելիս։

Բացի դրանից, մենք պետք ե ուշադրության առնենք, վոր պրոլետարական յերեխաները մենակությունից միշտ նեղվում են, ձգտում են փողոց, յերեխաների մոտ, հավաքվում են սովորաբար խմբերով՝ 5—10 մարդ միասին՝ կուլեկտիվ կերպով խաղալու և զվարճանալու համար—

*.) Պերե—«Մանուկը Յ մինչեւ 7 տար.»։ ՄՈՅՄԱՆ—«Դասախոսություններ՝ եքսպերիմենտալ հոգեբանության մասին»։ ԳՐՈՍՍ—«Յերեխաների հոգեկան կյանքը»։ ՍԵՐՈՐՍԿԻ—«Յերեխաների հոգեկան կյանքը»։ ԼԵԶԳԱՅԹ—«Յերեխաների ընտանեկան դաստիարակությունը»։ ԿՈԼՈՅՅԱ—«Մանկական խաղերը»։ ԶԵՄԲԵՐՅԼԵՆ—«Մանուկը», հասոր I յեկ II։ ԿԱՎՊԱՐԵԴ—«Յերեխայի հոգեբանություն»։ ԲՈԼԴՈՒԻՆ—«Հոգեկան զարգացումը՝ սոցիոլոգիական և բարոյական տեսակետներից», հասոր I և II։ Ս. ԽՈՂԻ—«Հոգեգանության ժողովածում»։ մանկավարժության և մանկաբանության մասին»։ ԿՈՄՊԵՅՅԵՐ—«Պատանեկությունը, սրա հոգեբանությունը և մանկաբանությունը»։ Ս. ԽՈՂԻ—«Բնադրության ու զգացմունքները պատանեկական հասակում»։

հարձակում են գործում, թռչունների բներ քանդում, ընտանի կենդանիներին հետապնդում. սոցիալական բնազդը նրանց վարքի մեջ այս հասակում ավելի ցայտուն է յերկան գալիս, քան մինչև այդ. նրանց մեջ սկսում է զարգանալ (մոտավ. 10 տար.) նաև աշխատանքային բնազդ: Դա նրանց մղումի, կառուցելու աշխատանքն է, — շնում են փոքրիկ տնակներ, պատնեշներ, ջրաղացներ (խաղալիք) և այլն:

Այս գծերը վորոշում են, թե ի՞նչպիսի մոտեցում պետք է ունենանք դեպի պրոլետարական յերեխաների սոցիալական դաստիարակությունը և դպրոցական աշխատանքի համար ի՞նչպիսի նյութ և աշխատանքի ի՞նչպիսի մեթոդ պետք է ընտրենք:

Տվյալ հասակի համար — աշխատանքային և սոցիալական ինստինքտաների զարգացման հասակում — ավելի ճիշտ կինի յերեխային շրջապատող իրականությունից, նրա շրջապատից ընտրել այնպիսի նյութեր, վորոնք բնորոշում են մարդու անմիջական պայքարը բնության դեմ, աշխատանքն ու կյանքը գյուղում: Այս շրջանում յերեխային, մանավանդ 10-ից մինչև 12 տարեկաններին, չափազանց հետաքրքրում է աշխատանքն ու կյանքը ուրիշ ժողովուրդ՝ ների, մանավանդ կիսավայրենի ժողովուրդների: Անա թե ինչու աշխարհագրական և պատմակուլտուրական նյութը հետաքրքիր և տվյալ հասակի համար: Յերեխաները հաճույքով են ծանոթանում այդ նյութի հետ և, կիսավայրենիների հանգերն անելով՝ խաղեր են սարքում:

Ի հարկե, այդ հասակի համար նյութեր ընտրելիս, մենք առաջին հերթին հաշվի յենք առնում այն շրջապատի ազդեցությունը, ուր յերեխան ապրում ու զարգանում է: Մենք պետք ենք յերբեք չմոռանանք, վոր ինչքան ել ուժեղ լինի ժառանգականությունը, դրանից շատ ավելի ուժեղ ներգործություն և ունենում նրանց վրա նաև սոցիալական, մանավանդ մանկական շրջապատի ազդեցությունը:

Այդ ներգործությունը կայանում է տվյալ հասակի այն առանձնահատկության մեջ, վոր ունեն 8—12 տարեկանները. — այդ հասակում յերեխաները անսովոր հետաքրքրություն են ցույց տալիս դեպի շրջապատը և ձգտում են ամեն ինչ վերարտադրել, ամեն ինչի նմանվել և խաղից հետզհետե խկական աշխատանքի անցնել:

ու ԺԵՐԻՆ համապատասխան կլինի առաջին տարում ու սումնասիրել ընտանիքն ու դպրոցը:

Կարող են առարկել, վոր այդ ամենը այնքան ծանոթ ե, այնքան և ձանձրացը ել, վոր յերեխաների համար տաղտկալի կլինի: Այդ, ի հարկի, ճիշտ չե. յերեխաները դպրոցը դեռ չեն ճանաչում:

Մենք գիտենք, թե նրանց մեջ դեպի դպրոցն ունեցած ինչպիսի անսովոր հետաքրքրություն և յերեան գալուս: Յեթե ընտանիքի և դպրոցի ուսումնասիրությունը համարենք—ահա՝ ինչպես և աշխատում և ապրում ընտանիքը, և ահա՝ ինչպես ենք աշխատում և ապրում մենք դպրոցում—այդ գեղքում, իհարկի, նոր բանը արդեն ծանոթ բանի հետ համեմատելով, նոր հետաքրքրություն կզարթեցնենք նրանց մեջ: Բացի գրանից, յերեխան նաև ինքնուրույն կերպով և հետաքրքրվում իր ընտանիքի կյանքով, յերբ խաղում և «հայր», «մայր», «հյուր» և այլն:

II—III խմբերում, 9—10 տարեկանների համար արդյո՞ք հետաքրքիր կլինեն գյուղի կամ քաղաքամասի, իսկ հետո քաղաքի և շրջանի աշխատանքն ու կյանքը: Մի՞թե մենք չգիտենք, վոր հենց այդ հասակումն և զարգանում անհրաժեշտությունը՝ վայրը փոխելու և շրջապատը ուսումնասիրելու, սկզբում մոտիկ տեղերը, իսկ հետո՝ ավելի հեռավոր:

Գուցե ամենից շատ կառարկեն այն բանի դեմ, վոր Պ. Գ. Խ.-ի սիւեման փորձում և 11—12 տարեկան յերեխաներին ընդհանուր գծերով ծանոթացնել ԽՍՀՄ-ի հետ (վերջինս համեմատության մեջ դնելով ուրիշ յերկրների հետ) և փորձում և ամբողջ աշխարհի մասին մոտավոր գաղափար կազմել տալ: Ի հարկե այս խնդրում պետք ե սահմաններ լինեն. ուրիշ ժողովուրդների կյանքով հետաքրքրվելն այնքան հատուկ և այդ հասակին և համաշխարհային կյանքի առնչնությունն ավելի ճիշտ ասած՝ ազդեցությունն այնքան զգալի յե մեր մակրի նույնիսկ խուլ

III.

ԴՐԱԳՐՆԵՐԸ, ՅԵՐԵՒԱՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻ- ՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՆԵՐԸ.

Պ.Գ.Խ.-ի ՍԽԵՄԱՆ Ի՞՞Չ և Ա.Ա.ԶԱՐԿՈՒՄ ՍՈՎ.ՈՐԵԼ.

Յեզ այսպես, ի նկատի ունենալով դպրոցի ինդիրները և մանկական հասակի առանձնահատկությունը, ըստ այսմ ել մենք դպրոցական աշխատանքի համար նյութեր կընտրենք:

Տվյալ պահանջներին արդյո՞ք բավարարում ե այն նյութը, վոր առաջարկում են Պ. Գ. Խ.-ի սիւեման ու ծրագրը:


Նրանք ի՞նչ են առաջարկում առաջին աստիճանում սովորել: — Աշխատանքագիտություն, հասարակագիտություն և բնագիտություն:

Արդյո՞ք յերեխայի համար հետաքրքիր կլինի աշխատանքի հետ ծանոթանալ այդ հասակում: — Ի հարկե, քանի վոր նրանում զարգանում ե աշխատանքային ինստինքտը:

Արդյո՞ք նրա համար հետաքրքիր կլինի ուսումնասիրել ընությունը, մարդու՝ բնության գեմ մղած պայքարի տեսակետից: — Այո՛, իհարկե, դա համապատասխանում է նրա հասակին հատուկ հետաքրքրությանը:

Արդյո՞ք նրա համար հետաքրքիր կլինի ուսումնասիրել մարդկանց հասարակական կյանքը: — Ի հարկե, քանի վոր հասարակայնության բնագգը նրա մեջ այդ հասակում ե շատ ուժեղ յերեան գալիս.

Արդյո՞ք յերեխաների համար հետաքրքիր և նրանց



անկյուններում, վոր այդ միանգամայն ընդունելի յե հասակի տեսակետից: Այդ անհրաժեշտ ե նաև ժամանակակից կյանքի տեսակետից: Չե՞ վոր հաճախ միայն առաջին աստիճանով վերջանում է յերեխաների ուսումը, ուստի և դպրոցը յերեխաներին անհրաժեշտորեն պետք է ծանոթացնի ԽԾՀ-ի հետ ընդհանուր գծերով, և նույնիսկ, վորչափի հնարավոր ե, ամբողջ աշխարհի հետ:

Այժմ փորձենք ավելի հանգամանքորեն ծանոթանալ, թե Պ. Գ. Խ.-ի ծրագրներն ի՞նչ են առաջարկում աշխատանքագիտությունից և հասարակագիտությունից:

Ամենից առաջ—այս ի՞նչ նոր, անսովոր տերմիններ են—աշխատանքագիտություն և հասարակագիտություն: Այդ հարցին կարելի յե յերկու կերպ պատասխանել—աշակերտի տեսակետից և ուսուցչի՝ տեսակետից:

ԱՇԽԱՏԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքագիտություն և հասարակագիտություն—աշակերտի տեսակետից կարելի յե անվանել՝ ծանոթությունը աշխատանքի և հասարակական կյանքի հետ, նաև՝ ի՞ր կյանքի, ի՞ր մանկական կյանքի հետ, և հետո՝ մեծերի՝ աշխատանքի ու կյանքի հետ (թե մեր ժամանակի և թե անցյալ ժամանակների աշխատանքի ու կյանքի հետ՝ զանազան յերկրներում):

Ի հարկե, այս տեսակետից դպրոցական և վոչ մի առանձին առարկա—ավելի ևս աշխատանքագիտություն և հասարակագիտություն—չի լինի, վորովհետև թե՛ դպրոցական առարկաները և թե՛ գիտությունները պահանջում են իմացության տրամաբանական մեթոդներ, իսկ յերեխան, ինչպես գիտենք, ամեն ինչ ըմբռնում է կոնկրետ պատկերներում:

Այլ կերպ և վորոշել աշխատանքագիտությունը և հասարակագիտությունը՝ ուսուցչի տեսակետից: Այդ նոր տերմինները, վոր վերջերս են յերեխան յեկած հեղափոխության ըրջանում, ցույց են տալիս, թե դեպի ծրա-

գրների կառուցումն ինչպիսի՝ մոտեցում է յեղել: Դրանք նշանակում են, վոր նյութի կոմպլեկսայնությունը և նրա ընտրությունը պետք ե անել մարքսիստական վորոշ տեսակետից: Այդ տերմինները յերեխան յեկած յերեխաներին աշխատանքի ու հասարակության հետ կոմպլեկսայնորեն ծանոթացնելու անհրաժեշտության հետևանքով, վորովհետև նրանք աշխարհը ըմբռնում են ամբողջովին առաջ:

Թերևս դժվար կլինի սահմաններ գծել աշխատանքագիտության և հասարակագիտության միջև: Այդ կոմպլեքսների նյութը հաճախ միանում է: Յեկ դա շատ լավ է: Այդպես ել պետք է լինի, քանի վոր մարդիկ աշխատում են հասարակության մեջ, մարդիկ աշխատում են հասարակության համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ Ի՞ՆՉ ՆՅՈՒԹ Ե Ա.Ռ.ՋԱ.ՐԿՈՒՄ
Պ. Գ. Խ.-ի ՍԽԵՄԱՆ.

Իսկ ի՞նչ նյութեր ե միացնում աշխատանքագիտության կոմպլեքսը՝ 1 աստիճանի դպրոցի համար: Դրա համար վերցրած ե, ինչպես արդեն գիտենք, աշխատանքը իր բոլոր ձևերում և արտահայտություններում, սկսած մանկական աշխատանքից և ընտանիքի աշխատանքից, վերջացրած՝ ֆաբրիկայում կատարվող ինդուստրյալ աշխատանքով և գիտնականի գիտական աշխատանքով:

Իսկ 1 աստիճանի դպրոցը յերեխաներին ինչպես պետք ե ծանոթացնի աշխատանքի հետ:

Այդ պետք է տեղի ունենա իսկական մանկական աշխատանքի, ինչպես նաև մեծերի աշխատանքին ծանոթանալու միջոցով՝ յերեխաների ըմբռնողությանը մատչելի մեթոդների սահմաններում, այսինքն, կազզակերպելով աշխատանքը, ուսուցիչը ամենից առաջ պետք ե հաշվի առնի այն իսկական աշխատանքը, վորին յերեխաները մասնակցում են, և այն խաղերը, վորոնց մեջ նրանք ժամանակ են անցկացնում և վորոնք նրանց համար փոխարինում են այն-

պիսի աշխատանքի, վորն այս կամ այն կերպ նրանց ծառթացնում ե կյանքի հետ:

Հենց այդպես ել վարփում են ուսման I և II տարվա ծրագրները, վորոնք կազմված են Պ. Գ. Խ.-ի սխեմաների հիման վրա: Նրանք ուշադրության են պոնում յերեխաների և խաղերը, և պարապմունքները, և նրանց մասնակցությունը՝ իրենց ուժերին համապատասխան աշխատանքում: Այսպես, I-ին խմբի I-ին կոմպլեքսը վերցնում ե յերեխաների աշխատանքն ու խաղերը մինչև դպրոցը ընդունվելը: II կոմպլեքսը ծառթություն ե տալիս դըպրոցի և նրա աշխատանքի մասին և այլն: VI կոմպլեքսը հաշվի յե առնում յերեխաների խաղերն ու զվարճությունները ձմեռ ժամանակ և յերեխաների մասնակցությունը ընտանիքի ձմերային աշխատանքներում: Նույնը և—դարնանային յեռամսյակի համար:

Յերեխաների խաղերն ու աշխատանքն այս ծրագրներում ի նկատի յեն առնված յերկու տեսակետով: Նախ՝ վոր յերեխաները գիտակցաբար վերաբերվեն դեպի իրենց աշխատանքն ու խաղերը, և յերկրորդ (ամենազլխավորը)՝ վոր կազմակերպվի մանուկների խսկական աշխատանքը՝ աշխատանքային ունակություններ ձեռք բերելու և այդ ունակությունների մեջ գործնականում վարժվելու համար:

Մենք արդեն ասացինք, վոր միջավայրի ազդեցությունը չափացնց մեծ է, մեծ և մանավանդ աշխատանքային միջավայրի ազդեցությունը: Մենք բոլորս գիտենք, վոր կյանքն ե վորոշում գիտակցությունը: Ահա՝ թե ինչու աշխատանքային դպրոցի ուսուցիչն առաջին հերթին պետք ե մանկական միջավայրի կազմակերպողը լինի, այսինքն՝ նա պետք ե ուշադրության առնի այն աշխատանքը, վորը տանում ե յերեխան՝ դպրոցի աշխատանքին զուգնթաց, և յերեխայի համար պետք ե կազմակերպի այնպիսի աշխատանք, վորի կարիքը նա զգում ե և վորը անհրաժեշտ ե նրա զարգացման համար, վորպեսզի նա ձեռք բերի համապատաս-

խան ունակություններ և իր համար մատչելի ձեռվ գիտակցի այդ աշխատանքի կարևորությունը:

Յերեխան ի՞նչ աշխատանք ե կատարում՝ դպրոցից անկախ:

Գյուղական գպրոցում—տանու աշխատանք և գյուղատնտեսական աշխատանք, յերեխանները ոգնում են ծնողներին տնային տնտեսության գործում, ոգնում են արածացնելու տավարը, վերջինիս խնամում են, ոգնում են և բանջարանոցում և դաշտում: Գյուղական I աստիճանի դպրոցի համար հազիվ թե անհրաժեշտ լինի կազմակերպել այդ աշխատանքը. հազիվ թե նա կարողանա ավելի լավ կազմակերպել, քան այդ անում են գյուղացիական տնտեսության մեջ: Ուրիշ բան ե այն աշխատանքը վորն անհրաժեշտ ե դպրոցի համար և դպրոցում, այսինքն՝ ինքնասպասավորման աշխատանքը (հոգալ մաքրության մասին, մանր ու եմոնտ) և կրթական բնույթ կրող աշխատանքը, այսինքն՝ աշխատանք՝ խաղը՝ այս կամ այն նյութն ուսումնասիրելու համար: Այսպես ել վարփում և Պ. Գ. Խ.-ի ծրագիրը: Որինակի համար վերցնենք կոմպլեքսներից վորեւ մեկը, թեկուզ «Յերեխայի միջավայրը ձմեռ ժամանակ»: Ի՞նչ ե տալիս այդ կոմպլեքսը: «Զյունը բակում մի կողմ կիտել, ձանապարհները ձյունից մաքրել և այլն: Մանկական աշխատանքային խմբակներ կազմակերպել և յերեխաներին յուրացնել տալ ընդհանուր աշխատանքային ունակություններ՝ աշխատանքը կարգավորելու նպատակով: Մանկական ձմեռային խաղեր և գիտարձություններ: Զյունից բլրակներ շինել, սահել և այլն: Յերեխաների առողջության պաշտպանություն: Այս ամենի հետ կապված՝ զրոյցներ յերեխաների և ուսուցչի, պարզ վոտանավորների և փոքրիկ պիյեսների ուսուցում: Ավարտել գրածանաշությունը և թվաբանական գործողությունները 20-ի շրջանում, ինչպես նաև ծանօթանալ ընտանիքի կատարած աշխատանքին՝ ի՞նչ ե անում հայրը ձմբանը և այլն: Գաղափար տալ տվյալ վայրի գլխավոր արհեստների մասին:

Ընտանիքում ամենից հաճախ ի՞նչ նյութերի մասին են տնտեսական խոսակցություններ տեղի ունենում»:

Մենք հիշատակեցինք կոմպլեքսի այն մասը, վորը մտնում է աշխատանքագիտության մեջ: Բայց Պ. Գ. Խ.-ի ծրագրներն այդ ամենը կոմպլեքսայացնում են վոչ միայն ուղղահայաց (այսինքն՝ աշխատանքագիտության կոմպլեքսը բաժանվում է մի շարք կոմպլեքս-թեմաների՝ ուսման առանձին տարիների համար). I տարի — աշխատանքն ընտանիքում և դպրոցում, II տարի — գյուղի աշխատանքը, III տարի — շրջանի աշխատանքն անցյալում և ներկայումս, IV տարի — աշխատանքը ԽՍՀՄ մեջ և ուրիշ յերկրներում՝ անցյալում և ներկայումս), այլև հորիզոնական (այսինքն՝ միացնում են և աշխատանքագիտության, և բնագիտության, և հասարակագիտության նյութը): Ահա՛ թե այդ ինչես ե արված ներքոնիշցալ կոմպլեքսում: — Աշխատանքագիտության և հասարակագիտության մեր առաջ բերած նյութերին ավելացվում ե՝ «տարրական ծանոթություն արտադրության և փոխանակության մասին». — Ինչո՞ւ համար են հարկերը: Յերեխաների պատմվածքներն ու նկարներ՝ մեծերի անային աշխատանքներում նրանց ունեցած մասնակցության մասին: Հոր ճամբորդությունները ձմբանը (հաղորդակցության միջոցներ), Պատմվածքներ՝ դեպի քաղաք կատարած ճամբորդության մասին: Քաղաքը ինչով ե տարրերվում գյուղից: Քաղաքը վորպես կենտրոն, Գյուղացին և բանվորը, նրանց ընդհանուր շահերը: Նրանց ընդհանուր պայքարը բուրժուազիայի դեմ»:

Այսքանը արված ե հասարակագիտությունից, ահա թե այս կոմպլեքսում ինչ ե արվում աշխատանքագիտությունից. — «Կատարել դիտողություններ՝ ձյան յերեսն գալու մասին, գետերն ու լճերը սառույցով ծածկվելու մասին, վորոշել սահնակի ճանապարհները, Դիտողություններ՝ ամաններում ջուրը սառչելու մասին և այլն: Սառնամանիքյեղանակ: Զյանիսրությունը: Ամենասաստիկ սառնամանիք: Զյան փաթիլների ձեւերը: Որվա տեղողության փոփոխությունը: Զյան

կույտերը, Բակում յերեացող թռչուն-հյուրերը, Թռչունների և կենդանիների հետքը ձյան վրա: Ծանոթություն փշատերեւ ծառերի մասին»:

Ի՞նչ ե ԿՈՍՊԼԵՔՏՈՒՐԱ.

Այսպես ե կոմպլեքսայնանում ծրագրի ամբողջ նյութը: Բայց ի՞նչ ե կոմպլեքսը, ավելի ճիշտ՝ կոմպլեքսայնությունը, և այդ ինչո՞ւ յե կիրառվում դպրոցում*):

Մենք կոմպլեքսներ անվանեցինք — աշխատանքագիտությունը, հասարակագիտությունը. մենք կոմպլեքսներ անվանեցինք նաև այն առանձին թեմաները, վորոնց վրա բաժանվում ե աշխատանքագիտությունը, հասարակագիտությունը և այլն. մենք կոմպլեքս անվանեցինք նաև հասարակագիտության, աշխատանքագիտության և բնագիտության վերաբերող նյութերի միացումը մի ընդհանուր թեմայի մեջ: Թե ի՞նչ ե կոմպլեքսը, — այդ մասին շատ ե զրված և այդ մասին շատ են վիճել: Այդ հասկացվել ե յերեք կերպ.

1. Կոմպլեքսը — դասավանդության կենտրոնացումն ե մի ընդհանուր առանցքի շուրջը (մայրենի լեզվի, բնության, աշխատանքի և այլն):

2. Կոմպլեքսը — որգանական կապն ե առարկաների միջև՝ առանց միամնական առանցքի:

3. Կոմպլեքսը — կյանքի մի մասնիկն ե, վոր ուսումնական իրվում ե ամբողջականորեն, այնպես, ինչպես նայերեան ե գալիս կյանքում:

Բայց ի՞նչ պետք ե ընդունենք յելակետ՝ վճռելու համար, թե ի՞նչը պետք ե կոչել կոմպլեքս՝ ավելի շուրջ՝ կոմպլեքսայնություն:

Նախ, անհրաժեշտ ե ասել, վոր այդ տերմինը գործ ե ածվում ծրագրների կառուցման ժամանակ: Դասավանդ-

*). Ն. Սոկոլով՝ «Կոմպլեքսային դասավանդման մեթոդներ», Մոսկվա, 1923 թ. գինը 35 կ., Վ. Աբրամյան՝ «Նոր դպրոցի ճանապարհին», մանկագործ. ժողովածու, Մոսկվա, 1925, գինը 2 ր.:

ման այդպիսի մեթու չկա; Իսկ յեթե խոսվում է կոմպլեքսի մասին, վորպես մեթոդի, —ապա ուրեմն դա —ծրագրների կառուցման մեթոդն եւ ինչումն եւ կայանում ծրագրների կառուցման այդ մեթոդը: Դա կայանում եւ նրանում, վոր դպրոցական աշխատանքի համար նյութը վերցվում եւ վոչ թե առարկաների վրա բաժան բաժան արփած, այլ համախմբված, ընդհանուր ձևով, այնպես, ինչպես նա տեղի ունի կյանքում: Աշխատանքը՝ ամբողջ դպրոցի համար. —ընտանիք և դպրոց. յերեխաների ամառվա կյանքը՝ մինչև դպրոց ընդունվելը, ծանոթությունը դպրոցի և նրա աշխատանքի հետ: Յերեխաների առողջության պաշտպանությունը: Պատրաստություններ ձմբան դեմ: Հոկտեմբերյան հեղափոխությունը և այլն —ուսման Լին տարվա աշնանային-ձմեռային յեռամսյակի համար:

Այստեղից պարզ ե, վոր չի կարելի կոմպլեքսը հասկանալ վոչ առաջին, վոչ յերկրորդ և վոչ ել յերրորդ իմաստով: այդ կիներ—նեղ միակողմանի. կոմպլեքս—ավելի ճիշտ — կոմպլեքսայնություն—ասելով պետք եւ հասկանալ կենսական և դպրոցական նյութի համախմբումը (վորոշ տեսակետից) մի թեմայի մեջ՝ մի ամբողջ տարվա, մեկ յեռամսյակի կամ մեկ շաբաթվա (այդ միենույն ե) ընթացքում կատարվող աշխատանքի համար, այսինքն՝ այդ կինի դպրոցական աշխատանքին վերաբերող նյութի ընտրության և զասավորության մեթոդ, այսինքն՝ մի տերմին, վոր ծրագրների մշակման հարցերին եւ վերաբերում: Ճիշտ եւ, դպրոցում կոմպլեքսայնության համար կա և ուշը արդարացում, ինչպես և ուրիշ կրիտերիյ՝ այդ հասկանալու համար: Այդ կայանում եւ հասակին (8—12 տար.) հատուկ ըմբռնողության մեթոդների և հասակի առանձնահատկությունների մեջ: Այդ հասակում յերեխաները նյութը չեն բաժանում առարկաների (թվաբանություն, ընադիտություն ևայլն) միջն, այդ բաժանումը նրանց պետք չե և նրանց համար խորթ ե, այդ նրանք պատրաստի ընդունել են մեծերից: Յերեխաներն աշխարհն ու կյանքը ըմբռնում

են ամբողջովին վերցրած, այնպես, ինչպես տեղի ունի կյանքում: Նրանք ձգտում են կոմպլեքսայնորեն վերաբետաղեր պատկերներում, առանց վերլուծելու և առանց բաժան-բաժան անելու, այստեղից ել կոմպլեքսայնությունը համապատասխանում ե այդ հասակի իմացության առանձնահատկություններին, նաև նրա պահանջներին:

Այդ վաղուց նկատել են տարրական դպրոցի ուսուցիչները: Դեռ Ուշինսկու ժամանակից նրանք միշտ բնագդարար զգացել են մեր ծրագրների (ըստ զասական առարկաների) վոչ-կենսականությունը հասակի տեսակետից և այդ հարցի համար միշտ պայքարել են միջնակարգ դպրոցի ուսուցիչների դեմ, վորոնք չեյին հասկանում՝ մանկական հասակի հետ ծանոթ չինելու պատճառով:

Այդ բոլորից պարզ է, թե ինչու աշխատանքագիտությունը պետք ե կոչել կոմպլեքս, և ինչո՞ւ համար ծրագրները նյութն ընտրում ե այդ զասավորում են կոմպլեքսներով:

Հասարակագիտությունն ևս նույնպիսի կոմպլեքս ե, ինչպիսին աշխատանքագիտությունն ե, ինչպես արդեն ասացինք վերեւում:

ՀԱՍՏԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ ԵՎՈՒԹ Ե ԱՌԱՋԱՐԿՈՒՄ
Պ.Գ.Խ.-ի ՍԽԵՄԱՆ:

Ամենից առաջ, հասարակագիտությունը (ինչպես և աշխատանքագիտությունը), առաջարկում ե առաջին հերթին կազմակերպել յերեխաների հասարակական գործառնությունը, իսկ հետո արդեն ծանոթացնել մեծերի հասարակական աշխատանքին (գանազան յերկրներում—թե ներկայումս և թե անցյալ ժամանակներում կատարած աշխատանքին): Աշխատանքային դպրոցի գասատուն պետք ե յերբեք չմոռանա, վոր նա պետք ե յերեխաներին տա հասարակական դաստիարակություն, վորը իրականանում ե զիսավորապես հասարակական գործառնության միջոցով, դրա համար ել Պ.Գ.Խ.-ի ծրագրները հենց առաջին կոմպլեքսներում յերեխաների առաջն են դնում դպրոցական աշխատանքի ու կյանքի կազմակերպության, ինչպես և

դպրոցում նրանց հասարակական վարքի ու հասարակական առողջապահության հարցը։ Ծանոթությունը դպրոցի և նրա կարգերի հետ։ Յերեխաների առողջության պաշտպանությունը և դպրոցական աշխատանքի ծրագրումը մոտիկ ապագայի համար։ Այսուհետև ծրագիրը մատնանշումն կապի կազմակերպումը և յերեխաների մասնակցությունը հասարակական (արտադպրոցական) կյանքում հեղափոխական տոներին մասնակցելու միջոցով, ընտանեկան կյանքի հետ, գյուղի հասարակական կյանքի հետ, և հետո, նաև շրջանի ու, վերջապես ԽՍՀՄ ու ամբողջ աշխարհի հետ կապ սահմանելու միջոցով։ Յերեխաների հասակի ու սոցիալական բնագիր զարգացման համեմատ, ծրագիրն առաջարկում է յերեխաներին կազմակերպել կոլլեկտիվ խաղերի համար, ստեղծել ինքնավարական խմբեր, ընդհանուր դպրոցական մի կոլլեկտիվ՝ գլխավորապես կոլլեկտիվ աշխատանքի և միաբան կյանքի համար։

Յեփ, վերջապես, Պ. Գ. Խ.-ի սխեման առաջարկում ե կազմակերպել յերեխաների ծանոթությունն ու իմացումը մեծերի ժամանակակից կյանքի (ընտանիքի, գյուղի, քաղաքի, ԽՍՀՄ և ուրիշ յերկրների)։ Այդ առաջարկվում ե անել (10, 12 տարեկան հասակում)՝ համեմատելով այն ամենի հետ, ինչ անցյալում ե յեղել։ Ուսման Յ-րդ տարում առաջարկվում ե տալ պատկերներ՝ իր շրջանի անցյալ կյանքից, ուսման 4-րդ տարում՝ ծանոթացնել մարդկության կյանքից վերցրած պատկերների հետ։

Այս նյութը (ինչպես արդեն պարզվեց) բաժանվում է թեմաների ըստ ուսման տարիների և տվյալ ուսման տարվա սահմաններում կոմպլեքսայնանում ե աշխատանքագիտության ու հասարակագիտության ծրագրում։

Ինչպես ամեն տեղ, նույնպես և հասարակագիտության համար, սկզբում ընտրվում ե յերեխայի համար պարզ և մոտիկ նյութ, իսկ հետո ավելի բարդ ու հեռավոր, և այդպիսով՝ նյութի ընտրության հիմնական պահանջներից մեկը միանգամայն պահպանված ե լինում։

IV.

ՀԱՍՏԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԻՋԱՎԱՅՐԸ.

ՀԱՍՏԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Հասարակագիտության մասին մեր ասածներից պարզ է, վոր հասարակագիտությունը, թե՛ վորպես յերեխաների հասարակական գործառնություն և թե վորպես հասարակական կյանքի ըմբռնում—սերտ կապված ե սոցիալական դաստիարակության հետ։

Յերեխաների հասարակական գործառնությունը հանդիսանում է հիմնական մասը հասարակական դաստիարակության, վորն իրեն նպատակ է զնում յերեխաներին պատվաստել սոցիալական ունակություններ, այսինքն՝ յերեխաներին սովորեցնել (վորպես հակակշիռ մանր-բուրժուական, ինդիվիդուալիստական ունակությունների, վոր պատվաստում ե գյուղացիական միջավայրը) սոցիալական վարքի և իր աշխատանքում ու կյանքում հասարակական ձեռքի ոգտագործման։ Սոցիալական դաստիարակության մյուս մասը հանդիսանում է արդեն ճանաչած հասարակական կյանքի կենսագործումը, այսինքն՝ յերեխայի համապատասխան հարաբերությունների և հայացքների ձեակերպումն այն հասարակական կյանքի նկատմամբ, վոր յեռում ե նրա շուրջը։ Այստեղից պարզ է, վոր սոցիալական դաստիարակության հարցերն առաջին հերթին պետք ե հետաքրքրեն «դպրոցական» հասարակագետին։ Բանի վոր Լաստիճանի դպրոցի դասավանդությունը կոմպլեքսիվ յեղանակով տանում է մե՛կ ուսուցիչ, ուստի և յուրաքան-

Հուր դասատու պետք ե լինի հասարակագետ. հասարակական դաստիարակություն տալու պարտականությունն ընկնում ե յուրաքանչյուր դասատուի վրա:

Սոցիալական դաստիարակության խնդիրն ե լիովին ընդգրկել յերեխաների ամբողջ աշխատանքն ու կյանքը դպրոցում. բայց այդ չափանիք ե արտահայտվի միայն յերեխաների ինքնավարությամբ:

Նա պետք ե իրագործություն գտնի այն ամենի մեջ, ինչ վոր կատարվում ե դպրոցում:

Յերեխաների՝ դպրոց ընդունվելու որից նրանց պետք ե կազմակերպել կոլլեկտիվների մեջ և նրանց առաջ հասարակական փորոշ խնդիրներ ու պարտականություններ դնել: Ամեն աշխատանք, թեկուզ ուսումնական աշխատանքը, պետք ե կազմակերպել կոլլեկտիվ հիմքերի վրա, այսինքն՝ աշխատանքի բաժանման սկզբունքի և կոլլեկտիվի առաջ պատասխանատվություն կրելու հիման վրա՝ զրխափրամբ կոլլեկտիվ պահանջները բավարարելու համար: Այսպիսի մոտեցումի դեպքում դպրոցական կյանքի անգամ ամենափոքրիկ յերեսոյթները նշանակություն են ստանում, որինակ, թե յերեխաները ի՞նչպես են ձեռք բերում գրքերը և կամ աշխատանքի համար վորեե նյութ—կոլլեկտիվ կերպով, թե՝ առանձին առանձին, նրանք ի՞նչպես են ոգտվում գրքից — անհատապես, թե՝ կոլլեկտիվ յեղանակով. ինչպես են նրանք խաղում — զատ-զատ, թե՝ կոլլեկտիվ կերպով. որապէսներին կոլլեկտիվն ե ընտրում, թե՝ ուսուցիչը. արդյո՞ք նրանք աշխատանք կատարում են արտելներով, թե՝ ով ինչպես ցանկանում ե:

Բայց անհրաժեշտ ե յերեխաներին սովորեցնել աշխատել վոչ միայն կոլլեկտիվում, այլև ինքնուրույն — բարեխղճ և արտադրողական աշխատանք կատարել: Այդ անկարելի յերազործել ուսուցչի հարկադրանքով ու նրա կոնտրոլի տակ: Յերեխայի զիսավոր ոգնականն այդ տեսակետից պետք ե հանդիսանա կոլլեկտիվը: Յերեխաների աշխատանքը պետք ե կազմակերպել այնպես, վոր նրանք

դրա լավագույն կատարման համար պատասխանառու լինեն կոլլեկտիվի առաջ, վորը միշտ ամենախիստ կոնտրոլն ե հանդիսանում և ուրիշներից ավելի լավ ե սովորեցնում աշխատել ինչպես հարկն ե:

Մենք այդ հարցին դեռ կվերագառնաք, յերբ կիսումնք աշխատանքի առանձին մեթոդների և աշխատանքի առանձին որինակների մասին:

Սոցիալական դաստիարակության առարկա պետք ե լինի յերեխաների նաև հասարակական վարքը, այսինքն՝ նրանց փոխադարձ վերաբերմունքը, նրանց վերաբերմունքը գեղի մեծերն ու ոտար մարդիկ: Յերբեք միևնույն չե — յերեխաները կովում են միմյանց հետ թե՝ վոչ, արդյո՞ք պատշաճ վերաբերմունք ունեն դեպի աղջիկները, աղքատները, թույլերը և այլն: Այս ինդըում կոլլեկտիվն ուսուցչից շատ ավելի լավ և ավելի հեշտությամբ կարող ե շտկել վարքագիծը, տրադիցիան, յեթե միայն, իհարկե, ուսուցիչը յերեխաների հասարակական կարծիքը համապատասխան կերպով մշակի:

Հասարակական այդ կարծիքը մշակելու համար գոյություն ունեն մի շարք ձևեր: Այդ հաջողվում ե անել զիսավորապես հետևյալ միջոցներով. սահմանվում ե խըմբի ընդհանուր հուշատերը, ուր արձանագրվում են յերեխաների բոլոր խոշոր վարմունքները. աչքի ընկնող դեպքերը քննադատվում են ընդհանուր ժողովներում, ուր յերեխաները շատ խիստ են լինում այս կամ այն հակասուցիալական վարմունքի նկատմամբ. կազմակերպվում են յերեխաների խմբակներ՝ փորոշ յերեսոյթի դեմ կովելու համար, անձնական որինակի միջոցով կազմակերպվում են ժամանակի լիգա, փոխադարձ ոգնության լիգա և այլն:

Անհրաժեշտ ե ուշադրություն դարձնել սոցիալական դաստիարակության նաև մեկ կարևոր կողմի վրա: Յելակետ ընդունելով նոր հասարակության համար ակտիվ մինարար ուժեր պատրաստելու խնդիրը, ուսուցիչը յերեխաների աշխատանքը պետք ե կազմակերպել այնպես, վոր նրանք

այնպես, վոր նրանց առաջ միշտ ծագեն իրենց կյանքի ու աշխատանքի բարելավման հասարակական խնդիրներ, վոր նրանք այդ խնդիրները լուծել կարողանան իրենց ուժերին համեմատ ձևով, վոր նրանց առաջ ծառանա անհրաժեշտությունը, որինակ՝ վայրենի և անկուլտուրական գյուղից անցնելու կուլտուրական կենցաղի, կեղտից—մաքրության, աշխատանքի պրիմիտիվ ձևերից ու գործիքներից—ինդուստրյալ աշխատանքի և այլն:

Այդ ամենը չափազանց անհրաժեշտ ե՝ յերեխաների կամքը հասարակականորեն ոգտակար աշխատանքի համար դաստիարակելու, դաստիարակելու այնպես, վոր նրանք ցանկանան նոր հասարակության ակտիվ շինարարներ լինել: Այդ իրագործվում ե, ի հարկե, վոչ թե բռնություն գործ դնելով, այլ կազմակերպելով յերեխաների այն վերապրումները, վորոնք բղխում են կյանքի այս կամ այն անկանոնությունից. այդ իրագործվում ե նաև շնորհիվ այն բավականության, վոր նրանք ստանում են՝ կյանքը դեպի լավը կազմակերպելու իմաստով վորոշ նվաճումներ անելով: Զգայությունն ու գիտակցությունը (յերբ վորոշ աշխատանք կամ միջոց գործ դնելուց հետո դրությունը լավանում ե և հաճելի ու հեշտ և լինում ապրելը) դրդում են դեպի գործնեյություն, կամքը դաստիարակվում ե այդ ուղղությամբ գործելու: Իհարկե, այդ լինում ե միայն հաջողության դեպքում, իսկ այդ կախված ե նրանից, թե ինչպիսի խնդիր ե դրված, արդյո՞ք դա համապատասխան ե յերեխաների ուժերին և հետաքրքի՞ր ե նրանց համար, և արդյո՞ք կատարման գործը հաջող ե կազմակերպված:

Այդ տեսակետից ուսուցչին հակայական ոգնություն կարող ե մատուցել պիոներական շարժումը, վոր Ռուսաստանում սկսվել ե 1922 թվից և ընդդրկում ե արդեն 1,500,000-ից ավելի մարդ: Այդ շարժումն իրեն նպատակ ե դնում հասունացող յերեխային դաստիարակել այնպես, վոր նա բանվոր դասակարգի իդյալների համար, նոր հասարակության համար մարտնչող դառնա, այդ շաբ-

ժումը յերեխաների կազմակերպման գործը դնում ե աշխատանքի կոլեկտիվիզմի և բանվորական հեղափոխության համար մղվող կովկի հիմքերի վրա: Ուսուցիչը պետք ե ոգնի յերեխային՝ նրա համար սոցիալական դաստիարակության պայմաններ ստեղծելով:

Սոցիալական դաստիարակության մի ուրիշ խնդիրը—դեպի մեր ժամանակի համապատասխան հասարակական կյանքն ու աշխատանքն ունեցած վերաբերմունքի ձևակերպումն—իրականացվում ե գպրոցական աշխատանքի, յերեխաների վերապրումների ու նրա ուղիղ ըմբռնմանը նպաստող նյութի հաջող ընտրության միջոցով:

Անհրաժեշտ ե հիշել, վոր այդ հասակում նման վերաբերմումքը ստեղծվում ե գլխավորապես յերեխաների վերապրումների շնորհիվ, և նրանց հայացքները մեծ մասամբ կախված են նրանց հույզերից, և վոչ թե մեր տրամաբանական ապացույցներից (այս տեսակետից յերեխայի հայացքների ու վերաբերմունքի համար շատ ավելի մեծ նշանակություն ունի, որինակ, այնպիսի փաստը, ինչպիսին ե պիոներական շարժման մեջ մասնակցելը, քան մեր այն ապացույցները, վոր այդ անհրաժեշտ ե՝ հասարակական տեսակետից): Յեկ ահա այս վերապրումներն ե, վոր պետք ե կազմակերպել:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ. ՄԻԶԱՎ.ԱՅՑՐԸ

Վերեսում մենք այն տեսակետն ենք պաշտպանել, վոր ուսուցիչը, նյութը ընտրելիս և առաջարկելիս, պետք ե հաշվի առնի յերեխայի հասակն ու շահերը: Այդ հարցում նա ավելի մեծ ուշադրություն պետք ե դարձնի այն հանգամանքի վրա, թե միջավայրը ի՞նչ ներգործություն ե ունենում յերեխայի վրա: Վերջերս մի բանավեճ տեղի ունեցավ այն մասին, թե պե՞տք ե արդյոք այժմեյությունը զպրոցում ուսումնասիրել: Դրա կողմանիցները այս տեսակետն ելին պաշտպանում. յելակետ ընդունելով աշխատանքային գպրոցի խնդիրը—անհրաժեշտ ե գպրոցում յե-

ըեխաների հետ միասին այժմեյությունը ուսումնասիրել՝ այդ ուղիղ ե—յելնելով հենց մանկական շահերից։ Նրանք միանդամայն իրավացիորեն մատնանշում եյին այն հանգամանքը, վոր յերեխաները բարիս բուն նշանակությամբ համակվում են այժմեյությամբ՝ դա շարունակ վերաբռազ պելով իրենց խաղերում։ Հակառակորդներն ուրիշ տեսակետ եյին սլաշտպանում։ Նրանք պնդում եյին, վոր յերեխաներն ավելի շատ հետաքրքրվում են մեր նախնիքների կյանքով, պատմությամբ, վորովհետև այդ պարզ ե, ուստի և—յերեխաներին հասկանալի, և վոր յերեխաներին ձանձրացը ել և այժմեյությունը, նրանց համար հետաքրքիր ե անծանոթը, այն, ինչ նման չե նրանց շրջապատում գտնվածներին։

Այժմ այդ վեճը կարող ե լուծվել հետեյալ կերպով։ Յերբ մենք խոսում ենք տվյալ հասակի հակումների մասին, ընդունակությունների և մեթոդների մասին, մենք պետք ե ուշադրության առնենք պատմակուլտուրական ժառանգությունն այն դասակարգի, վորին յերեխան պատկանում ե, այսինքն՝ ուրիշ կերպ ասած՝ մենք պետք ե ի նկատի ունենանք պատմակուլտուրական ժառանգությունը, ինչպես վոր մենք այդ ուշադրության ենք առնում։ յերեխայի զարգացման մասին դատելիս։ Իսկ յերբ խոսք ե լինում դպրոցական աշխատանքի համար նյութեր ընտրելու մասին, մենք չպիտի մոռանանք, վոր յերեխաների վրա ժառանգականությունից շատ ավելի ուժեղ ե ազդում այժմեյությունը, այսինքն՝ այն միջավայրը, վորի մեջնա ապրում և զարգանում ե և վորի հետ նա այս կամ այն կերպ կապված ե և վորը նա հետո պետք ե փոփոխի։ Ուստի և դպրոցի համար նյութեր ընտրելիս, մենք գերադասություն կտանք այժմեյությանը, իսկ նախնական կյանքը մենք կվերցնենք վորպես այժմեյության անտիթեղ, և պատմական կուլտուրական նյութից մենք կոդտվենք այժմեյության հեռանկարներ կազմելու համար։

Անհրաժեշտ ե պայմանավորվել նաև այն մասին, թե այժմեյություն առելով ի՞նչ ենք հասկանում։

Ե՞՞Զ Ե ԱՅԺՄԵՅՈՒԹՅՈՒՆԻ.

Այժմեյություն ասելով հաճախ հասկանում ենք ԽՍՀՄ և իմպերիալիզմ, ուրիշ խոսքով—ընթացիկ մոմենտը։

Ի հարկե, այժմեյությունն այդ կերպ հասկանալը—լրիվ չե։

Այժմեյությունը—դա ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի կուիֆն և ամբողջ աշխարհի կապիտալիստների դեմ՝ ամբողջ աշխարհը կոմունիստական հիմունքների վրա վերակառուցելու,—և վոչ թե միայն ԽՍՀՄ և իմպերիալիզմը. ԽՍՀՄ և իմպերիալիզմ—այդ միայն մի իպերոդ ե, ճիշտ ե՝ բավական նշանակալից, բայց միայն եպիզոդ ե կազմում այդ կովում։

Ի հարկե, այժմեյության մասին այսպիսի ըմբռնումը լրիվ չե. այդ ըմբռնումը իր մեջ չի պարփակում շատ յերկրների կուլտուրապես յետամաց ժողովուրդները, վորոնք դեռ մինչկապիտալիստական շրջանն են ապրում։

Ի հարկե, այժմեյության այսպիսի հասկացողությունը և գպրոցական ամբողջ աշխատանքը միայն այժմեյությամբ համակելու առաջարկությունը հակասում է յերեխայի ուժերին ու շահերին, ինչպես նաև դեպի Պ. Գ. Խ.-ի (վորը առաջարկում ե ընտանիքից ու գպրոցից ուսման միայն VІ տարում անցնել—դյուզի և շրջանի միջոցով—իմպերիալիզմին և ԽՍՀՄ) ծրագրներն ունեցած տեղագրական մոտեցումին։ Այդպիսի հասկացողությունն այն հետևանքը կունենա, վոր դպրոցի ծրագրներից կչքանան պատկերներ՝ տվյալ բնակավայրի անցյալից, ինչպես նաև պատկերներ՝ մարդկության անցյալից։

Պ. Գ. Խ.-ի սխեմաները հաշվի յեն առնում այն հանգամանքը, վոր յերկու դասակարգերի, յերկու կուլտուրաների կոփով յերեխան ավելի լավ ե հասկանաւմ իր դասակարգային ըմբռնողությամբ, բնագդով, քան տրամաբանական հետևություններ, համեմատություններ անելով։

Սիալ ե, ի հարկե, այժմեյության նաև մյուս տեսակի՝ զուտ բուրժուական հասկացողությունը, թե գոյու-

բեխաների հետ միասին այժմեյությունը ուսումնասիրել։ այդ ուղիղ ե—յելնելով հենց մանկական շահերից։ Նրանք միանգամայն իրավացիորեն մատնանշում եյին այն հանգամանքը, վոր յերեխաները բառիս բուն նշանակությամբ համակվում են այժմեյությամբ՝ դա շարունակ վերաբռապարելով իրենց խաղերում։ Հակառակորդներն ուրիշ տեսակետ եյին պաշտպանում, նրանք պնդում եյին, վոր յերեխաներն ավելի շատ հետաքրքրվում են մեր նախնիքների կյանքով, պատմությամբ, վորովհետև այդ պարզ ե, ուստի ե—յերեխաներին հասկանալի, և վոր յերեխաներին ձանձրացը ել է այժմեյությունը, նրանց համար հետաքրքիր ե անծանոթը, այն, ինչ նման չե նրանց շրջապատում գտնվածներին։

Այժմ այդ վեճը կարող ե լուծվել հետեյալ կերպով։ —Յերբ մենք խոսում ենք տվյալ հասակի հակումների մասին, ընդունակությունների և մեթոդների մասին, մենք պետք ե ուշադրության առնենք պատմակուլտուրական ժառանգությունն այն դասակարգի, վորին յերեխան պատշաճում ե, այսինքն՝ ուրիշ կերպ ասած՝ մենք պետք ե ի նկատի ունենանք պատմակուլտուրական ժառանգությունը, ինչպես վոր մենք այդ ուշադրության ենք առնում։ յերեխայի զարգացման մասին դատելիս։ Իսկ յերբ խոսք ե լինում դպրոցական աշխատանքի համար նյութեր ընդուլու մասին, մենք չպիտի մոռանանք, վոր յերեխաների վրա ժառանգականությունից շատ ավելի ուժեղ ե ազդում այժմեյությունը, այսինքն՝ այն միջավայրը, վորի մեջնա ապրում և զարգանում ե և վորի հետ նա այս կամ այն կերպ կապված ե և վորը նա հետո պետք ե փոփոխի։ Ուստի և դպրոցի համար նյութեր ընտրելիս, մենք գերադասություն կտանք այժմեյությանը, իսկ նախնական կյանքը մենք կվերցնենք վորպես այժմեյության անտիթեղ, և պատմական կուլտուրական նյութից մենք կոգտենք այժմեյության հեռանկարներ կազմելու համար։

Անհրաժեշտ ե պայմանագրպել նաև այն մասին, թե այժմեյություն առելով ի՞նչ ենք հասկանում։

Ե՞նք և ԱՅԺՄԵՅՈՒԹՅՈՒՆԻ.

Այժմեյություն ասելով հաճախ հասկանում ենք ԽՍՀՄ և իմպերիալիզմ, ուրիշ խոսքով—ընթացիկ մոմենտը։

Ի հարկե, այժմեյությունն այդ կերպ հասկանալը—լրիվ չե։

Այժմեյությունը—դա ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի կոփիս և ամբողջ աշխարհի կապիտալիստների գեմ՝ ամբողջ աշխարհը կոմունիստական հիմունքների վրա վերակառուցելու, —և վոչ թե միայն ԽՍՀՄ և իմպերիալիզմը. ԽՍՀՄ և իմպերիալիզմ—այդ միայն մի իպերող ե, ճիշտ ե՝ բավական նշանակալից, բայց միայն եպիզոդ ե կազմում այդ կովում։

Ի հարկե, այժմեյության մասին այսպիսի ըմբռնումը լրիվ չե. այդ ըմբռնումը իր մեջ չի պարփակում շատ յերկրների կուլտուրապես յետամնաց ժողովուրդները, վորոնք գեռ մինչկապիտալիստական շրջանն են ապրում։

Ի հարկե, այժմեյության այսպիսի հասկացողությունը և գպրոցական ամբողջ աշխատանքը միայն այժմեյությամբ համակելու առաջարկությունը հակասում ե յերեխայի ուժերին ու շահերին, ինչպես նաև զեպի Պ. Գ. Խ.-ի (վորը առաջարկում ե ընտանիքից ու գպրոցից ուսման միայն VI տարում անցնել—գյուղի և շրջանի միջոցով—իմպերիալիզմին և ԽՍՀՄ) ծրագրներն ունեցած տեղադրական մոտեցումին։ Այդպիսի հասկացողությունն այն հետևանքը կունենա, վոր գպրոցի ծրագրներից կչքանան պատկերներ՝ տվյալ բնակավայրի անցյալից, ինչպես նաև պատկերներ՝ մարդկության անցյալից։

Պ. Գ. Խ.-ի սխեմաները հաշվի յեն առնում այն հանգամանքը, վոր յերկու զասակարգերի, յերկու կուլտուրաների կոփիը յերեխան ավելի լավ ե հասկանաւմ իր դասակարգային ըմբռնողությամբ, բնագրով, քան տրամաբանական հետևություններ, համեմատություններ անելով։

Միալ ե, ի հարկե, այժմեյության նաև մյուս տեսակի՝ զուտ բուրժուական հասկացողությունը, թե գոյու-

թյուն ունի մանկական այժմեյություն՝ մեծերի այժմեյությունից տարբեր, և վորպես թե այդ հասկացողությունը բղխում է մանուկներին մեծերի փշացած աշխարհից հեռու դաստիարակելու անհրաժեշտությունից, և դրա համար պահանջում են յերեխաներին վերադարձնել նրանց մանկությունը։ Այդպիսի այժմեյություն, ի հարկե, անձանոթ և թե՛ պրոետարական և թե՛ գյուղի յերեխային, և այդպիսի այժմեյությունը չպետք է տեղ գտնի աշխատանքային զպրոցում։

Յեվ այսպես, այժմեյությունը յերեխայի համար պետք է հասկանալ առաջին հերթին այն իրականությունը, ուր նա ապրում է և զարգանում, այն այժմեյությունը (կոիվ յերկու դասակարգերի, յերկու կուլտուրաները), վորն այսպես թե այնպես ազդում է նրա կյանքի ու զարգացման վրա, և այն հեռանկարը—XX դարի սահմաններում—վորը չի կարելի այժմեյությունից անջատել, վորովհետև այդ հեռանկարը իր տարրերում և հետեանքներով դեռևս ապրում և լուսաբանում է այժմեյությունն ընթացիկ մոմենտի։

ՀԱՍՏԱԿԱԳԻՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ, ՏԵՂԱԳԻՑՈՒԹՅՈՒՆԸ։

Յերեխայի հասակի համար նյութեր ընտրելիս պետք է ունենալ տեղագիտական մոտեցում, վոր ամենից ուղիղը կլիներ և վորի վրա հիմնված են Պ.Գ.Խ.-ի ծրագրները։

Այդ ծրագրները հանձնարարում են յերեխաների հետ միասին ուսումնասիրել նախ մերձական, յերեխայի անմիջական ըրջապատը, այսինքն՝ նրա տունը, զպրոցը, գյուղը, և միայն հետզհետե ու շատ դանդաղ դուրս բերել նրան ԽՍՀՄ և աշխարհի ասպարեզ։ Այդ մոտեցումն է ընտրվում նրա՝ համար, վոր 8—12 տարեկան յերեխան ընդունակ չե ընդգրկելու ավելի մեծ նյութ՝ համեմատելու և յեղակացություններ անելու համար, վոր նրա համար ավելի դյուրին և ծանոթանալ մեր մոտիկ շրջապատի հետ, վորովհետև այդ կոնկրետ ե, նրան հասկանալի։ Բացի զրա-

նից, տեղագիտական մոտեցումը ստիպում է յերեխային իր ծանոթության առարկան դարձնել կենդանի կյանքը, և վոչ թե գրքի նյութը կամ այն ճշմարտությունները, վոր ուսուցիչն է մատուցում։ Յեվ այդ կենդանի կյանքի հետ նա կարող է ծանոթանալ անմիջապես՝ դիտողությունների միջոցով, վերապրումների ու նմանեցումների միջոցով, այսինքն այն մեթոդներով, վոր հատուկ են նրա հաստինություններ։

Այսպիսով, տեղագիտությունը յերեխաների համար կլինիկ իրեն շրջապատող բնության, հասարակական կյանքի և մարդու աշխատանքի կոմպլեքսային ուսումնասիրություն։ Այսպիսի հասկացողությամբ միանգամայն պարզ վում են հասարակագիտության և տեղագիտության միջև յեղած հարաբերություններն աշխատանքային դպրոցում։ Լաստիճանի գպրոցում հասարակագիտությունը պետք է լինի տեղագիտական, այսինքն՝ առաջին հերթին պետք ե ընտրել տեղական, յերեխայի տեղին մոտիկ, նրան շրջապատող միջավայրից վերցրած նյութեր։

Ի հարկե, տեղագիտության մասին մեր ունեցած ըմբռնումը հակասում է այն ըմբռնումին, վոր գոյություն ունեներ հին դպրոցում և վորը տեղագիտություն եր անվանում «աշխարհագրություն» առարկայի բաժիններից մեկը —հայրենագիտությունը՝ սպեցիֆիկ գունավորումով։ Յեվ այժմ ել մի շարք «աշխարհագրագետներ» առաջարկում են դպրոցում սովորեցնել այսպիսի առարկաներ —հայրենագիտություն, տեղագիտություն, յերկրագիտություն և վերջապես աշխարհագիտություն, և նենց դրանով վոչնշացնել են ցանկանում աշխատանքային դպրոցի անհրաժեշտությունը մեկը —կոմպլեքսայնությունը։

Այդ հակասում է դպրոցում ավանդվող տեղագիտության մի այլ հասկացողությանը, վորը ձգտում է դպրոցում մացնել գիտական տեղագիտություն, այսինքն՝ տեղական շրջանի միանգամայն գիտական նշանակություն ունեցող նյութերի ուսումնասիրությունը սոսկ գիտության

համար: Այդ, ինարկե, առաջին աստիճանի դպրոցի ուժեղ վեր ե: Այդպիսի տեղագիտություն կարող ելինել միայն մի եպիզոդ՝ Ա աստիճանի դպրոցում, և քիչ ոքյեկալիվ արժեք ունի: Բացի դրանից, դա սովորաբար չեն կապում յերեխաների շահերի և ներկա հասարակական կյանքի հետ, այլ նվիրում են յեղանակագիտության, յերկրաբանության, հնագիտության, բուսական աշխարհի և այն ուսումնասիրությանը:

Վերջապես, գոյություն ունի տեղագիտության և մի յերրորդ ըմբռնում. այդ հասկանում են փորպես մի հասարակական շարժում՝ իր սեփական շրջանը ճանաչելու, պարզելու համար նրա կարիքներն ու անհրաժեշտ վերաշնուրությունը: Տեղագիտության այդպիսի ըմբռնում առաջ են մղում Քաղլուսգլխվարը և Պետալանը, վորոնք մտածում են մեր յերկրի ապագա սահմանագծումները (վարչական) այդպիսի տեղագիտության վրա հիմնել:

I աստիճանի դպրոցի յերեխաներն այդպիսի աշխատանքում մասնակցություն ունենալ, ինարկե, կարող են, բայց շատ քիչ, և վերոհիշյալ նպատակի համար շատ չնշին ոգուտ կարող են տալ և այն ել՝ բարձր հասակում (II աստիճանի դպրոցի), վորովհետև այդ աշխատանքն, ինարկե, վոչ թե դպրոցական, այլ գիտական բնույթ ե կրում:

Տեղագիտության մասին ունեցած մեր ըմբռնումը վերև հիշատակած II և III տեսակի ըմբռնումներից տարբերում են նրանով, վոր տեղագիտությունը մենք համարում ենք վոչ թե գիտություն, այլ զուտամանկագարմական մի պրինցիպ (ընտրելով նյութեր՝ դպրոցական աշխատանքի համար) և նրան ուսումնական նշանակություն ենք վերաբերում ու նրա ոգնությանն ենք դիմում յերեխաների դպրոցական աշխատանքում:

ՊՐԻՆՑԻՊՆԵՐ, ՎՈՐՈՆՅ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՆ

Պ. Գ. Խ.-ի ՆՐԱԳՐՄՆԵՐԸ

Այժմ անցնենք այն պրինցիպներին, վորոնց վրա կառուցված են Պ. Գ. Խ.-ի ծրագրները: Պ. Գ. Խ.-ի ծրա-

գրները, նյութեր ընտրելիս (յելակետ ընդունելով դպրոցի գրած նպատակները, այն եւ պատրաստել մարդիկ՝ թե ֆիզիքական և թե մտավոր աշխատանքի համար, հասարակական ջիղ ունեցող մարդիկ, նոր՝ կոմունիստական հասարակության համար մարտնչողներ), դպրոցական ամբողջ աշխատանքի հիմքում ընդունում են տեղագիտությունը, այսինքն՝ աշխատանքի ուսումնասիրությունը իսկական աշխատանքի միջոցով և աշխատանքը ըմբռնելու միջոցով, հետևապես թե ֆիզիքական և թե մտավոր աշխատանքի (յերեխայի հասակին մատչելի ձևերում և սահմաններում) գործառնության միջոցով:

Աշխատանքագիտությունը նրանք միացնում են հասարակագիտության հետ, այսինքն՝ յերեխաների հասարակական գործառնության հետ, ինչպես նաև մեծերի հասարակական կյանքի ըմբռնման հետ:

Հասարակագիտությունն ու աշխատանքագիտությունը նրանք հիմնում են տեղագիտության վրա, յենելով այն գրությունից, վոր I աստիճանի դպրոցականներին կոնկրետ և մոտիկ նյութն ավելի՝ յե մատչելի. հասարակագիտությունը նրանք հիմնում են այժմեյության վրա, վա հասկանալով լայն մտքով—առաջին հերթին՝ յերեխային շրջապատող տեղական միջավայրը, ինչպես նաև ներկա հասարակական հեղափոխությունը՝ սկզբում այն չափով, ինչ չափով նա անմիջապես վերաբերում է յերեխային, իսկ հետո այն չափով, ինչ չափով համաշխարհային դեպքերը ազդում են նրա կյանքի վրա և նա ի վիճակի յե դրանք ըմբռնել ու վերապերել:

Բայց Պ. Գ. Խ.-ի ծրագրները յերեխաներին առաջարկում են նաև պատմակուլտուրական նյութ՝ շրջանի անցյալ կյանքից, ինչպես նաև մարդկության անցյալ կյանքից վերցրած պատկերների ձևով՝ այժմեյությանը հակադրելու, դրա հետ համեմատելու և այդ այժմեյությունը լավ ըմբռնելու համար:

Պ. Գ. Խ.-ը իր ծրագրները կազմելիս ու նյութեր

ընտրելիս՝ յելակետ ե ունեցել սոցիալական դաստիարակության խնդիրները և կոմունիստական հասարակության համար մարտիկներ, ակտիվ շինարարներ պատրաստելու հանգամանքը։ Բայց նա հաշվի յե առնում նաև յերեխային։ Ահա թե ինչու ծրագրների մեջ նյութը դասավորված է կոմպլեքսայնորեն և համապատասխան թեմաներով, այսինքն՝ այդ նյութը համախմբվում է այն թեմաների շուրջը, վորոնք ընտրված են՝ նկատի առնելով դպրոցի խրնութիրները, յերեխայի շահերը և յերեխայի միջավայրը։ Այդ թեմաները արված են I և II խմբերի ծրագրներում՝ տարրավա յեղանակների հետ կապված։

Յեկ այսպես, նրանք ի նկատի ունեն յերեխայի և դաստիարակությունը և կրթությունը, նրանք հիմնում են այնպիսի դպրոց, վորն առաջին հերթին աշխատանքային և սոցիալիստական ուսակությունների մասին և հոգում։

Պ. Գ. Խ.-ի ԾՐԱԿՐՆԵՐԸ ՅԵՎ. ՏԵՂԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Սակայն ուսուցիչը չպետք է մոռանա, վոր այդ ծրագրներն որինակելի յեն և կառուցված են տեղագիտության հիմունքներով, ուստի և ուսուցիչը դրանք պետք է մշակի, քանի վոր դրանք չեն կարող հավասարաշափ ոգտակար լինել մեր յերկրի բոլոր՝ տարբեր պայմաններում գտնվող անկյունների համար։

Այս ծրագրները, ինչպես և ամեն ծրագիր, ուսուցիչը պետք է մշակի, հարմարեցնելով աեղական նյութերին և այն յերեխաներին, վորոնց հետ նա պարագելու յե։

Տվյալ վայրի տեղագիտության տեսակետից աշխատանքային գործառնության և յերեխաների աշխատանքային ուսուցման առարկան կարող է լինել զլլամական տեղական աշխատանքը, իսկ դա կարող է լինել և դյուզատնտեսական, և ֆաբրիկային, և արտիստային, և պրիմետիվ, և բարձր վորակյալ տեսակի։ Այդպես և տեղական շրջանի հասարակական կյանքը կարող է լինել լայն ու խորը, կարող է պլեմիտիվ ու նեղ լինել (որինակ վորեւ յետ ընկած անկյունում)։

Ծրագրների տվյալները յերեխայի տեսակետից կարող են դժվար լինել, վորովհետև յերեխաները կարող են զարգացած չլինել, կամ ծրագրների նյութը կարող է չհամապատասխանել յերեխայի ունեցած մտապատկերներին, ունակություններին։

Ծրագրները մշակելիս, ուսուցիչն այդպիսով պետք է գիտենա իր շրջանն ու իր յերեխաներին, այսինքն՝ պետք են հետազոտություն կատարի՝ յեթե այդ հսարափոր է, համեմայն դեպքում պետք է հաշվի առնի տեղական նյութերը և այն դեպքում պետք է հաշվի առնի տեղական նյութերը և այն, թե իրենցից ի՞նչ են ներկայացնում տվյալ վայրի յերեխաները։

Առաջին հարցի նկատմամբ հետևյալ գործնական աշխատանքն է կատարվում. ուսուցիչը՝ համաձայն ծրագրների մասնանշած ծրագրային թեմաների՝ իր համար պարզում ե տեղական նյութը, վերջինիս ուսուցման պարզում կատարելով այն մեթոդներով, վոր նա կառաջարթյունը կատարելով այն մեթոդներով, վոր նա կառաջարթյունը կատարելով այն մեթոդներին։

Յերկրորդ հարցի վերաբերմամբ նա նույնպես գործնական միջոցի յե դիմում է (թերևս քըննում է) յերեխաներին բանափոր կամ գրավոր ձեռով կամ նրանց հետ միասին փորձնական աշխատանք կազմակերպում և դիմում, թե ինչպես են յերեխաներն այդ կատարում, նրանք ինչպիսի մոտեցում ունեն դեպի աշխատանքը, ի՞նչ չափով են պատրաստված դրա համար, և հաշվի յե առնում այդ աշխատանքի արդյունքները։

Ավելի լավ կլիներ, յեթե ծրագրները տեղական պայմաններին ու յերեխաներին հարմարեցնելու այդ աշխատանքը կատարի վո՛չ միայն տվյալ ուսուցիչը, այս ուսուցչական ամբողջ կոլեկտիվը և նույնիսկ ուսուցչական կոլեկտիվների միությունը։

Բայց, ծրագրները հարմարեցնելուց հետո՝ ևս, ուսուցիչը չպետք է մոռանա, վոր այդ ծրագրները դրված են համար և վո՛չ թե յերեխաների, այսինքն՝ այդ ծրագրները մոտավորապես գծում են աշխատանքի ծավալն ու

կարգը, վորոնք կարող են փոփոխվել՝ համաձայն աշխատանքի բնույթին, յերեխաների պահանջներին ու շահերին:

Այդիսով մենք պատասխանեցինք այն յերկու հարցերին, վորոնք ծագում են ուսուցի առաջ, յերբ նա առաջին անգամ դպրոց ե ընկնում, այսինքն—ի՞նչ ե նրանից պահանջում հասարակությունը և ի՞նչպիսի աշխատանք կարող ե կատարել մանկական հասակը:

V.

ԴՐՈՅՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՈՒՍՈՒՑԻՉԸԸ.

Այժմ անհրաժեշտ ե անցնել յերբորդ հարցին. ի՞նչ պիսի կարողություններ և ի՞նչ պատրաստություն պետք ե ունենա ուսուցիչը ։ աստիճանի դպրոցի աշխատանքը տանելու համար, ի՞նչպիսի մեթոդներ նա պետք ե կիրառի և ի՞նչպես պետք ե գործե աշխատանքային դպրոցում։

«Այդ հարցը վճռելիս նա պետք ե յերբեք չմոռանա, վոր աշխատանքային դպրոցը պետք ե լինի յերեխաների դպրոց։ Զպետք ե հափշտակվել նյութի վոչ քանակով և վոչ ել դրա խորը մշակումով, իսկ ամենից զլիսավորն ե—բոլոր թեմաներին պետք ե մոտենալ յերեխաների՝ տեսակետից, յերեխաների աչքերով և յերեխաների շահերով» (Բլոնսկի, «Աշխատանքային դպրոց», մասն I):

Ի՞նչ և ՊԱՀԱՀՎՈՒՄ ԽՈՐՀԻԳԱՅԻՆ ԴՊՐՈՅՑԻ ՈՒՍՈՒՑՁՑԻՑ

Յեվ այսպես, աշխատանքային դպրոցը դասատուից պահանջում ե շատ ավելի մեծ ուժեր և պատրաստություն, քան հին դպրոցն եր պահանջում։ Այդ միանդամայն հասկանալի յե. աշխատանքային դպրոցը պահանջում ե իսկական աշխատանք, և վոչ թե ձեսկան վերաբերմունք դեպի գործը։ Աշխատանքային դպրոցը պահանջում ե, վոր աշակերտաներն իրենց հասակին համապատասխան ունակություններ ձեռք բերեն թե Փիդիքական և թե մտավոր աշխատանքի համար, վորպեսզի նրանք սովորեն ինքնուրույն կերպով տիրանալ իրենց համար անըրաժեշտ ունակություններին և դիտելիքներին, իսկ այդ

ավելի դժվար ե, քան, հենվելով յերեխաների բանավոր հարուստ հիշողության վրա, զորով նրանց գլուխը մտցնել բանավոր գիտելիքների վորոշ քանակություն։ Ուսուցչի համար ավելի դժվար ե զյուղացիական մանր բուրժուական միջավայրում իրականացնել սոցիալական դաստիարակության և նոր հասարակության համար պայքարողներ պատրաստելու խնդիրը։ Հին դպրոցն, ինարկե, այդ հարցը չեր դնում։ Նա նկատի ուներ միայն նեղ-ազգասիրական և կրոնական դաստիարակությունը—պատմության և կրոնի միջոցով։

Դժվարությունը կայանում է նրանում, վոր ուսուցիչը դասառու-հրամանատարից աշխատանքային դպրոցում պետք ե դառնա յերեխաների կյանքի ու աշխատանքի կազմակերպողը, նա՝ վոր առաջ «հրամայող» եր, այժմ պետք ե դառնա ոգնական՝ յերեխաների կյանքում և նրանց ինքնուրույն աշխատանքում, իսկ դրա համար նա պետք ե լինի պեղալող (մանկաբան) և աշխատանքի հետ ծանոթանա պրակտիկայում։

Ուսուցչի համար ավելի ևս դժվար ե դառնալ այժմ-եյության հասարակագետ, վորովհետեւ կյանքի հին հասարակական կարգերը և հին դպրոցը նրան հեռու ելին պահում կյանքից, հեռու ելին պահում հասարակայնությունից։

Աշխատանքային դպրոցում նա պետք ե լինի վոչ միայն հասարակագետ և աշխատանքագետ (հին դպրոցի վարժուհիների մեծամասնությանը իսկական աշխատանքը անձանոթ եր), այլև հասարակական դործիչ, նաև՝ վորովհետեւ զյուղում նա շատ հաճախ միակ կուլտուրական ուժն է հանդիսանում, յերկրորդ՝ նրա՝ համար, վոր առանց մասնակցելու կյանքին և կյանքի բարելավման համար կատարվելիք աշխատանքին,—նոր դպրոցը չի կալող աշխատանքային դպրոց դառնալ, նա չի լինի կենսական, նա անպետք կլինի տեղական զյուղացիական բնակչության համար։

Ի հարկե, ամենազմական դժվարությունը կայանում

է նրանում, վոր ուսուցիչը չգիտե, թե ինչպես պետք ե իրագործի գպրոցին առաջադրած խնդիրը։ Ի՞նչպես պետք ե կառուցել աշխատանքային դպրոցը։ Ի՞նչպես աշխատել նրանում։ Ահա՝ այն հիմնական հարցը, վոր այժմ վը-ճովում ե ամբողջ ԽՍՀ Միության առաջավոր ուսուցչությունը։

Յեկ այդ վորքան ել դժվար լինի, այդ հարցը վճռել կարող ե միայն ինքը ուսուցիչը՝ իր պրակտիկ աշխատանքում, վորովհետեւ նեղափոխությունը վերևից չի կատարվում, այլ ներքեցից և, ի հարկե, դա դպրոց կմտնի վոչ թե վերևի հրամաններով, այլ ներքեցից։ այդ յենում ե այն հարցից, վոր դրեւ ե ուսուցչությունը—հարկավոր աշխատանքը խորհրդային դպրոցում ի՞նչ կերպ տանել։ Սրա պատասխանը կախված ե աշխատանքի մեթոդներից, մանկավարժական նոր տեխնիկայից։

Յեկ այդ նեղափոխության դժվարությունը դժբախտաբար կայանում ե նաև նրանում, վոր ներկա մանկավարժական բարձրագույն կրթական հիմնարկությունների խոշոր մեծամասնությունը յերիտասարդությանը պատրաստում ե վո՞չ թե նոր, այլ հին դպրոցի աշխատավորներ, ապագա ուսուցիչներին չի՛ ծանոթացնում վոչ աշխատանքային դպրոցի խնդիրներին, վոչ դրանց իրագործման միջոցներին, վո՞չ աշխատանքի այնպիսի նոր մեթոդներին, վորոնք նեղափոխություն են առաջացնում։ այդ հիմնարկներն իրենց արդարացնելու համար զանազան պատճառներ են բերում և մասնավորապես այն, վոր աշխատանքային դպրոցը գեռես չի ձևակերպված։ Այդպիսի պատճառաբանությամբ նրանք միայն վկայում են իրենց տղիտությունը և այն, վոր չեն ցանկանում խորհրդային դըպրոց կառուցել—վորովհետեւ վերջին տարիների ընթացքում աշխատանքային դպրոցի մասին այնքան գրականություն ե հրատարակել և հրապարակել վրա այնքան հարուստ փորձ կա, վոր այդ կբավականացնի՝ ամբողջ կյանքում ուսումնասիրելու համար։ Մեր մանկավարժական բարձ-

ըագույն հիմնարկները հրամանի են սպասում բարձրից և իրենք գործի չեն ձեռնարկում, չնայած շատ նախադըլ-յալներ կան՝ աշխատանքային դպրոցի շինարարության հաջողության համար:

Յեվ այսպես, հեղափոխություն կկատարեն իրենք ուսուցիչները, և այդ առաջ կդա աշխատանքային մեթոդների շնորհիվ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՅԵՎ ՀԵՂՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ.

Յեվ իրոք, վերեկց վորքան ել առաջարկես՝ ինքնաշվարություն, դպրոցի նոր կազմակերպություն, վորքան ել ջանաս աշխատանքային պրոցեսներ մտցնել դպրոցական կյանքում, վորքան ել պրոպագանդ մղես դպրոցի նոր ծրագրների ոգտին—այդ բոլորը դատապարտված ե անհաջողության՝ յեթե դպրոցական աշխատանքի հիմքում դոյություն ունեն աշակերտի պասսիվ դրությունը և դասավանդման հին մեթոդները։ Այդ դեպքում ինքնավարությունը յերեխաների համար անպետք կհամարվի, լավագույն դեպքում դա կփոխվի և կդառնա աշակերտների ոգնությամբ դիսցիպլինան պահպանելու միջոց, աշխատանքային պրոցեսները կդառնան—տանը կատարելու համար արված գծագրության և զանազան պատկերազարդության աշխատանքներ, իսկ ծրագրային նյութը կսերտվի բերանացի։

Միանգամայն այլ բան ե ստացվում, յերբ ուսուցիչը, նկատի առնելով դպրոցի ինդիրները, իր աշխատանքը կկառուցի ակտիվության և յերեխաների աշխատանքի վրա, վորպեսզի նրանց սովորեցնի աշխատել՝ թե ի՞նչպես պետք է հասարակության ակտիվ անդամներ լինել։ Աշխատանքի նոր մեթոդների հետևանքով (հարցի այսպիսի դրումով—դրանք անհրաժեշտ են) պետք ե ամբողջ դպրոցն այլ կերպ կազմակերպել։ Պետք ե սկսել կազմել յերեխաների կուլտեկտիվներ՝ ինքնուրույն կովեկտիվ աշխատանք տանելու համար, պետք ե վոչնչացնել դասարանները և դրանք

դարձնել աշխատանքի սենյակներ, պետք ե վոչնչացնել դասացուցակը, ժամային դասերը, պետք ե ծրագիրը կը բառատել և հասցնել մինիմումի, նյութը (իրենց՝ յերեխաների միջոցով մշակելու հարմարության համար) ակտիվ մեթոդներով դասավորել ըստ թեմաների, համախմբել կոմպելքսներում և այն և այլն։ Իսկ վո՞րոնք են այդ մեթոդները, վորոնք պետք ե հեղափոխություն առաջ բերեն դպրոցում։

VI.

ԴՐՈՅՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Դպրոցի խնդիրները, ինչպես արդեն ասացինք, վորոշում են դպրոցի բովանդակությունը և նրա կազմակերպությունը, բայց գլխավորապես՝ նրա մեթոդները, իսկ մեթոդներն իրենց հերթին վորոշում են դպրոցի ձեր, կազմակերպության ձեն ու կենսունակությունը և նրա աշխատանքի բովանդակությունը:

Բանի վոր մեր խնդիրն ե՞ւ պատրաստել աշխատանքի մարդ և նրան սոցիալական գաստիարակություն տալ ու նոր հասարակության համար շինարար ուժ պատրաստել, ապա, ի հարկե, գաստիարակության և ուսուցման հիմնական մեթոդը կլինի աշակերտների ինքնուրույն կուլեկտիվ աշխատանքի մեթոդը, այսինքն՝ աշխատանքային մեթոդը, իսկ հետո, վորովհետեւ յերեխան չի՛ կարող ամբողջովին ըմբռնել աշխատանքը, — նաև աջակից մեթոդները (սակայն նույնպես կոլլեկտիվ ակտիվության վրա հիմնված) — դիտողական մեթոդը, եքսկուրսիոն մեթոդը, դրամատիզացիայի մեթոդը ևայլն:

ՅԵՐԵԿԱՅԻ ՀԱՍԱԿԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Այժմ նախ քան այդ մեթոդների բովանդակությունն ու դրանց կիրառման պարզաբանությանն անցնելը, անհրաժեշտ և վերհիշել այն, ինչ վոր մենք ասացինք մանկական հասակի (8—12 տար.) առանձնահատկությունների մասին, ըմբռնման նրանց մեթոդների մասին, և այդ նկատի առնել մեթոդներ ընտրելիս ու կիրառելիս:

Գյուղացիների և բանվորների յերեխաներն իրենց

նախորդներից ժառանգություն են ստացել յերկու տեսակի բնագդ՝ աշխատանքային և սոցիալական:

Բայց նրանք մտավոր աշխատանքի համար քի՛չ նախապյախներ են ժառանգել: Սրան պետք է ավելացնել, վոր ընդհանրապես, ինչպես պնդում են պեղալոգները, այս հասակը ճանաչման բոլորովին այլ մեթոդներ և կիրառում: Նա չի կիրառում այն մեթոդները, վորոնք գործ են գնում մտավոր աշխատանքի մարդիկ. Նա ամեն ինչ ըմբռնում է կոնկրետ կերպով, պատկերներում, հորինում և, ստեղծագործաբար նմանեցնում:

Վերջապես, դա բնագդների վարժողության հասակն է, հույզերի և ունակություններ ձեռք բերելու հասակ, նմանվել ցանկանալու և վերապրումների հասակ, մի այնպիսի հասակ, վորն ոգտվում է ազատ փոխաբերումներով և վոչ թե արամաբանական ասոցիացիաներով:

Յելակետ ունենալով այդ հասակին համապատասխան այս կամ այն մեթոդների և գրանց կիրառման այսպիսի ըմբռնումը, պետք է ուղղումներ մտցնել՝ հիշյալ հասակի առանձնահատկություններն ու կարողությունները ճանաչելու մեթոդների տեսակետից: Այսինքն՝ աշխատանքային մեթոդը, որինակ, պետք է հասկանալ վորպես յերեխաների աշխատանք՝ կիսատիպ-աշխատանք, ավելի ձիշտը՝ մի այնպիսի խաղ, վոր փոխվում է աշխատանքի: Ամբողջ աշխատանքը հիմնված կլինի յերեխաների վերապրումների վրա, հույզերի վրա: Այս կամ այն նյութը հասկանալու խնդրում անհրաժեշտ է հիշել, վոր մեծ գեր կիսաղան հույզերը, պատկերները, և վո՛չ թե արամաբանական ապացույցները:

Դասատուն շատ լավ կողտագործի յերեխաների հորինածներն ու դրամատիզացիան, քանի վոր այդ համապատասխանում է նրանց ճանաչողության մեթոդներին, նըրանց շահերին, նրանց ստեղծագործաբար նմանեցնելու հակումին:

Սոցիալական գաստիարակության մեթոդներ ընտրելիս, նա չի մոռանա, վոր սոցիալական ինստինքտն այդ

հաստկում՝ յերևան ե գալիս համերաշխության կերպարանքով, կոփմերում, չարություններում, ավելի մեծ չափով, քան փոխադարձ ողնության գործում, և վոր հաճախ արտահայտվում ե տղաների միաբանությունը՝ հանդեպ աղջիկների և այլն։ Դասատուն պետք ե հիշե, վոր այդ հասակում յերևան են գալիս յերեխայի այս կամ այն ընդունակությունները, և յերեխան, ցանկանալով դրանք վարժեցնել, ձգտում ե ձեռք բերել այս կամ այն ունակությունները, ուստի և նա պետք ե ըստ կարելույն ամբողջովին արտահայտի իր ստեղծագործական հակումները և ըստ հնարավորության լիովին ու հաստատապես ձեռք բերի իր հասակին մատչելի ունակություններ։

Յելակետ ընդունելով այս ամենը, դասատուն առանց վարանման կարող ե զլիավոր գերը տալ աշխատանքային մեթոդին, վորովհետև վերջինս յերեխաների բնագդների վրա յե հենվում։

Դպրոցում աշխատանքի այս կամ այն մեթոդները կիրառելիս, դասատուն չպետք ե մոռանա, վոր յերեխայի միջավայրը ավելի շատ ե դաստիարակում ու սովորեցնում նրան, և վոր դասատուն հանդիսանում ե այդ միջավայրը կազմակերպողը, և վոր դաստիարակության ամբողջ արվեստը գուցե կայանում ե յերեխայի միջավայրի հաջող կազմակերպման մեջ (Դյույի), վորը և վորոշում ե յերեխայի կացությունը, իսկ վերջինիս միջոցով՝ յերեխայի գիտակցությունը։ Բատ վորում, դասատուն պետք ե հաշվի առնի այն հանգամանքը, վոր միջավայրի խիստ կարևոր տարրերից մեկը հենց ինքը պիտի լինի, և այն, թե ինքը ինչպես պետք ե աշխատի։ Ուստի և, յեթե նա իր որինակով, իր վարմունքներով, խոսքով ու աշխատանքի մեթոդներով հակասի այն բանին, ինչ նա դպրոցում ե անում, — ապա նրա աշխատանքը մատնված ե անհաջողության, իսկ հեղափոխությունը դպրոցում կենթարկվի ֆիսուկոյի։ Իսկ ի՞նչպեսպետք ե դասատուն վերապարաստվի՝ աշխատանքի նոր մեթոդները կիրառելու համար։ Նա պետք ե տիրա-

պետի այն աշխատանքի մեթոդներին, վորը նա առաջարկելու յե յերեխաներին (անգրագետը չի կարող գրել սովորեցնել, ատաղձագործական արհեստին անծանոթ մարդը չի կարող այդ արհեստը սովորեցնել, չես կարող հողը մշակել սովորեցնել, յեթե ինքո չգիտես, և այլն)։ Բայց նա չպետք ե մոռանա, վոր աշխատանքի մեջ ինքը պետք ե յերեխաների ողնականը լինի, կոնսուլտատուր՝ յերբ նրանք դժվարությունների յեն հանդիպում, և վոչ մի գեղքում նա չպետք ե նրանց փոխարեն այս կամ այն աշխատանքը կատարի և նրանց ստեղծագործական, հնարելու կարողությունների յերևան գալուն խանգարի։

Նույնը և նրանց հասարակական կյանքում։ — Նա պետք ե նրանց ոգնի կյանքը կառուցելու գործում։ Նրանց առաջ դնի, յեթե այդ անհրաժեշտ ե, այս կամ այն հարցերն ու ինդիրները, բայց նա չպետք ե նրանց փոխարեն ինքը դրանք վճռի և ստեղծված գրությունից դուրս գալու համար պատրաստի միջոցներ առաջարկի։

Այստեղ մեծ դժվարությունը կայանում է նրանում, թե յերեխաների վարքի ինչըրում ինչպես ընտրել միջին գիծը նրանց անսահման ազատության (վոր առաջարկում են, այսպես ասած, ազատ դաստիարակության կողմանիցները և վորը կյանքում նրանք սովորաբար չեն անցկացնում, վորովհետև դա հասցնում ե կամայականության, իսկ հետո՝ յերեխաների անկամության կամ զղայնության) և այն շրջանակների միջև, վորոնք պետք ե իրենք յերեխաները վորոշեն, և վորոնք, ինարկե, մեծերի կողմից պետք ե պաշտպանություն գտնեն։

Մեծ զգուշություն պետք ե գործ գնել թե՛ աշխատանքի թեմաների և թե աշխատանքի նպատակների ընտրության ինդրում, վորովհետև յեթե ուժերից վե՛ր բան ընտրվի — ձանձրույթ կուտածառի և կստիպի աշխատել զորով, հարկադրանքով։ Ամենավատն այն կլինի, յեթե դրա շնորհիվ ստեղծվի հիասթափություն, և աշխատանքը չափարազի։ Դա սխալ ունակություններ կստեղծի աշխատանքի մեջ։

Բայց աշխատանքային դպրոցի դասառուն չպետք է մոռանա, վոր իր կիրառելիք մեթոդները կլինեն վոչ թե դասավանդման մեթոդներ, այլ յերեխաների աշխատանքի ու կյանքի կազմակերպման մեթոդներ։ Նա չպետք է լինի հին դպրոցի ուսուցիչ, վորը այս կամ այն տեխնիկական պրիմիներն ե կիրառում, վորպեսզի աշակերտները շուտո՞վ յուրացնեն իր առաջարկածը, — այլ պետք է լինի աշակերտների ոգնականը, նա պետք է ոգնի, վոր աշակերտները ինքնուրույն, կողեկտիվ յեղանակով յուրացնեն այս կամ այն ունակություններն ու գիտելիքները, վորոնք ծագել են նրանց աշխատանքային կենսական խնդիրներից։

Յեվ այսպես, աշխատանքային դպրոցի հիմնական մեթոդը պետք է լինի աշխատանքային մեթոդը։

Բայց նայած հասակին, դա պետք է հասկանալ տարբեր կերպով։

Ա. Շ Խ Ա. Տ Ա. Ն Ք Ա. Ց Ի Ն Մ Ե Թ Ո Ւ

Այսպիսի տեսակետ միանդամից չստեղծվեց։ Աշխատանքային մեթոդի մասին վաղուց են վիճաբանել, և շատ են վիճաբանել. ի՞նչ կերպ ասես, վոր չեյին հասկանում ու կոչում!

Դեռ 1913 թ., ժողովրդական լուսավորության աշխատավորների I համագումարում, խիստ վիճաբանություններ տեղի ունեցան աշխատանքային մեթոդի ըմբռնման և նրա կիրառման շուրջը։ Այդ կոչում եյին և՛ ձեռքի աշխատանքի մեթոդ, և եվրոպական մեթոդ, և եքսպերիմենտալ-արարատորական մեթոդ, և աշխատանքային-ակտիվության մեթոդ, և ստեղծագործական-իլլյուսարատիվ մեթոդ, և այլն։

Այդ վեճերը անոգուտ եյին, վորովհետև չեյին ցանկանում վճռել աշխատանքային մեթոդի հարցը՝ յելնելով այս յերկու նախատավյալներից—թե ի՞նչ ե աշխատանքը՝ գիտության և կյանքի տեսակետից, և դպրոցում տվյալ հասակի համար ի՞նչպես պետք ե հասկանալ յերեխաների աշխատանքը։

Յեվ իրոք, աշխատանքային մեթոդը եվրիստական (այսինքն՝ զեկավարող հարցերի մեթոդ) կարող են կոչել միայն հին դպրոցի կողմնակիցները։

Աշխատանքային մեթոդը կարող են եքսպերիմենտալ-լրաբարատորային մեթոդ կոչել միայն ինտելեկտուալ գրոցի կողմնակիցները։

Ստեղծագործական-իլլյուսարատիվ մեթոդ կարող են կոչել դպրոցի իլլյուսարատիվ դասավանդման կողմնակիցները։

Զերքի աշխատանքի մեթոդ—արհեստագիտական դրաբուցի կողմնակիցները։

Յեվ, վերջապես, աշխատանքային ակտիվության մեթոդ, այսինքն՝ աշխատանքի միջոցով սովորեցնելու մեթոդ կարող են կոչել աշխատանքային տիպի դպրոցի կողմնակիցները։

Իսկական աշխատանքային դպրոցի համար աշխատանքային մեթոդի հասկացողությունը սերս կապված է աշխատանքի՝ գիտության կողմից ընդունված վորոշման հետ։ Յեթե գիտությունը աշխատանքը հասկանում է վորպես մարդու և բնության միջև կատարվող այնպիսի պրոցես, վոր ուղղված է իրեն ենթարկելու բնությունը և արտահայտվում է նրանում, վոր ձեռքերի, վորքերի, գլխի ոգնությամբ մարդը բնությունը փոփոխում է և, բնությունը փոփոխությունը է հենց իրեն (Կ. Մարքս, «Կապիտալ», խելով I, եջ 142), ապա աշխատանքային մեթոդը կարենատոր, փոփոխում է հենց իրեն (Կ. Մարքս, «Կապիտալ»), և այսպիսի մեթոդ, վորի կիրառման ժամանակ աշակերտներն իրենք են նիշում իրենց համար արտադրողական վորեն հապատակ, հետո պարզում են աշխատանքի համար անհրաժեշտ նյութը և պրիմը, այսուհետև աշխատանքի պրոցեսում դրանք կիրառում են և ամենահեշտ, բարեխիղձ գիտության դիմում դեսպի նիշած նպատակը, այսինքն՝ նյութը մշակում են, վորպեսզի, հասնելով արտադրողական հետահանքների, ունակություններ և գիտելիքներ ձեռք

բերեն, այսինքն՝ իրենց փոփոխեն։ Յելակետ ընդունելով դպրոցի խնդիրները—պատրաստել այնպիսի մարդիկ, վոր ընդունակ լինեն կոլեկտիվ աշխատանքի—այդ աշխատանքը պետք է կատարվի անպայման կոլեկտիվ յեղանակով։

Աշխատանքային դպրոցի համար աշխատանքային մեթոդն ընդհանրապես այս կերպ ենք հասկանում։

Մասնավորապես տվյալ հասակի համար կիրառելիս, այդ հասկացողությունը, ինչպես մենք մի քանի անգամ շեշտել ենք, փոփոխում են նայած յերեխայի ճանաչողության մեթոդներին և ուժերին։ 8—12 տարեկանների համար իսկական աշխատանքը՝ աշխատանք-խաղն ե կամ, ավելի ճիշտը—այնպիսի խաղը, վոր փոխում ե աշխատանքի։ Մենք ընդգծեցինք «իսկական աշխատանքը», վորովհետև աշխատանքային դպրոցում անհրաժեշտ ե յերեխաներին առաջարկել իսկական, այսինքն՝ արտադրողական աշխատանք, սակայն անհրաժեշտ ե չմոռանալ, վոր դա արտադրողական աշխատանք կլինի գլխավորապես յերեխայի համար, և այդ արտադրողական, այսինքն՝ ոգտակար, յերեխայի այս կամ այն պահանջը բավարարող աշխատանքը—կլինի խաղ-աշխատանքը։

Իսկ խաղ-աշխատանքի ի՞նչ տեսակներ պետք է առաջարկել յերեխաներին՝ աշխատանքն ու հասարակական կյանքը գործնականապես ուսուցանելու և զանազան յերկրների ու զանազան ժամանակների մեծերի աշխատանքի ու հասարակական կյանքի մասին գաղափար տալու համար։

Վորովհետև յերեխան այդ հասակում ամեն ինչ և ամենքին նմանեցնում ե, ամենքի հանգերն ե անում, ամեն ինչ իր խաղերում վերաբարդում և ցանկանում ե մեծերին մասամբ նմանվել, ուստի և նրան կարելի յե առաջարկել տարրական աշխատանք—հոգալ իր մաքրության մասին, բնակարանի մաքրության մասին, դպրոցական կյանքի ու աշխատանքի մեջ տարրական կարգ ու կանոն սահմանել, տարրական ողնություն ցույց տալ մեծերին՝ տնային և գյուղատնտեսական գործերում։

Հետո նրան կարելի յե առաջարկել, վոր նա խաղի մեջ վերաբարդությունը այս կամ այն աշխատանքային պրոցեսները, վորոնք նա դիտում ե մեծերի մոտ, և վերաբարդությունը զանազան առարկաներ (ի հարկե, խաղալիքի ձևով), վորոնք նրան պետք են այդ խաղի մեջ։ Նա կարող է վերաբարդությունը դյուղատնտեսական աշխատանքները, արհետավորների աշխատանքը և այլն։ Այդ մասին գրել են՝ Պլեստեկ — «Զեռքի Աշխատանքը», Դյույի — «Ապագայի գպրոցը», «Դպրոցը և յերեխան»։

Յերեխան բավականությամբ կգործի խաղալիք-գործվածքներ, կողովներ, փայտից զանազան իրեր կշինի, կնմանեցնի դարբնին, թիթեղագործին և այլն։

Այսուհետև յերեխան կարող է նմանեցնել զանազան մասնագետների աշխատանքները,—հացթուխի, նամակատարի, կառապանի և այլն։

Վերջապես, յերեխան իր խաղի համար մեծ բավականությամբ կշինի խաղալիք—տնակ, սենյակներ, դրանք կկահավորի և այդտեղ կբնակեցնի տիկնիկներին—մարդկանց։ Խաղի մեջ այդ տիկնիկների հետ նա անողայման այնպիսի հարաբերությունների մեջ կլինի, ինչպես մեծերն են հասարակության մեջ։

Ահա՛ և յերեխայի այդ խաղ-աշխատանքի վրա ել անհրաժեշտ է հիմնել (ի հարկե՝ յերեխաների հասակին մատչելի ձևով) հասարակագիտական ամբողջ նյութը։ Այդ կարենը ե և այն պատճառով, վոր այս կամ այն առարկան կամ աշխատանքային պրոցեսը կամ հասարակական հարաբերությունները վերաբարդելու համար յերեխան պետք ե այդ մանրամասնորեն ուսումնասիրի։ Նա սովորաբար այդ անում ե, և մենք պետք ե նրան միայն ողնենք այդ գործում։

Սակայն յերեխան, բացի իրեն շրջապատող մեծերի աշխատանքն ու կյանքը վերաբարդելուց, մեծ ուրախությամբ վերաբարդում ե նաև փայրենի ժողովուրդների անցյալ ու ժամանակակից աշխատանքն ու կյանքը, վերաբ-

տալրել սամոյեղի վրանը, նրա սահնակը, վորսորդական պիտույքները, հազուսատը, կամ վերաբռագրել նախապատմական բնակիչների այրը, վորսորդության տեսարանը, բայց ամենից հաճույքով՝ վայրենի ձեանալ (խաղալ), նրանց մեթոդներով պատրաստել նախապատմական քարե գործիքներ, շինել խակական վրան կամ շինել բնակարան՝ ծառի վրա, հետո վայրենիների պես հազնվել՝ զարդարվել և ապրել վայրենիների նման—ահա՛ անփոխարինելի բավականությունը այդ հասակի համար:

Այս ամենը ի նկատի յեն առնում Պ. Գ. Խ.-ի ծրագրները:

Աշխատանքային մեթոդի այսպիսի հասկացողությունն ու կիրառումը սինթեզացնում, միացնում ե յերեխաների ֆիզիքական և մտավոր աշխատանքը և անհրաժեշտ ունակություններ ստեղծում, վորովհետեւ յերեխան այդ հասակում դադարում ե բավականանալ սեմվոնիներով և ցանկանում ե ամեն ինչ խականի պես անել:

Փորձը ցույց ե տալիս, վոր այսպիսի մեթոդի կիրառումն հսկայական առավելություններ ունի: Այդ մասին մի անգամ չե, վոր խոսել ենք, ուստի և հետաքրքրվողներին մենք կմատնանշենք համապատասխան աշխատանքներ, որինակ, «История и обществоование в школе» վերջին հրատարակությունը, ուր զետեղված են հոգվածներ՝ աշխատանքային մեթոդի և սրա կիրառման մասին:

ԴԻՏՈՂԱԿԱՆ ՄԵԹՈԴ.

Դասատուի ամենամեծ նվաճումն աշխատանքում—միայն աշխատանքային մեթոդի կիրառումը կլիներ: Բայց այդ անկարելի յե թեկուզ այն պատճառով, վոր յերեխայի աշխատանքային փորձը սահմանափակված ե և տարածությամբ, և ժամանակով, և նրա ուժերով: Ուստի և ստիլված ենք ոգտվել նաև ուրիշ մեթոդներից: Այսպես, որինակ, անխուսափելի յե դիտողական մեթոդի կիրառումը: Սրա կիրառման ժամանակ կարելի յե հենվել յերե-

խաների ցույց տված հետաքրքրության վրա—այն հանգամանքի վրա, վոր նըանք սաստիկ սիրում են պատկերներ նայել:

Յեվ իրոք, ի՞նչպես կարելի յե վերստեղծել այս կամ այն արհեստավորի աշխատանքն ու կյանքը, յեթե յերեխաները դրանք չեն տեսել: Յերեխան ինչպես կարող ե ծանոթանալ այլ յերկրներում ապրող ուրիշ ժողովուրդների աշխատանքի ու կյանքի հետ, յեթե այդ ցույց չես տալիս պատկերներում: Նույնը և նախապատմական ժամանակների կամ զանազան պատմական նյութերի հետ ծանոթանալիս, ինչպես կարելի յե բավականանալ առանց իլյուստրացիայի, յերբ յերեխան այնպես ախորժակով և ձգտում ամեն ինչ կոնկրետ պատկերներում տեսնել:

Քանի վոր աշխատանքային մեթոդի կիրառման ժամանակ անխուսափելիորեն պետք ե դիմել դիտողականության ոգնության, ուստի և փոքրերի բոլոր գրքերը պետք ե պատկերազարդ լինեն և իրենց մեջ պարունակեն գծագրություններ ու ցուցմունքներ այն մասին, թե ինչպես պետք ե շինել այս կամ այն առարկան: Չպետք ե հույս գնել յերեխայի միայն հնարագիտության վրա:

Սակայն դիտողական մեթոդը կիրառելիս պետք ե չմոռանալ աշխատանքային դպրոցի խնդիրները և յերեխաներին պետք ե սովորեցնել ակտիվ ստեղծագործական դիտողականության:

Քանը նըանումն ե, վոր դիտողական մեթոդի ըմբռնումը և կիրառումը (ինչպես և աշխատանքային մեթոդներինը) տարբեր են լինում՝ նայած թե ի՞նչպես ե հասկանում դպրոցը:

Հին դպրոցում դիտողականությունը կայանում եր նըանում, վոր հայրենաստիրական և կրօնական պատկերները կախ ելին անում դասարաններում և դպրոցի միջանցքներում, վորովհետեւ ժամանակ չկար դրանք ցույց տալու դասի միջոցին, նույնիսկ միասակար եր համար վում յերեխաների մտավոր աշխատանքը խանգարել և

նրանց զբաղեցնել «ժամանցով»—պատկերներ ցույց տալով:

ԻԱՅՈՒՍՏՐԱՏԻՎ դպրոցում դիտողական պիտույքներով արդեն սկսում են ոգտվել դասավանդության մեջ, սակայն միայն վորպես իԱՅՈՒՍՏՐԱԳԻՎ՝ դպրոցում ավանդվող այս կամ այն նյութին, վերջինս հիշողության մեջ լավ պահպանելու համար։ Դիտողական սլիտույքի վրա կատարում են մտավոր զանազան մարզանքներ, որինակ, պատկերների բովանդակության անալիզ, դրանց բովանդակությունը պատմելը՝ դասարանում մշակած նյութը վոչ միայն հիշողությամբ մտքում պահելու, այլ և ուրիշ նպատակներով։

Աշխատանքային դպրոցում դիտողական պիտույքը աշխատանքում կոնի, ուստի և դրա ոգտագործումը կկայանա նրանում, վոր զանազան աշխատանքների համար ինքնուրույն դիտվի և ուսումնասիրվի։ Դիտողական պիտույքը կլինի սկզբնական աղբյուրը՝ յերեխայի ինքնուրույն աշխատանքի համար։

Այս ըմբռնումն ենք մենք ունեցել, յերբ կենտրոնական Հումանիտար-Մանկավարժական Ճեմարանում փորձեր ելինք անում և աստիճանի դպրոցի համար դիտողական սոր պիտույքներ պատրաստել։

Մենք պատրաստել ենք մի շարք աղյուսակ-պատկերներ, վորոնք յերեխաներին կծառայեն վորպես աշխատանքի աղբյուր։ Մենք մշակել ենք, որինակ, այսպիսի թեմաներ— փորող փայտից մինչև տրակտոր, նախնական դադարից մինչև ժամանակակից մանող ու գործող մեքենան, ճյուղավոր ծառերի ոգնությամբ լողալուց մինչև ժամանակակից հսկայական շոգենավը, մետաղագործության եվույուցիան և այլն, բնակարանի, կերակուր ձեռք բերելու յեղանակների եվույուցիան և այլն։

Այդ պիտույքների ոգնությամբ յերեխաները կարող են վերաբերել այս կամ առարկաները, այս կամ այն աշխատանքային պրոցեսները՝ զանազան շրջանների աշխատանքն ու կյանքը վերաբերելիս։

ԵՎՍԿՈՒՄԵՐԻ ՄԵԹՈԴ.

Բայց աշխատանքային մեթոդով աշխատելիս վոչ մի կերպ չենք կարող առանց եքսկուրսիոն մեթոդի յոլա գնալ։ Յերեխաներին կյանքի այս կամ այն մասնիկի հետ դիտողական պիտույքների ոգնությամբ ծանոթացնելու փոխարեն, շատ ավելի ուղիղ կլինիկ եքսկուրսիայի միջոցով նրանց մոտեցնել իսկական կյանքին, իսկական աղբյուրին։ Յերեխային վորևէ արհեստի մասին գաղափար տալու համար շատ ավելի լավ եւ յերեխաների հետ միասին այցելել արհեստանոցը և կամ վորևէ ժողովրդի աշխատանքին ու կյանքին ծանոթանալու համար— գնալ հնագիտական կամ պատմական մուզեյում կամ եքսկուրսիայի գնալ քաղաքի այն մասը (կամ մոտակա զյուղը), ուր ապրում ետվյալ ժողովուրդը (որինակ՝ թուրքական թաղը քաղաքում), կամ քաղաքական հարցեր շոշափելիս յերեխաներին տանել համալատասխան տեղը— խորհուրդ, հասարակական այլ հիմնարկություններ (փոստ, հիվանդանոց), վորպեսպի նրանք տեղն ու տեղը ծանոթանան գրանց հետ։

Բայց այստեղ նորից մենք պետք են հիշենք, վոր եքսկուրսիոն մեթոդը լիովին հասկանալն ու կիրառելը կախված է նրանից, թե դպրոցը ի՞նչ տիպի յեւ։

Հին դպրոցում եքսկուրսիան մի հասարակ ու շատ սակագ կազմակերպվող զվարճալի զբոսանք եր՝ մի քիչ հանրակրթական վորոշ նպատակներով։

ԻԱՅՈՒՍՏՐԱՏԻՎ դպրոցում եքսկուրսիոն մեթոդը հասկացվում ու կիրառվում եւ վորպես դասընթացի իԱՅՈՒՍՏՐԱԳԻՎի մեթոդ, ըստ վորում եքսկուրսիաները լինում են յերկու տիպի, — կամ բացադրական-եքսկուրսիա, և կամ ցուցական-եքսկուրսիա։ Յերկորդ տիպի եքսկուրսիան նպատակ է գնում սովորեցնել, թե ինչպես պետք եւ դիտել դասընթացը լուսարանող այս կամ այն նյութը։

Աշխատանքային պրոցում պետք եւ լինի աշխատանքային տիպի եքսկուրսիա, այսինքն՝ դա պետք եւ լինի աշխատանքի մի մասը։ Դա պետք եւ յերեխան դա աշխ-

տանքի համար անհրաժեշտ դեպքում—յերբ պետք է ծառթացնել այս կամ այն ոբյեկտի հետ։ Դա կարելի յե կազմակերպել վորեւ նյութի վրա աշխատելու նպատակով։ Դա կարելի յե կազմակերպել աշխատանքի համար այս կամ այն նյութերը կարգավորելու նպատակով։

Այսպիսով, եքսկուրսիան աշխատանքային դպրոցում դառնում է աշխատանք, աշակերտների ինքնուրույն աշխատանք։

Ի՞նչպես կատարել նման եքսկուրսիաները։

Դրանք կարող են յերեք տեսակի լինել։ Առաջինը՝ եքսկուրսիա-զբոսանքն եւ ամենափոքը յերեխաների համար։ Ահա ինչպես ե այդպիսի եքսկուրսիան նկարագրում մանկատան ուսուցչուհիներից մեկը, վորոն իր յերեխաներին տարել է ծանոթացնելու քաղաքի հետ։

«Մենք հանգիստ քայլերով անցնում ենք Պոկրովսկի այգիյով։ Ահա՛ և Պոկրովի զորանոցները։ Հրապարակում զինվորական վարժություններ են կատարում կարմիր-բանակայինները։ Ինչ խոսք, վոր այս տեսարանը մեծ հետաքրքրություն է պատճառում յերեխաներին, մանավանդ տղաներին։ Լսվում են այսպիսի հարցեր—ինչու յեն նրանք սովորում, ինչու յեն զորանոցներում ապրում, ումն են ծառայում, և այն։ Հարցերն անվերջ են։ Այդ հարցերը կարվեն ամեն առիթի, յերբ յերեխաները համոզվում են, վոր իրենց նկատողություններին ականջ են դնում և տըրաված հարցերին աշխատում են պարզ և լուրջ պատասխաններ տալ, Մենք համում ենք «Պոկրովսկի դարպաններին»։ Այստեղ նրանց հետաքրքրում է տեսարանը—վնրքան տրամվայներ, ավտոմոբիլներ, սահնակներ կան... Զանգերի ուսուլոցների աղմուկին միանում են նաև աղմուկը տղաների և մանը առետրականների, վորոնք առաջարկում են զնել պապիրոսներ, քաղցրեղեն և նման ապրանք։ «Դրանք սպեկուլյաններ են»։ Վո՞րտեղ են յերեխաները այդ բառը սովորել։ Յերեխաներից վոմանք նույնիսկ վորոշ գաղափար ունեն սպեկուլյանների մասին, այնպես վոր՝ վեճ է

առաջանում այդ թեմայի շուրջը. վերջապես, վոմանց ուշադրությունն է գրավում մի սահնակ, վորը կանգնեցնում է միլիցիոները և հրամայում՝ քշել իր կողքով՝ աջ կողմից։ Ինչու Մի խոսքով, նկատողություններից յերեսում է, վոր մի քանիսին հետաքրքրում է միլիցիոների արած գործադրությունը՝ քշել աջ կողմից, մյուսներին—ձիյուկարգագրությունը, վոմանց—սահնակի վրա յերեխան գրկին փրջու վոտքերը, վոմանց—սահնակի վրա յերեխան գրկին սաստած կինը, վոմանց այն, վոր սահնակը նման է գյուղակին սահնակի, վոմանց ել—սահնակին դարսած մորթիները, կան սահնակի, վոմանց ել—սահնակին դարսած մորթիներ։ Յերեխան վորը ըստ յերեսութին տանում են ծախելու։ Յերեխան մեկը պատմում է, թե ինչպես են վոչխարից կաներից մեկը պատմում է, թե ինչպիսի աղմկալից «Պոկրովկայից», մինչ քերթում։ Յեզ հեռանալով աղմկալից «Պոկրովկայից», վոմանք դեռ յերկա՛ր նայում եյին գեղատան պատուհաններին դրած գունավոր գնդերին, կամ ցուցանակներին, վորոնց վրա նա կարող է կարգալ հակայական չափի տառեր՝ «ՌԽՍՖՀ» կամ «ԽՍՀՄ»։

Բայց կարող են լինել և ուրիշ տիպի եքսկուրսիաներ։ Ահա՛ գեպակի փոստատուն կատարված այդ տիպի եքսկուրսիայի նկարագրությունը։

«Մենք ունեցել ենք և ուրիշ տեսակի եքսկուրսիանքներ՝ վորեւ հանձնարարությամբ։ Յերեխաններին առաջարկվել ե գնալ կոռպերատիվ՝ մթերքներ բերելու, և նման աշխատանքներ։ Այդպիսի հանձնարարությունների կատարումը ամենից առաջ ինքնաբավականության արժեք ունի, ինչպես նաև—հասարակագիտական հարուստ նյութ և ներկայացնում։ Միայն անհրաժեշտ է, հարուստ նյութ և ներկայացնում։ Միայն անհրաժեշտ է, վոր դա հաջողությամբ ոգտագործվի։ Յես հիշում եմ մեկ հանձնարարություն—նամակը փոստի արկղը ցցել։ Մենք հանձնարարություն և նամակը մոտեցանք փոստի արկղին և հենց նոր եյինք նամակը ցցել, յերբ յեկավ փոստատան ծառայողը՝ նամակներն արկղից հանելու համար։ Այդ փաստը յերեխանների վրա արկղից հանելու համար։ Այդ փաստը յերեխանների վրա ուժեղ տպագրություն գործեց։ Մաքերի յերկար փոխառություններից հետո, վորոշեց գնալ փոստատուն։ Դեպի նակառանդյուն կատարած այդ եքսկուրսիան իսկական եքս-

Կուրսիայի բնույթ ունեցավ։ Դրա պահանջը ծագեց բնական կերպով։ Դրա արժեքը մեծացավ նրանով, վոր յերեխաները վոչ միայն տեսնում եյին, դիտում, այլ և գործում եյին։ Մի քանի համարձակ յերեխաներ, թվաբանության մեջ ուժեղ, կանգնեցին հերթի՝ մարկաներ զնելու, գնեցին, փողի մնացորդը ստացան, մյուսները կպցըին այդ մարկաները իմ նամակին և գցեցին արկղը։

Վերջապես, յերկրորդ տիպի եքսպուրսիան անցնում է վորպես կոլլեկտիվ կերպով կազմակերպված իսկական աշխատանք։ Այդ տիպի եքսպուրսիաներ սովորաբար յերեան են գալիս նյութեր հավաքելու անհրաժեշտության հետեւ վանքով։ Յերեխաների գլխում աշխատանքի համար ծագում ե այս կամ այն թեման, որինակ՝ յերկաթուղին կամ շուկան, կամ գյուղ և այն։

Նման թեմաների մշակման համար անհրաժեշտ ե համապատասխան կազմակերպություն, վորպեսզի աշխատանքը արդյունավետ լինի։ Նախ՝ անհրաժեշտ ե կազմակերպել և հաստատուն դարձնել յերեան յեկած հետաքրքրությունը։ Այդ կատարվում ե բոլոր յերեխաների ընդհանուր եքսկուրսիայի (յերկաթուղուց, շուկայից, գյուղից ընդհանուր տպավորություններ ստանալու) միջոցով։ Յեթե դուք այդպիսի եքսկուրսիա չանցկացնեք՝ աշխատանքը հաջող չի գնա, քանի վոր կբացակայի ամբողջից ստանալիք ընդհանուր տպավորությունը, բացի դրանից, ամբողջից ստանալիք ընդհանուր տպավորության բացակայության դեպքում—նյութեր հավաքելու համար շուկա կամ յերկաթուղու կայարանն այցելելիս, նրանց ուշադրությունն անպայման կդրավի այն, ինչը առաջուց չեն տեսած և չեն վերապրած։ Վերջապես, այդ առաջին ծանոթությունը յերեխաների առաջ անխուսափելիորեն բազմաթիվ հարցեր կլնի և նրանց ուշադրությունը կգրավի։ Կրկնվող եքսկուրսիան կարելի յե կատարել առանձին իմբերով։ —ամեն մի խումբ հանձն ե առնում իրեն հետաքրքրող հարցերի վերաբերյալ նյութեր հավաքել, այդ նյութը նա պետք է

մշակի և զեկուցի կոլեկտիվին, վորը և կարգի յե բերում հավաքված ամբողջ նյութը։ Նյութերի՝ աշխատանքի բաժանման սկզբունքի հիման վրա հավաքումն հաջող ե լինում մանավանդ այն դեպքում, յերբ դա կապված ե, որինակ՝ վորեւել շուկայի, յերկաթուղու կամ գյուղի ընդհանուր դիրքի, կազմության հետ, վորոնց հետ յերեխաները ծանոթանում են։ Այդ դեպքում յերեխաները այս կամ այն մասերի մոգելները հանելու աշխատանքը իրենց մեջ են բաշխում և այդ աշխատանքի համար նրանք, ինչպես ցույց ե տալիս փորձը, պատրաստ են բազմաթիվ անգամ եքսկուրսիայի գործը, պատրաստ են բազմաթիվ անգամ եքսկուրսիայի գործը։ Այստեղ այդ մեթոդը միանում է աշխատանքային մեթոդին, յեթե յերեխաների աշխատանքին ու կյանքին դրամատիքական ձև է տրվում։

Յերեխաները, ինչպես հայտնի յե, շատ են սիրում խաղալ «վայրենի», «հյուր»՝ մեծերի շարժումներն ու արարմունքը պատկերացնելով։ Խաղում են «գպրոց», սիրում են վերաբատաղել այն, ինչ նրանք տեսել են փողոցում—լրագրավաճառին, միլիցիոներին և այլն։

Ահա թե, որինակ, ըստ ֆորովսկու պատմածի, 10—12 տարեկան յերեխաներն ինչպես եյին վայրենիների ձևերն անում։ «Աշխատանքի ընդհանուր թեման կազմում եր՝ «Նախապատմական յերեխայ՝ կրեկի արկածները», վոր մենք վերլուծում եյինք, ոգտվելով «Նախական կուլտուրայի պատմությունը» գրքից։ Նախական մարդկանց կյանքի պրիմիտիվ ձևերը շատ բաներում չափազանց մոտ ու հասկա-

ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՐԾ ԱՌԱՋԵՐ ՄԵԹՈԴ

նալի յէն այդ հասակի յերեխաներին, նրանք այդ վերաբառում են իրենց խաղերի, շարժումների մեջ, նրանք հիանում են դրանցով, այդ մասին կարգալով Մայն-Ռիդի, Կուլերի և ուրիշների պատմվածքներում։ Յերեխաները յերազում են այդ կյանքի մասին, յերբ մարդիկ «ավելի աղատ» եյին ապրում, կարելի յեր աղատ վազվել, զբունել, ինչպես «Կրեկ յերախան», «աղեղից արձակել», վոչ վոք չեր հակում, և այլն։ (Անկետային այն հարցին, թե կյանքը յե՞րբ եր լավ, ա՞յժմ, թե՞ Կրեկի ժամանակ,—աշակերտների խոշոր մեծամասնությունը լավ ե համարում այն ժամանակվա կյանքը, և միայն 15% վախեցան վայրի դազաններից և այն ժամանակվա բարկացկոտ մարդկանցից ու տների բացակայությունից)։ Այդ հասակի աշակերտների հոգին «բույն քանդող Կրեկի» հետ ե,

Մենք նախ կարդացինք Կրեկ յերեխայի մասին, հետո մենք մի շարք զրույցներ սարքեցինք։ Ահա դրանց թեմաները—«թե ինչպես Կրեկ յերեխան վորսի յեր գնում գազանների վրա»։ Մենք շինեցինք աղեղ, փորձեցինք շինել նետեր և դրանցով խփել—վատ դուրս յեկավ, սակայն մի շարք յեզրակացություններ արինք.՝ Կրեկ յերեխան և նրա ցեղակիցները շատ դժվարությամբ եյին վորսորդությամբ կերակուր հայթհայթում։ Շաբաթ որը մենք գնացինք (կենդանաբանական մուզեյում) տեսնելու մամոնտ, վորին վորսում եյին Կրեկի ծնողները, և կենդանի փիդ (կենդանաբանական այգում), և վճռեցինք, վոր չի կարելի դրան նետով սպանել, չի կարելի սպանել և քարեծայր ձողով։ Վասնեցովի պատմվածքներն ոգնեցին մեզ հասկանալու, թե ինչպես եյին վորսում մամոնտներին։ Այդ հարցը վճռելով, մենք քննում եյինք, թե ինչով եր սնվում Կրեկը։ Մի ամբողջ «խաղ» կազմակերպեցինք՝ հավաքելու գորտեր, ճիճուներ և նման սննդարար բաներ։ Այդ խաղը զարգացրինք և «վորսի» գնացինք յերկակայական մամոնտի վրա։ Դրա ոգուան ել այն եր, վոր «վորսից» վերադառնալիս պատկերացրինք վորսորդ-

ների վերադարձի դրամատիզացիան։ Դրանից հետո ծագեց հետեւյալ հարցը—ինչպես եր կրեկը իր գործիքները պատրաստում։ Հրապարակ բերվեցին զանազան տեսակի քարեր և այլն. այդ բոլորը տաշեցին ու սրեցին՝ ողտվելով վերոհիշյալ գրքույկի պատկերներից։ Իհարկե, քարեկացին պատրաստել, քարից քերիչ պատրաստել չհաջողվեց. բայց արժեքավոր հետևողաբար արեցինք—քարեկենք շինելը շատ դժվար եր, զրա համար ել ունեցողական պետք ե խնամքով բանեցնեյին։ Աշակերտները հեները պետք ե լինամքով բանեցնեյին։ Աշակերտները հեները պետք յեղավ այցելել Գիտությունների Ակադեմիային կից գտնված անտրոպոլոգիական մուզեյը։ Այնուհետև մենք շաբաթ-լույս-կիրակի գիշերը անց կացրինք անտառում ճիշտ և ճիշտ ուսումնակիցներից անման գործիքներում—խարույկ վառեցինք, պահակդրինցներից սունկեր հավաքեցինք և այլն։ Բեմադրեցինք Ռոդրինք, սունկեր հավաքեցինք և այլն։ Բեմադրեցինք և այն տեսարանը, ուր տղաները քարե գորբին պատրաստում։ Հարց ծագեց, թե Կրեկն ինչի՞ ծիքներ են պատրաստում։ Մոտիկ տեղի նեղեր իրեն համար կերակուր պատրաստում։ Մոտիկ տեղում կավ և ավագ կար, փորձ արինք դրանից աման ծեփել և թրծել։ Փորձը սկզբում չհաջողվեց, ամանները ճիշտվում եյին, և գնուեցինք՝ ավելի լավ ե՝ ճյուղերի ոգնությամբ պատրաստել. աշխատեցինք ճյուղերից փոքրիկ զամբյուղներ գործել և դրսից կավով ծեփել, ողտվելով վերոհիշյալ գրքում յեղած նկարներից»։

«Իսկ ի՞նչպես եր Կրեկը կրակ ձեռք բերում։ Փորձեցինք փայտի յերկու կտորներ միմյանց քսել՝ կրակ ստանալու համար, փայտը քարով կոտրելով. զրանից այն յեղակացությունը հանեցինք, վոր ավելի հեշտ ե կրակը պահանելը, քան թե ստանալը։ Կարդացինք համապատասխան պահանելը, քան թե ստանալը։ Կարդացինք համապատասխան պատմվածքներ՝ «Կռիվ» կրակի համար», բեմադրեցինք «Կրակն հանդավ» տեսարանը։ Ուշը եր ապրում կրեկը և ի՞նչպես եյին ապրում մարդիկ այդ շրջանի մարդու ընակարանը (առանց մի այր շինեցինք—այդ շրջանի մարդու ընակարանը (առանց ըրի)), հարց ծագեց՝ թե ի՞նչպես կարող եյին քարե գոր-

ծիքներով փայտերից սյուներ շինել և դրանց վրա այրի կտուրը կանգնեցնել, վճռեցինք, վոր փայտով չեյին անում այդ, այլ քարեր եյին շարում: Մողելի համար ոգտվեցինք վերոհիշյալ գրքի պատկերներից»:

«Ամառվա վերջերին (պարապմունքները տեղի եյին ունենում շաբաթական մի անգամ) մենք վերջապես շոշափեցինք այն հարցը, թե մարդկի ի՞նչպես եյին ցանում հացահատիկները: Սրածայր փայտերի ոգնությամբ փուեր փորեցինք և հացահատիկները թաղեցինք. դրա հետեւ վանքներն ստանալու համար մենք ի հարկե չսպասեցինք, բայց այդ առթիվ մենք զրուցեցինք արեապաշտության և անձրևապաշտության մասին, արևի դերի մասին, հին յերկրագործների տոնակատարությունների կազմակերպման մասին: Դրանց շուրջը «խաղեր» սարքեցինք. սկըզբում յերգն անհաջող եր գնում, բայց հետո հարթվեց և յերեխաների սիրելի յերգը դարձավ»:

Ինչպես յերեսում ե այս փորձից, յերեխաների խաղը հետզհետե կարող ե փոխվել ամբողջ ներկայացումների, այսինքն՝ իսկական դրամատիքական ստեղծադրության:

Յերեխաները նույնքան սիրով ներկայացումներ են կազմակերպում նաև այժմեյական կյանքից:

«Յերեխաները պատրաստվեցին տոնելու Հոկտեմբերյան հեղափոխությունը. կարծիքներ եյին փոխանակում այդ տոնի նշանակության մասին և վորոշեցին տոնին համապատասխան մի ներկայացում կազմակերպել: Սկսեցին կարծիքներ հայտնել թեմայի մասին և վերջապես դասն: Յերեխաները ներկայացման համար ամեն ինչ իրենք եյին պատրաստել. շատ լավ սովորել եյին դերերը և տվին մի այնպիսի ներկայացում, վոր ունկնդիրները սիրով նայեցին: Ամենից շատ՝ յերեխաները սիրում են իրենք հորինել փոքրիկ պիյեսներ և դրանք բեմադրել. այդ պիյեսները մեծ մասամբ լինում են յերեխաների կյանքից»:

Ինչ վոր մենք ասացինք աշխատանքային, կամպեքսային և եքակութիսոն մեթոդների մասին, նույնը պետք ե ասենք նաև դրամատիքացիայի մեթոդի մասին:

Կրկին վորպես հակակշիռ հին դպրոցի, ուր տոն որերին ներկայացումները արտաքին բնույթ եյին կրում, և իլլյուստրատիվ դպրոցի, ուր ներկայացումները ցուցադրում եյին պատմությանն ու գրականության վերաբերյալ նյութեր—աշխատանքային դպրոցում դրամատիքացիան ինքնուրույն նշանակություն ունի, նա—յերեխաների պահանջներ, նա—յերեխաների այնպիսի խաղն ե, վորի միջոցով կյանքն են պատկերացնում:

ՀՈՍՈՐԱԿԱԳԻՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԳՐՔԵՐ.

Մինչև այժմ մենք վոչինչ չենք ասել հասարակագիտության դասագրքի մասին: Կարելի յե կարծել, թե դըպրոցում բոլորովին ավելորդ ե այդ: Ի հարկե՝ այդպես չե: Դիրք պետք ե, բայց դրա դերը միանդամայն այլ ե, քան հին դպրոցումն եր:

Յեթե հին դպրոցում ամբողջ դասավանդությունը կառուցում եյին դասագրքի վրա, և յերեխաների աշխատանքը կայանում եր այդ դասագիրքը սերտելու մեջ, յեթե իլլյուստրատիվ դպրոցում (նույնպես դասագրքի վրա հիմնված դպրոցում) ամբողջ աշխատանքը լոկ դասագրքի շուրջն եր պատվում, աշխատանքային դպրոցում—այդպես չե, աշխատանքային դպրոցում դասագրքին վորո՛շ պետք ե, աշխատանքային դպրոցում դասագրքին միայն ոժանդակում եր:

Միշտ չե, վոր կարելի յե հասարակագիտության վերաբերյալ նյութերը գտնել շրջակայքում կամ եքսկուրսում և կամ դիտողական պիտույքներում. հաճախ սիայում և կամ դիտողական պիտույքներում. հաճախ սիայութը կարելի յե միմիայն դասագրքից քաղել: Զայտ այդ նյութը կարելի յե միմիայն դասագրքից քաղել: Զայտագանց կարևոր ե, վոր ուսման հենց առաջին տարիներից յերեխաները աշխատանքի ժամանակ սովորեն ողտեղի գրքից՝ այդ իրենց համար դարձնելով վորպես տեղեկատու և առհասարակ վորպես աղբյուր:

Ընթերցանության գիրքը, ավելի ճիշտն ասած—քրիութումատիան, անհրաժեշտ կլինի հասարակագետին և այն

դեպքում, յերբ ուրիշ նյութ չի լինում, նաև այն դեպքում, յերբ յերեխաներին պետք է լինում գեղարվեստական նյութով հետաքրքրել, ինչպես և այն դեպքում, յերբ յերեխան, զրքով հետաքրքրվելով, ինքը կսկսի դրանից նյութեր քաղել:

Բայց հասարակագետը յերբեք չպետք է մոռանա, վորի իր համար՝ գլխավոր գիրքը—կյանքի գիրքն ե, ամենամեծ և ամենալրիվ գիրքը, և հասարակագետը յերեխաներին պետք է սովորեցնի առաջին հերթին այդ զբքից ոգտվել:

Սյստեղից պարզ ե, վոր իսկական գիրքը պետք է լինի մարդկանց իսկական կյանքի արտացոլումը։ Սակայն այդ արտացոլումը պետք է արվի գեղարվեստորեն, վորով հետեւ յերեխաների սրտին ավելի՛ մոտ ու հասկանալի յեր գեղարվեստական նկարագրությունը, այդ ձեզ համապատասխանում ե նրանց ճանաչողության մեթոդին։

Յերկու գիրք պետք է ոգնեն յերեխային աշխարհն ըմբռնելու. դրանք են—մարդկանց աշխատանքն ու կյանքը գեղարվեստորեն նկարագրող քրիսթոմատիան, և համբագիտական տեղեկատուն՝ մանկական ենցիկլոպեդիան, վորը պետք է փոխարինե ամեն դասագրքի։

Ի՞նչպես պետք է զպրոցը դրանցով ոգտվի։ Այդ քրիսթոմատիայից սկզբում ընթերցանության նյութեր ե ընտրում և աշակերտներին կարում ինքը ուսուցիչը, այնուհետեւ առաջադրվում են այս կամ այն թեմաները մարդկանց կյանքից ու աշխատանքից. իսկ հետո, յերբ նրանք կարդալ կոսորեն, —նրանք իրենք կկարդան իրենց հետաքրքրող թեմաները մարդկանց կայսքից ու աշխատանքից վեցցրած։

Բայց նրանց համար ամենից շատ ոգտակար կինի մանկական ենցիկլոպեդիան, վոր պետք է հարուստ լինի պատկերներով ու ամեն տեսակ նյութերով, վորոնք կարող են պետք գալ աշխատանքային մեթոդը կիրառելիս, Սկզբում, ի հարկե, ուսուցիչը յերեխաներին կողնի՛ ենցիկլոպեդիայում գտնելու յերեխայի աշխատանքի համար անհրաժեշտ նյութը, իսկ հետո նրանք կոսորեն ամեն,

տեսակի աշխատանքին ոգնող այդ անփոխարինելի գրքից ինքնուրույն ոգտվել։ Յես գիտեմ մի շարք շարքային գլրոցներ, ուր յերեխաները հրաշալի կերպով կարողանում եյին թագուն ոգտվել մեծերի հանրագիտական բառարանից, վորը նրանց համար հրաշալի կերպով փոխարինում եր ձանձրալի դասադրքերին։

Հասարակագիտություն ավանդելիս՝ այդպես պետք է զրքից ոգտվել։ Այսպես բնական կերպով ե կատարվում գրա կիրառումը՝ աշխատանքային մեթոդի ու եպլքում. այդ մեթոդը, զրքերի ոգնությամբ, հեշտությամբ կարող ե սինթեզի բերել թե ֆիզիքական և թե մտավոր աշխատանքը։

Այժմ բոլոր ասածներից պարզ ե, վոր այս կամ այն մեթոդը ըմբռնելու վրա ազդում ե դպրոցի ըմբռնումը, այսինքն ի վերջո այն հանգամանքը, թե դպրոցն ինչ կերպ ե հասկանում իր անելիքները։

Մի բան ևս պետք է հիշատակել,—չի կարելի առանձին մեթոդները անջատ կիրառել և լոկ նրա համար, վոր նո՛ր մեթոդ կիրառած լինեն, ինչպես հաճախ վարդում են պեղանաները։ Առաջին մեթոդները, յերբ գործը լավ է դրված, ձուլվում են, լրացնում են միմյանց և չեն կարող գոյություն ունենալ միմյանցից անջատ։ Մանավանդ չպետք ե մոռանալ, վոր այս կամ այն մեթոդը և նրա վարիանաները պետք է համապատասխանեն այն ինդիրներին, վորոնք պետք ե լուծել. իսկ այդ մեթոդներին, վորոնք պետք ե լուծել կարելույն որդանապես բղինեն աշխատանքի եյությունից, Մեթոդները վոչ մի գեղքում չպետք ե լինեն յերեխաներին այս կամ այն նյութը հաղորդելու տեխնիկական յեղանակներ, ինչպես այդ հին դպրոցումներ։ Նրանք պետք ե յերեխաների աշխատանքի մեթոդները մինեն։

Այժմ պարզ ե, վոր աշխատանքի այս կամ այն մեթոդը կիրառելիս, աշխատանքային դպրոցի դասատուն չպետք ե մոռանա, վոր նա յերեխաների աշխատանքի

կազմակերպողն ե, և յուրաքանչյուր մեթողին նա պետք է մոտենա կազմակերպչական տեսակետից, այսինքն՝ աշակերտի համար պարագմունքի աշխատանքային մեթոդը, կամ դիտողական, կամ եքսկուրսիոն, կամ դրամատիզացիայի մեթոդը—զբանք կյանքը ճանաչելու աշխատանքային մեթոդներ են, իսկ ուսուցչի համար—և աշխատանքային, և դիտողական, և եքսկուրսիոն, և դրամատիզացիացիայի մեթոդները—մի՛միայն այնպիսի մեթոդներ են, վորոնք յերեխաներին կազմակերպում են և նրանց ոգնում՝ փորձել ուսումնասիրել մարդկանց աշխատանքն ու կյանքը:

VII.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ.

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՎՈՐՓԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ.

Աշխատանքային դպրոցում ուսուցիչը պետք է լինի յերեխաների կյանքը կազմակերպող:

Նրա դերը աշխատանքային դպրոցում միանդամայն այլ է, քան հին դպրոցում: Նրա դերը հին դպրոցում կայանում եր նրանում, վոր ահեղ գոռզուցով դիսցիլինապահպաներ և ամեն տեսակի խիստ միջոցներով աշակերտների գլուխները լցներ պետքական և անպետք բաներով: Աշխատանքային դպրոցում տեղ չունի այն ուսուցիչը, վորը յերեխաներին վախեցնում է, նրանց վրա գոռում և զլուխները զորով լցնում անպետք բաներով: Նա չպետք է մոռանա, վոր ինքը—յերեխաների ինքնուրույն աշխատանքի ու կյանքի կազմակերպողն և միայն: Իսկ այդ նշանակում է, վոր նաև լավ պետք է ուսումնասիրի իր աշակերտներին, նրանց կարողություններն ու հակումները, և հետեւ, թե նրանք ինչ նոր բաներով են հետաքրքրվում և զրան համապատասխան՝ պարագմունքի համար ծրագրի այս կամ այն կետը ընտրի:

Յերեխաները դպրոց են դալիս առաջին անգամ: Նրանք իրենց հետ բերել են տպագորություններ՝ իրենց մանկական կյանքի մասին, իրենց մանկական խաղերի մասին, այդ—գործի մի կողմն է: Մյուս կողմն այն է, վոր նրանք մանում են մի ուրիշ աշխարհ՝ ուրիշ նորագույն ներով: Ուսուցչի ինդիքն ե՝ կարգի բերել յերեխաներին դպրոց բերած ինչպես նաև դպրոցում ստացած տպագությունները, այսինքն՝ նա պետք և գործն այնպես կազ-

մակերպի, վոր յերեխաները ծանոթանան դպրոցի և նրա խնդիրների հետ և աղա, այդ աշխատանքում նա պետք է սկսի ճանաչել յերեխաներին:

Իսկ այնուհետև ինքը կյանքը և դպրոցական աշխատանքը կառաջարկեն մի շաբթ խնդիրներ, վոր ուսուցիչը պետք է լուծի: Դպրոցում անհրաժեշտ է մաքրություն, կարգ պահպանել, այսուղ ակամայից անցնում են յերեխաների, մեծերի առողջության հարցին, վարակիչ հիվանդությունների գեմ կովելու միջոցներին, հետո մոռենում է ձմեռը, թե տանը և թե դպրոցում սկսում են ձմրան պատրաստություններ տեսնել: Ուսուցիչը կրկին հարմար առիթ է ունենում կազմակերպել յերեխաների մի շաբթ դիտողությունները, յերեխաների՝ մեծերին ոգնելու կամ դպրոցին ոգնելու մի շաբթ աշխատանքները:

Ահա՝ ինչ են առաջարկում Պ. Գ. Խ. կ ծրագրները՝ ուսման առաջին տարվա (գյուղական դպրոցում) աշխատանքի սկզբի համար. Լին կոմպլեքս—Յերեխայի ամառվակյանը՝ մինչև դպրոց մտնելը (նորեկների հետ զրոյց). աշխատանքագիտության վերաբերյալ զրույցներ՝ թե ինչպես են նրանք ամառն անցկացրել, ամառային նրանց աշխատանքների և խաղերի մասին և նրանց ընտանիքների ամառային աշխատանքների մասին: Յերեխաներին սովորեցնել, վոր նրանք իրենց հատուկ մանկական լեզվով ազատ արտահայտել կարողանան իրենց տաղափորություններն ու դիտողությունները: Շոշափած թեմաների վերաբերյալ յերեխաները պատրաստում են մանկական աղատ նկարներ և կաղապարներ (զրանք սքանչելի նյութեր են՝ յերեխաներին ճանաչելու համար): Սովորում են գումարում և հանումը—առաջին տասնյակի սահմաններում (որինակ՝ համեմատելով զանազան աշակերտաների ընտանիքների անդամների թիվը, ընտանիքի փոքր անդամների տարիքը): Ամառվա ընթացքում յերեխայի շինած ձեռքի աշխատանքները հավաքել և պահել դասարանական մուզեյում (այդ կարգում և այն զրույցների հետ և այլն):

Խան ինչո՞վ է զբաղված յեղել մինչև դպրոց ընդունվելը): Հասարակագիտությունից.—պարզել յերեխայի ընտանիքի կազմը: Բնագիտությունից.—բնության ամառային յերեկությունների մասին (յեղանակը, բուսականությունը, ամառ համեմատել աշնան հետ և այլն):

II կոմպլեքս.—ծանոթանալ դպրոցի և նրա աշխատանքի հետ: Աշխատանքագիտությունից.—ինչո՞ւ են դպրոց յեղել: Ի՞նչպես անել, վոր դպրոցում ամենքի համար ել լավ լինի: Խնդիրներ բոլոր գործողություններով տասուի շրջանում, գեղագործական աշխատանքներ, աղատ նկարչություն. շենքը մաքուր պահելու առողջապահական նշանակությունը, հատակները մաքրելը խողանակով և թաց շրբով, արտաքնոցը մաքուր պահել և այլն: Հասարակագիտությունից.—աշակերտների դպրոցական կազմակերպիչական սկիզբը (որապահություն, դիսցիլինա): Կարգապահությունը ինչո՞ւ համար և դպրոցում անհրաժեշտ: Ո՞վ ի՞նչ և անում դպրոցում (ընտանիքում կատարվող աշխատանքի բաժանման ու աշխատանքի կազմակերպության լուսաբանություն): Գրագիտություն, ընթերցումն, կուլտուրական ժամանց՝ ընտանիքում: Դպրոցը ընական նյութերով զարդարելու համար հավաքել գեղեցիկ տեսանկեր, սունկեր, քարեր և այլն: Տերեների գույնի փոփոխումը: Տերենաթափի: Դասարանում բնության կենդանի անկյուն կազմակերպել:

Ծրագրից մեջ բերած հատվածից գուք տեսնում եք, թե զրանք գորքա՞ն մեծ հարաբերություններ են ընձեռնում՝ յերեան բերելու համար ուսուցչի կազմակերպչական ընդունակությունները: Հենց վոր յերեխաները առաջին անգամ դպրոց են դալիս, ուսուցիչը պետք եւ աշխատի նրանց ճանաչել, և ոգտագործելով նրանց ցուցադրած ակտիվությունը (յեթե այդ բացակայում ե, պետք ե ջանացերեան բերել), միքանի շաբաթվա ընթացքում պետք է նրանցից կազմի կողեկանիվ դպրոցական աշխատանքի համար: Ուսուցիչը պետք եւ աշխատանքի բաժանման սկզբունքի

վրա գործն այնպես կազմակերպի, վոր յերեխաները ըստ կարելույն շուտ ծանոթանան դպրոցին և բնության վրա անելիք գիտողությունները խելացիորեն կատարվեն. մոտավորապես այսպես—յերեխաներից յերկուսին կամ յերեքին հանձնարարվում ե քննել ամբողջ դպրոցը և իրենց գիտողությունները հաղորդել կոլեկտիվին, կամ, որինակ, աշակերտաներից յուրաքանչյուրը թող բերի իր ընարած ամենագեղեցիկ տերել՝ գասարանը զարգարելու համար, և կամ աշակերտաներից յուրաքանչյուրը թող պատմի, թե ինչ են անում իրենց տանը:

Յերեխային իսկույն պետք ե կապել կոլեկտիվի հետ, նրան սովորեցնել աշխատել կոլեկտիվի համար և պատասխանատու դարձնել կոլեկտիվի առաջ:

ՈՒՍՈՒՑԻՉԾ, ՎՈՐՊԵՍ Ա.ԲՏԱԿՊՐՈՅՑԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՎ.

Բայց ուսուցիչը չպետք ե միայն մանկական միջավայրի կազմակերպողը լինի, նա անխուսափելիորեն պետք ե դառնա նաև չափահասների, այսինքն՝ ծնողների միջավայրի կազմակերպողը:

Քանի վոր դպրոցը իր աշխատանքի համար նյութեր վերցնում ե կյանքից, անցնում ե կյանքի միջոցով և դիմում դեպի կյանք, ուստի ե նա պետք ե ուսուցչի միջոցով կյանք մանի: Ուսուցիչը գյուղում պետք ե ապացուցի աշխատանքային դպրոցի առավելությունը հին դպրոցից: Այդ գեղգում միայն գյուղացիները կսիրեն դպրոցը և կողնեն նրան: Ուսուցիչը պետք ե գյուղում ազգեցիկ անձն լինի՝ վորովես արտադպրոցական աշխատող, վո՞չ միայն նրա համար, վոր այդ անխուսափելի յե, վորովինեաւ նա համախ միակ կուլտուրական մարդն ե գյուղում, այլև նրա համար, վոր դպրոցը, կապված լինելով կյանքի հետ, չի կարող արտադպրոցական այս կամ այն աշխատանքը չտանել:

Վերցնենք մի հասարակ որինակ, վոր կապ ունի այն նյութերի հետ, վորոնք ցուցված են Պ. Գ. Խ.-ի ծրագը-

ներսում. 1 խմբում առողջապահության վերաբերյալ ի՞նչ աշխատանք կարելի յե տանել. «անհրաժեշտ ե մաքրություն պահպանել—ձեռքերը, շրերը լվալ, բնակարանի ողը մաքրել; Հարցի այսպիսի դրումը պահանջում ե, վոր դպրոցին դարձի նաև կզբոցից գուրս—դրա վրա ուշադրություն դարձի նաև կզբոցից գուրս—տանը: Այս հանգամանքը ստիպում ե ուսուցչին գյուղում կոխվ մղել հակառաօղապահական սովորությունների գումարտագրության աշխատանքի միջոցով, այսինքն՝ զրոյցներ կազմակերպել, ծնողական ժողովներում այդ հարցի մասին խոսել մայրերի հետ և առհասարակ ասողջապահության շուրջը գասախոսություններ կազմակերպել: Ուսության շուրջը գասախոսություններ կազմակերպել: Ուսուցիչներն այդպես վարվեցին և հետեանքն այն յեղավ, ուսուցիչներն այդպես վարվեցին տանը ձեռքերը նույնիսկ տաք վոր յերեխաները սկսեցին տանը ձեռքերը նույնիսկ տաք վարվեցին ակտամ բաղնիս ընդունել և ամեն ջրով լվանալ, շաբաթը մեկ անգամ բաղնիս ընդունել և ամեն շաբաթ շորերը լվանալ ու փոխել: Իսկ թվում եր թե այդ —ամենաղեգար հարցն ե գյուղում»:

ՈՒՍՈՒՑԻՉԾ, ՎՈՐՊԵՍ ՏԵՂԱԳԵՑ.

Ասացինք, վոր դպրոցը կյանքի հետ կապված լինելու հետեանքով՝ ուսուցիչը անխուսափելիորեն պետք ե արտադպրոցական աշխատող զառնա. այդ հանգամանքից անխուսափելիորեն բղխում ե և մեկ ուրիշ անհրաժեշտություն—նա պետք ե գառնա նաև տեղագետ: Զե՞ վոր տեղագիտության հիմունքներով ել կապված են Պ. Գ. Խ.-ի ծրագը ծրագըները: Զե՞ վոր առանց տեղական կարիքները բամանալու, չի կարելի արտադպրոցական աշխատանք տանել, չի կարելի դպրոցը կյանքի հետ կապել:

Գերմանական և ֆինլանդական ուսուցիչները վաղուց ե վոր տեղագետներ են դարձած և զրանով վոչ միայն շատ բան են դպրոցին ավել, այլև մեծ ծառայություն են մատուցել զիտությանը՝ տեղական շրջանի ուսումնասիրության տեսակետից: Իսկ ներկայումս, յերբ պետպահնի աշխատանքն սկսում է տեղագիտության վրա հիմնվել (ուսիսատանքն սկսում է տեղագիտության վրա հիմնվել (ուսիսիցացիա, ույսունների արտադպրական խնդիրներ)՝ գյունիցացիա,

զի բոլոր կուլտուրական ուժերի տեղադիտական աշխատանքն առանձնապես անհրաժեշտ է դառնում:

Յեվ այստեղ ուժերի անտեսություն և լինում այն իմաստով, վոր ուսուցչի տեղագիտական աշխատանքն անհրաժեշտ է և՛ դպրոցական և՛ արտադպրոցական գործի համար:

«Բայց այդ բոլորը մենք ինչպես պետք է կատարենք մեր սահմանափակի կարողությամբ, մեր անպատճառատականությամբ, և վոր գլխավորն է, մեր այն տնտեսական ծանր դրությամբ, վորի մեջ գտնվում ենք», — կառարկեն մեզ աշխատանքով ու հոգսերով ծանրաբեռնված ուսուցիչները:

Փորձենք հաշվի առնել ուսուցչի ժամանակի բյուզ-
ջեն և նրա աշխատանքի տնտեսական պայմանները։ Դողրո-
ցում յերեխաների հետ պարապելու համար ուսուցչին հար-
կավոր ե որական 4 ժամ։ Նա պետք է որական 2 ժամ ել
պարապի դասերի համար,—ընդհամենը 6 ժամ։ Ել ժամա-
նակ չի մնում ընտանեկան հոգսերի և արտադրողական
աշխատանքի համար։ Զե վոր հանգստանալ ել պետք ե։
Յեթե հարցին այդպես մոտենալ,—այդ դեպքում յեւք չի
մնում։ Բայց բանը նրանումն ե, վոր մենք չգիտենք մեր
ժամանակը դասավորել, մեր աշխատանքը ծրագրել, կարգի
բերել, դրա համար ել վիչ ուժ ենք ունենում, վոչ ել
ժամանակ։ Դա—մեր դժբախտությունն ե։ Յեթե մենք ուշը
դարձնենք դասերի և արտադրոցական աշխատանքի հա-
մար պատրաստվելու վրա, կտեսնենք, վոր թե՛ մեկ և թե
մյուս աշխատանքը—տեղադիտական են։ Յեվ հենց դայե,
վոր պետք ե միացնել։ Այդ դեպքում՝ նյութի մի մասը
կբերեն յերեխաները, նյութի մի մասը կտա արտադրո-
ցական այն աշխատանքը, վոր տեղի կունենա զյուղացու-
տանը, խրճիթ-ընթերցարանում, հեղափոխական տոնի տո-
նակատարության նախապարաստությունը, նյութի մի
մասը կտա՝ հնարավորության սահմաններում միացյալ
ուսուցչության կողեկանիվ աշխատանքը (դասերի համար

կոլեկտիվ յեղանակով նախապատրաստվելու աշխատանքը):
Յեզ իրոք, միթե տեղադիտական նյութեր չեւ տալիս
այն խոսակցությունը յերեխաների հետ, թե նըանք ինչ-
պես են ապրում տանը: Միթե ուսուցիչն ավելի հեշտու-
թյամբ չի անի մաքրության վերաբերյալ պրոպագանդը,
յեթե նա «գյուղացու տանն» եւ աշխատում: Միթե հենց
այդտեղ ել զյուրին չի լինի համոզել, փոր գյուղացիները
վառելիք տան դպրոցին: Միթե նա այնտեղ չի կարող հա-
վաքել իրեն անհրաժեշտ նյութը՝ զրույցներից և կամ հիմ-
նելով տեղադիտական խմբակի, փորը նրա համար կհավա-
քի հարկավոր նյութեր, որինակ, գյուղի ուսումնասիրու-
թյան վերաբերյալ, և հետո, հենց այդ նյութերով կոգ-
տվի գյուղաբորհուրդը: Միթե ուսուցիչների ժողովները
նվիրված չեն լինի ուսուցիչների մանկավարժական ընթա-
ցիկ աշխատանքին (չե փոր ժողովները միայն շրջաբերա-
կաններ ու հրամաններ լսելու համար չեն գումարվում) և
միթե այդ ժողովներում չեն կարող քննության առնվել
ուսուցիչների փորձը, վերջապես, միթե ուսուցիչները այդ
փորձը չեն կարող կազմակերպել և յերեան բերել կոլեկ-
տիվ կերպով, այսինքն՝ աշխատանքի բաժնաման սկզբունքի
հիման վրա, — յուրաքանչյուրը կստանձնի մշակելու միայն
մեկ թեմա, համալատասխան այն գրքերի ու նյութերի,
փոր նա ունի ձեռքի տակ, իսկ հետո մյուսներին կհաղորդի
իր արած փորձի հետեանքների մասին: 10 անգամ ունե-
ցող կոլեկտիվը հեշտությամբ կարող ե մշակել քանի թե-
մա և այնուհետեւ — ամբողջ տարվա դասընթացը: Իսկ յու-
րաքանչյուրի համար մեկ յերկու թեմա մշակելը շատ ավելի
դյուրին կլինի, քան քսան թեմա:

Գործն այսպես կազմակերպելով, ուսուցիչն թե դպրոցական և թե արտադպրոցական իր աշխատանքին պատրաստվելու համար կարիք կունենա որական վոչ թե 2 ժամի, այլ շատ ավելի պակաս: Յենթագրենք թե 3 յերեկո նա պետք է արտադպրոցական աշխատանք տանիք— և որ աշխատելով զյուղացու տանը և մեկ որ—տեղադիր:

տական խմբակում։ Յերկու յերեկո նա կհատկացնի ուսուցիչների կովկանիվի հանձնարարած թեմաները մշակելուն, մնում և նրան մեկ յերեկո, վոր նա կոդտագործի յերկու շաբաթը մեկ անգամ դնալով ուսուցչական միության ժողովները, և զանազան նյութեր հավաքելու համար։

Աշխատանքն այսպես դասավորելով, նա ժամանակի և ուժերի մեջ ինայողություն արած կլինի և հնարավորություն կունենա հանգստանալու, որինակ՝ գյուղացուտանը մասնակցելով զրուցյին կամ ուսուցչական միության մեջ կարևոր փորձի հաջող կատարման վերաբերյալ մտքերի փոխանակությանը կմասնակցի և այն։ Այս բոլոր հաշիվները յես բերում եմ՝ հիմնվելով շարքային ուսուցիչների աշխատանքի կազմակերպության մի շարք փորձերի վրա։

Դրացական և արտադպրոցական աշխատանքի այսպիսի մերձեցման և դրա ուղիղ կազմակերպման արդյունքը յեղել ե այն, վոր գյուղացիները զարձել են նոր գործոցի կողմանակիցներ, վոչ միայն կողմանակիցներ, այլ և սկսել են նրան ակտիվ աջակցել վառելափայտ տալ, ուեմոնա անել նույն իսկ նոր շենք կառուցել։ Այդ են ապացուցում այն մի շարք փորձերը, վոր կատարվել են բազմաթիվ դպրոցներում, թե կենտրոններում և թե խուլ անկյուններում։

Տեսնելով ուսուցչի ոգտակար, սեյալ աշխատանքը, գյուղացիները սիրով եյին սկսում միջոցներ բաց թողնել դպրոցի պահպանության համար, բացի դրանից, ուսուցչի ոռոճիվ բարձրացավ (արտադպրոցական աշխատանքիներ տանելու համար)։

Յեկ այսպես, պարզ ե, վոր մենք չգիտենք դասավորել մեր ժամանակը, մեր աշխատանքը, և իգուր տեղը ահապին ժամանակ և ուժեր ենք սպառում, և վոր ամենից վատն ե՝ վախենում ենք աշխատել նոր ձեռով, կատարած փորձերը յերևան բերելով, այլ սիրում ենք գյուղացիուն անել այնպիս, ինչպիս առաջ են արել, թեկուղ շատ վատ։

ԱՇԽԱՏԱԿԵցինք ՆԱԽԱՊԱՏՐՈՒՄՈՒԹՅՈՒՆ

Մենք հիշատակեցինք, թե ուսուցիչն ինչպես պետք է նախապատրաստվի գործոցական և արտադպրոցական աշխատանքի համար։ Այդ պատրաստությունը պետք է տեղի ունենա սեյալ աշխատանքի վրա՝ արտադպրական վորոշ նպատակով։

Այդ նախապատրաստությունը առաջին հերթին պետք է կայանա նրանում, վոր ուսուցիչը մանրամասն ծանոթանա գործոցի խնդիրներին, նրա ծրագրներին և կատարված փորձերը հարմարեցնի այս կամ այն աշխատանքի կոնկրետ պայմաններին։ Ապա պետք է ուսումնասիրվի յերեխան, այսինքն՝ պետք է պարապել պեղալոգիական խնդիրներով, յերեխանների կյանքի դիտողությամբ և ուսումնասիրությամբ։ Այսուհետեւ պետք է ուսումնասիրել այն սայօնը, ուր իրենք աշխատում են, այդ անհրաժեշտ և հարցերը տեղադիտական տեսակետից քննելու վարժություն ձեռք բերելու և ծրագրները տեղական պայմաններին հարմարեցնելու համար։ Պետք է շրջակա բնակչության մեջ արտադպրոցական աշխատանք տանել՝ կրկն արտադպրոցական աշխատանքի գործում վարժվելու համար։

Այստեղից պարզ է, թե ինչում պետք է կայանա ուսուցիչների ինքնապատրաստությունը։ Այդ ինչպես պետք է կազմակերպված լինի։ Դա պիտի կազմակերպվի գորպես նախապատրաստություն՝ աշխատանքի պրոցեսում։

Ասենք թե յեկող տարվանից պետք է փորձել Պ.Գ.Խ-ի ծրագրներով անցնել։ Անհրաժեշտ ե դրանց հետ մանրամասնաբար, բայց միայն, իհարկե, կովկանիվ յեղանակով ծանոթանալ, այսուհետեւ աշխատել այդ հարմարեցնել տեղական պայմաններին։ Հետո, աշխատանքի բաժննման սկզբունքով, մշակել առանձին կոմպլեկսներ և պատրաստվել այդ անցնելու յեկող տարվանից, կովկանիվի մեջ քննության առնելով այդ մշակման հետևանքները։ Այսուհետեւ անխուսափելիորեն հարց կծագի, Պ.Գ.Խ-ի ծրա-

դրմերով պարապելու համար, ձեռք բերելիք նյութերի վրա աշխատել տեղագիտակա՞ն տեսակետից։ Դրա համար ամենից լավ ե՝ կազմակերպել տեղագիտության արտադպրոցական խմբակ, կապվել տեղագիտության (կենտրոնական և ամենից մոտ գտնված) ընկերության հետ, կապվել պետպահնի հետ, նրանցից ստանալ հրահանգներ և աշխատանքի փորձը կատարել այս կամ այն թեմայի վրա, որին մեր շրջանի զբաղմունքները, արհեստները, մեր շրջանի գործարանները և այլն։

Այս աշխատանքի ընթացքում անխուսափելիորեն կբաղխվեն գյուղի, գործարանի կուլտկոմիսիաների հետ։ Նրանց հետ պետք ե՝ կապ հաստատել, վորպեսզի նրանք հետո աջակցեն եքսկուրսիաներ, հետազոտություններ կազմակերպելու գործում և այլն, այսինքն՝ տեղագիտական պրոպագանդայի արտադպրոցական աշխատանք պետք ե տանել։ Արտադպրոցական աշխատանքը պետք ե՝ լավ հիմքերի վրա դնել նաև գյուղացու աներում և իրածիթ-ընթերցարաններում, վորպեսզի զպրոցն հետո ոգտվել կարողանա զբքերից և մանավանդ լրագրներից, վորոնք այնքան հարուստ նյութ են մատակարարում այժմեյությունը ուսումնասիրելու համար։

Իսկ յեթե դրա հետ միասին հաջողվի հրատարակել կենդանի լրագիր՝ անդրագետ գյուղացիների համար, մանավանդ կանանց համար, աղա, դա մի կողմից հարուստ նյութ կտա ուսուցչին (չե վոր կենդանի լրագրի համար նյութը նա ինքը պետք ե՝ մշակի), իսկ մյուս կողմից՝ նա ձեռք կրերի գյուղացիների համակրանքը, մանավանդ գեղջկուների համակրանքը, վոր այնքան կարեոր և զպրոցի համար։

Ընթերցողն իհարկե կնկատի, վոր մենք ամեն անգամ վերադառնում ենք նույն խնդրին, — ուսուցչը պետք ե՝ դառնա կազմակերպող։ Այդ, իհարկե, անկասկած ե և անխուսափելի։

ՈՒՍՈՒՑԻՉՉՅ ՅԵՎ, ԳԻՌԵԲՐԱԿԱՆ ՇԱՀՖՈՒՄՅ։

Յեթե զպրոցը իրեն նպատակ է զնում՝ նոր հասարակության համար կառուցողներ պատրաստել, ամենակարևորը՝ քաղաքական ինքնավերադաստիարակումն ե, յերեխաների քաղաքական դաստիարակությունը, իսկ դրա համար ուսուցչությունը պետք ե՝ Հ. Կ. Ք. Քջիջների և գյուղխորհրդի հետ կապվելու գործը լավ հիմքերի վրա գնի, այլապես՝ կյանքի հետ ունեցած ամբողջ կապը և արտադպրոցական աշխատանքը ավագի վրա կկառուցվի։ Յեթե չլինի վստահություն ու համակրանք դեպի ավանդարդությունը ու գյուղացիների իշխանության որպանները, աշխատանքային դպրոցում վոչ մի հաջող աշխատանք հնարավոր չե։ Բացի դրանից, ուսուցիչը սերտ կոնտակտի մեջ պիտի լինի պիոներական շարժման հետ, վորը նրան անգնահատելի ծառայություն կմատուցանի յերեխաների քաղաքական դաստիարակության գործում։ Այդ շարժումը վորեւ կերպ անտեսելը կոնֆլիկտ ներ կառաջացնի նրա և աշակերտների միջև^{*)}։

ՈՒՍՈՒՑԻՉՅ ԽՐ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԻՆՉԻ՞Ց ՊԵՏՔ Ե ՈԳՏՎԵ.

Այս ամբողջ աշխատանքի համար ուսուցիչը վո՞րտեղից գանի վստահելի ողնականներ, այսինքն անհրաժեշտ պիտույքներ։

Խորհրդային դպրոցի բախտիցն ե, վոր խորհրդային դպրոցի գլխավոր պիտույքը հանդիսանում է ինքը կյանքի քը. հարկավոր ե միայն կյանքի մարդ լինել և կյանքի գիրքը կարդալ սովորել։

Հետո, ի հարկե, ուսուցչին պետք են զբքեր և պատրաստվելու համար, և աշակերտների համար։ Միայն արտադպրոցական աշխատանքն ե, վոր ուսուցչին հնարավություն կտա իր արտադպրության տակ ունենալու ան-

^{*)} Պիոներական շարժման մասին հիշատակում ենք նաև հետեւյալ հայերեն հրատարակությունները. — «Պատկումները և զպրոցը», հրատ. Լինինականի լուսաժողով, 1924 թ. — «Նոր զպրացի ճանապարհներ», մանկավարժ, ժողովածու. հրատ. ՌՍԽՖՀ լուսադողկոմատին կից հայկական Բյուրոյի, Մոսկվա, 1925 թ.»

հրաժեշտ գրքեր, այդ նույն արտադպրոցական աշխատանքը նաև աշակերտներին կտա գրքեր, ինչպես և՝ մեծերի կարդալուց հետո՝ լրագրներ։ Ուսուցիչն իր միջոցներով կարող է միայն սահմանափակ քանակությամբ գրքեր ունենալ, այն ել՝ կոլլեկտիվ յեղանակով, ուսուցչական միության հետ միասին ձեռք բերված։

Պետությունը հաղիվ թե կարողանա դպրոցին շատ գրքեր տալ։ Հսկայական գործ կատարած կլինի ուսուցիչը, յեթե նա վորեե կերպ հաջողեցնի ձեռք բերել հանրագիտական բառարան։

Աշակերտների աշխատանքում զլիստույթները կլինին այն նյութերը, վոր պատրաստել և հավաքել են թե ուսուցիչը և թե աշակերտները՝ վերջինների խաղերի և տեղագիտական աշխատանքի հետևանքով, այն և՝ զանագան դիագրամներ, սխեմաներ, պատկերներ, կազաղարներ, խաղալիքներ և այլն։ Բնությունն հարուստ աղբյուր է այդ նյութերի համար, բացի, ի հարկե, թղթից։

Իսկ կավ և ուրիշ պետքական առարկաներ — յերեխաները վորքան ուզեք կդանեն։ Այս հարցում ևս ուսուցիչը պետք է իր կազմակերպչական ընդունակություններն ու հնարագիտությունը ցուցաբերի, քանի վոր անհրաժեշտ պիտույքները նրա շրջապատումն են գտնվում։ միայն պետք է գիտենալ դրանք խելացիորեն ողագործել։

Ա.ԾԱ.Ա.ՏԱ.Ն.Ք. Հ.Ա.Ծ.Ա.Ա.ՌՈՒՄ.Բ.

Ուսուցիչն իր աշխատանքը թեթևացնելու համար մի բան ևս պետք է անպայման ինկատի ունենաւ։ Դա — հաշվառումն եւ թե՝ իր և թե՝ աշակերտների աշխատանքի։

Թե ինչպես պետք է կատարվի հաշվառումն աշխատանքային դպրոցում, այդ մասին բավական խոսվել ու դրվել եւ մեր մանկավարժական նոր գրականության մեջ։

Ի հարկե, հին, սերտողական դպրոցի հաշվառման ձեւերը — հարցատվությունը, թվանշանները, քննությունները — անվերադարձ կերպով վերացվում են աշխատանքային

դպրոցում, բայց այդ չի նշանակում, վոր նրանում չպետք է հաշվի առնել աշխատանքը։ Հաշվառումն անհրաժեշտ ե թեկուզ նրա համար, վոր աշխատանքը դյուրացվի։ Կ. Սոկոլովը («Учет педагогической работы в школе») միանգամային իրավացի յե, յերբ պահանջում ե, վոր հաշվառման ձեւերը չհրահանգվեն, այլ գրանք պետք է բղիւեն աշխատանքի եյությունից։ Ունակությունների դպրոցում հաշվառման հարցը ավելի հեշտ ե լուծվում, քան հին սերտողական դպրոցում, ուր հաշվի յեր առնվում դիտածը և վոչ թե ունակությունները։

Յեթե աշխատանքային դպրոցում գործը արտադրողական հիմքերի վրա գրվի, ապա հենց աշխատանքի արդյունքը հաշվի կառնի աշխատանքը։ Յեթե դպրոցը իրեն նպատակ է դնում, վոր յերեխաները ունակություն ձեռք բերեն, ապա այդ ունակությունների գոյությունը ինքնին ցույց է տալիս աշխատանքի արդյունքները։

Յերեխաների աշխատանքները, նրանց նկարները, նրանց վարքը — անա գլխավոր տվյալները՝ աշխատանքի հաշվառման համար։ Բայց աշխատանքների հաշվառումն, իհարկե, բավական չի, այդ կերպ կարելի յե հաշվի առնել աշխատանքի արդյունքը, բայց վոչ նրա պրոցեսն ու մեթոդները։ Այստեղ ոգնության ե գալիս դասատունների կոլլեկտիվ հիշատակարանը (որատետրը)։

Մոտավորապես այսպես պետք է վարել այդ հիշատակարանը։

«Հիշատակարանի հիմնական մասը, — գրում է Սոկոլովը*), — պետք է կազմեն ամենուրայ դիտագրությունները դպրոցում կատարվող աշխատանքների մասին։

«Յուրաքանչյուր որվա համար հիշատակարանում հատկացվում ե մի յերես։ Դիտողության ստորաբաժանումների (այունյակների) առանձին վերնագրերը գրվում են ամբողջ

*.) Հնթերցողն այս հարցի հետ ավելի մանրամասնորեն կարող է ծանոթանալ Պ.Դ.Խ.-ի Ա. մեթոդական սամակից՝ «Աշխատանքի հաշվառումն առաջին աստիճանի դպրոցում»։ Այս գրքույկը թարգմանված է հայերեն և շուտով լույս կտեսնի։

տարվա համար միանգամից՝ հիշատակարանի շտպկի վրա, վերևից և ձախից։ Շապիկը վերևից և ձախից 1, 1 և կես վերշոք ավելի յե լինում հիշատակարանից և վերնազբերն այդ մասերում են գրվում, որ չի ծածկվում, յերբ հիշատակարանը թերթում են։

«Այսպիսով մենք պարտավորվեցինք ամենակարճ ձեզ վով ամեն որ նշանակել պարագմունքի առարկան, իսկ յեթե աշխատանքը վորեե տեսակետից բնորոշ և հետաքրքիր եր լինում, նշանակում եյինք նաև դրա հետևանքները և աշխատանքից ստացած մեր ընդհանուր տպավով վորությունը։ Այդ յերկրորդ սյունյակը մենք անհրաժեշտ չեյինք համարում միշտ լցնել։ Դպրոցական շատ աշխատանքներ այնպիսի սովորական, առանձնապես աչքի չընկնող բնույթ եյին կրում, վոր դրանց հետևանքները պարզ եյին նաև առանց դիտագրությունների։ Բայց յեթե ուսուեն իր տեսակետից վորեե նոր ու հետաքրքիր աշխատանք եր տալիս և այդ աշխատանքը չեր հաջողվում, կամ հանկարծ վորեե բան մեծ հետաքրքրություն եր առաջ բերում յերեխաների մեջ և կամ վորեե աշխատանքում թեմայից մեծ շեղումն եր սպահանջվում, այդպիսի դեպերքում նման փաստերը մենք անպայման նշանակում եյինք և հենց այնտեղ կարճ դիտագրում տվյալ յերեւյթի պատճառները և մեր ուրիշ տպավորությունները։ Գիտական հիշատակարաններում այդ վերջին սյունյակը շատերը չեն ընդունում։ Մանկավարժները խորհուրդ են տալիս այդ յեզրակացություններն ու ընդհանրացումները հետաձգել մինչև այն ժամանակի, յերբ բավական փաստեր կկուտակվեն և հիշատակարանի բովանդակությունը մշակման կենթարկվի։ Բայց մենք խոսում ենք մանկավարժական և վո՛չ թե գիտական հիշատակարանի մասին, և մենք չեյինք յենթադրում, վոր կարիք կլինի նյութն այդ կերպ մշակել։ Մեր հիշատակարանը պետք ե ծառայի վորպես տեղեկատու՝ վատ հիշողության համար, և ողնի պրակտիկ աշխատանքի պրոցեսում։ Յեկ այստեղ մենք միանդամայն ընդունելի

ու անհրաժեշտ ենք համարում, վոր թղթի վրա տպավոր-
վի դպրոցական աշխատանքի վոչ միայն բովանդակու-
թյունը, այլ և ուսուցչի՝ դրանից ստացած տպավորու-
թյունը, վորը նույնպես կարող է ջնջվել և հիշողությու-
նից անհետանալ:

«Հիշատակաբանի շապկի ձախ մասում նշանակված ելին այն սյունյակները, զորոնց վրա մենք բաշխում ելինք դիտագրության յենթակա փաստերն ու նյութերը։ Առաջին սյունյակում մենք նշանակում ելինք որը, ամսաթիվը և ամիսը (զորին վերաբերում եր դիտագրությունը)։

«Յերկրորդ սյունյակում—որվա աշխատանքի ընդհանուր պայմանները։ Այստեղ մենք նշանակում եյթնք այնպիսի յերևություներ, ինչպես են, որինակ, յեղանակը, դասարանի ջերմության աստիճանը, կողմնակի մարդկանց ներկայությունը դպրոցում, դեկավարի առողջության վիճակը, մի խոսքով այն ամենը, ինչ ազգել կամ փոփոխել կարող եր դպրոցական աշխատանքի սովորական ձևը։ Պարզ է, վոր յեթե անձրկ եր գալիս, պարապմունքները պետք ե մեկ բնույթ կը Եին. իսկ յեթե լավ յեղանակ եր լինում,—պարապմունքների ձեր փոխվում եր. այդպես և ամեն ինչ նորմալ եր գնում, յերբ յես մենակ եյի պարապում յերեխաների հետ, իսկ յերբ ինձ մոտ պարապմունքներին գալիս եր գարիչը կամ պատահական հաճախորդների մի խմբակ, —պարապմունքների բնույթը խիստ փոխվում եր։

«Ահա և այս չորս ստորաբաժանումները, վորոնց
համեմատ մենք կատարում ենք դիտագրությունները—1)
յերեխանների խաղերը և բարոյական գաստիարակությունը,
2) յերեխանների աշխատանքը, 3) կատարած դիտողություն-
ները, 4) լեզուն։ Այս ստորաբաժանումներից յուրաքան-
չուրն իր հերթին մենք բաժանել ենք մասերի՝ նայած
խմբին և դպրոցում կատարվող կոնկրետ աշխատանքին։
Այսպես, 1 աստիճանի դպրոցի I խմբում պարապմունքնե-
րը մենք նշանակում ենինք այս §§-ում—նկարչություն,
6*

կաղապարում, աշխատանքներ ստվարաթղթից, մկրատի աշխատանքներ և այլն։ Դիտողությունների արդյունքների գրանցումն մենք բաժանում եյինք յերկու մասի. — 1) եքսկուրսիաներ և զրույցներ, 2) հաշիվ. — այնպիսի պարապմունքներ, վորոնք մեր աշխատանքի սիստեմի կիրառմամբ՝ անմիջապես դիտողություններից եյին բղխում։ 1 խմբում լեզվական վարժության վերաբերյալ աշխատանքների դիտագրությունները մենք բաժանում եյինք 4 մասի. — 1) ուշադրությունը, 2) բանավոր լեզուն, 3) ընթերցումը, 4) գիրը։ Այս Տ-ներից առաջինում մենք գրում եյինք յերեխաների պատմելու և բարձրածայն կարդալու պարապմունքները։ «Ուշադրություն» տերմինը մենք մտցրինք նրա համար, վոր ցանկանում եյինք դպրոցական աշխատանքի ստորաբաժանումը կատարել վոչ թե ուսուցչի, այլ աշակերտի մտավոր աշխատանքի պլոցեսի հիման վրա։ Այդ Տ-ներից յերկրորդի մեջ մենք զբեցինք, որինակ, այսպիսի աշխատանքներ — զրույց՝ պատկերի համեմատ, բանավոր շարադրություններ։ Յերրորդ և չորրորդ Տ-ների բովանդակությունը հասկանալի յե։ Հաջորդ խմբերում, յերբ ընթերցանության և գրության ուսուցումը վերջացած եր, մենք այդ Տ-ները փոխարինեցինք ուրիշ անուններով, այն ե՝ յերեխաների զրավոր լեզուն, ուղղագրությունը, յերեխաների ինքնուրույն ընթերցումը։

«Յոթներորդ խոշոր սյունյակը մենք հատկացրել ենք սոցիալական և բարոյական դաստիարակության վերաբերյալ դիտողություններին ու նախաձեռնություններին։ Այդ սյունյակում մենք աշխատել ենք ընդգծել այդ բնագավառում ամենից կարևորը, չկատարելով ավելի մանրամասն ստորաբաժանումներ։

«Վերջապես, ութերորդ սյունյակում մենք զբել ենք — նկատողություններ՝ առանձին աշակերտների մասին։ Այդ տեղ մենք նշանակում եյինք յուրաքանչյուր աշակերտի բոլոր՝ շատ թե քիչ աչքի բնկնող՝ թե զրական և թե բացասական կողմերը։ Անհատական հիշատակարաններ գոր-

ծաղըելը մենք հնարավոր չեյինք համարում, և այդ դիտագրությունները — միակ հնարավոր միջոցն եր՝ յուրաքանչյուր յերեխայի կյանքից վերցրած անհրաժեշտ նյութը չուղության մեջ պահելու համար, թեկուզ կարճ նկատողությունների ձևով։

«Այդ սյունյակների չափերը միմյանց հավասար չեյին, և փոփոխվում եյին՝ գործնական պահանջի համեմատ։ Մի քանի սյունյակներին մենք հատկացրել ենք մեկական տող, մյուսներին, որինակ, վերջինին, մինչև 6—8 տող։

«Դասարանական հիշատակարանի գլխավոր ձեւը II, III, IV խմբերի համար մեզ մոտ միևնույնը մնաց, բայց մասնակի ստորաբաժանումը փոփոխվեց՝ համաձայն պարապմունքների բովանդակության փոփոխության։ Որինակ, եքսկուրսիաները և զրույցները, վորոնք առաջ բնության կուրսիաները կ զրույցները, վորոնք առաջ բնության եյին կրում, հետզհետե գառնում են հատուկ պարապմունքները և յնագիտականությունից, հասարակագիտությունից և աշխարհագրությունից, զրավոր պարապմունքները և ընթերցանությունը հետզհետե բարդանում են ուղագրության հատուկ ուսուցումով, զրության լեզվի զարգացումով, գիրքը կարգալու և նրանից աշխատանքի ժամանակ ոգովիրքը կարողության զարգացումով, և այլն։ Դրանց համեմատ եւ, բնականաբար, պետք է փոփոխեն հիշատակարանի ձևերը։

«Այս հիշատակարանում չկան մի շարք այնպիսի սյունյակներ, վորոնք սովորաբար լինում են դասարանական (խմբի) հիշատակարաններում. — չի նշանակվում դըպացական պարապմունքների հաջորդականությունը, չկան սյունյակներ՝ զանազան աշխատանքի վրա վատնած ժամանակի չափը նշանակելու համար, չկա նաև մի հատուկ տեղ՝ եստետիկական դաստիարակության վերաբերյալ նկատողություններ անելու համար։ Այս բոլոր սյունյակները սկզբում մուծված եյին մեր հիշատակարանում։ Ները սկզբում մուծված եյին մեր հիշատակարանության և առանձին աշխարհապմունքների հաջորդականության և առանձին աշխա-

տանքների վրա գործ դրած ժամանակի չափի վերաբերյալ գիտադրությունների համար մենք հատկացրինք մի փոքրիկ սյունյակ (ուղղահայաց գծով), ուր նշանակում եյինք, թե վոր ժամանակից մինչև վոր ժամանակն եյինք պարապում. եստետիկական դաստիարակության հարցերի համար մենք թողեցինք մի ուրիշ սյունյակ (հորիզոնական գծով). բայց հետո այդ յերկու սյունյակները մենք գիտակցաբար վերացրինք, վորովհետև պարզվեց, վոր աշխատանքի մեր պայմաններում դրանք ավելորդ են»:

Ն. Սոկոլովս առաջարկում ե հիշատակարանն այդպես վարել: Բայց կա հաշվառման ևս մի յերրորդ տեսակը:

Հաշվառման համար կարելի յե ոգտվել աշակերտներին կամ ծնողներին բանափոր (վոր ավելի հեշտ ե) և գրափոր մասսայական հարցուփորձ անելու միջոցով:

Սակայն այդ գործիքը յերկայրի յե, նա կարող ե շատ համոզեցուցիչ նյութ տալ. բայց և կարող ե շատ շուտով ձանձրացնել, ինչպես ամեն տեսակի անկետաները:

Ամենից հեշտ ե—շատ հասարակ հարց ու պատասխանի ձևով այդ կատարել կոլեկտիվում (մատեր բարձրացնելու միջոցով) և բավարարվել:

Հաշվառման առաջին տեսակը բոլորին ել (մանավանդ ցուցանդիմուի ձևով) շատ անհրաժեշտ ե. այդ անհրաժեշտ ե մասնավորապես յերեխաներին, վորպեսզի իրենց աչքով տեսնեն ու համոզվեն, թե իրենք ինչից եյին սկսել և ինչի յեն հասել:

Հաշվառման յերկրորդ տեսակը անհրաժեշտ ե ուսուցչին և վերահսկիչ որգաններին, վորպեսզի կարելի լինի պարզել թե՝ ուսուցչի և թե՛ աշակերտների աշխատանքի մեթոդի և ուժերի բաշխման ճիշտ լինելը:

Հաշվառման յերկրորդ տեսակը հարկավոր ե՝ առանձին մասսայական հարցերի վերաբերյալ թվական ոբյեկտիվ տվյալներ ստանալու համար, այնպիսի հարցերի, վորոնցով հետաքրքրվում են և ուսուցիչները, և վարչական որդանները:

Բայց աշխատանքը ամենից լավ հաշվի առնել կարելի կլինի նրանով, թե աշակերտներն ինչպես են ոգտվել դպրոցից և ինչ են դարձել. բայց յերկա՛ր ժամանակ պարզություն և սպասել նման հաշվառման: Անհրաժեշտ ե անմիտեատք և սպասել նման հաշվառման: Վերոհիշյալ ձևերը գործ դնելով՝ այդ ջական հաշվառման: Վերոհիշյալ ձևերը գործ դնելով՝ այդ կարելի յե իրականացնել: Սակայն պետք ե աշխատել, վոր այդ հաշվառման ուսուցչին չինովակի չդարձնի:

Ուսուցիչը չպետք ե մոռանա, վոր նա քաղաքացի յե նո՞ր հասարակության, վոր նա—այդ հասարակության ծառան ե, և վոչ թե չինովակի ե, և վորնա այդ հասարակության մեջ ամենապատասխանատու և ամենապատվագոր աշխատանքն ե տանում, նա հանդիսանում ե այդ նոր՝ շտեսնված և չփորձված հասարակակարգի հաղորդիչը, և վոր այդ կարգերը պետք ե իրականացնեն մարդկության հանրակեցության բարձրագույն խնդիրները, հասարակական կյանքի բարձրագույն իդեալները:

Նա չպետք ե մոռանա հետեւյալը. ինչպես վոր դպրոցն իրեն առաջադրած ինդիբները հասարակությունից ե ստանում և վերջինիս ամենակարևորագույն հասարակական բջիջներից մեկը հանդիսանում, այնպես ել ուսուցիչն ե իրէն առաջադրած ինդիբները հասարակությունից ստանում և կազմում մի անդամն այն համայնքի, վորին գըլը բոց են կոչում, և այդ դպրոցում ուսուցիչը հանդիսանում ե հասարակության առաջ դրված խնդիրների հաղորդիչը:

Նա չպետք ե մոռանա, վոր նա վերջիվերջո միայն աշխատանքային դպրոցում ե գտնում իր սեփական տեղ և իսկակա՞ն տեղը, վորովհետև նա այստեղ դառնում ե իր սեփական ծառան: Վորպես հասարակության անդամ՝ նա խնդիբներ ե առաջադրում դպրոցին, վորպես ուսուցչի՝ նա դրանք կատարում ե, վորպես քաղաքացի՝ նա ոգտվում ե իր աշխատանքների արդյունքներով:

Յեվ յեթե նա ին դպրոցում չինովակի եր ու ստրուկ, յեթե բուրժուական հասարակության իլլուստրատիվ

պրոֆեսիոնալ դպրոցում նա պրոլետար երև և իշխող դասակարգերի ծառան,—ապա աշխատանքային դպրոցում նա վերջապես դառնում է իր սեփական տերը, վորովհետեւ նրա պրոլետար յեղբայրները նրա հետ միասին են դպրոցը հիմնում, իսկ նա, ինտելիգենտ պրոլետարը, նրանց հետ միասին պրոլետարական նոր հասարակություն է կառուցում, քանի վոր նա վոչ միայն ուսուցիչ է, այլև հասարակական գործիչ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶ

Առաջաբան 3

I.

ԴՊՐՈՑԻ ՆՊԵՏԱԿԱՆԵՐԸ. ԱՇԽԱՏԱՆՔԵԴԻՏԱԼԻԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀՍԽՐԸԿՄԴԻՏԱԼԻԹՅՈՒՆԸ.

Դպրոցի նպատակների մասին 5
Աշխատանքային դպրոցի ծրագրների մասին 8
Աշխատանքը յեզ հասարակուրյունը—Պ.Գ.Խ.-ի ծրագրներում 9

II.

ԴՊՐՈՑԻ ՆՊԵՏԱԿԱՆԵՐԸ ՅԵՎ ՅԵՐԵԽԱԿԱՆԵՐԸ.
Յերեխայի զարգացման ռոշանները 12

III.

ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐՆԵՐԸ. ՅԵՐԵԽԱԿԱՆԵՐԸ ՅԵՎ ՀՍԽՐԸԿՄԴԻՏԱԼԻԹՅՈՒՆ ԾՐԱԳՐՆԵՐԸ.

Պ.Գ.Խ.-ի սխեման ի՞նչ է առաջարկում սպառել 16
Աշխատանքային դպրոցը յեզ հասարակագիտուրյունը 18
Աշխատանքային համար ի՞նչ նյուր է առաջարկում
Պ.Գ.Խ.-ի սխեման 19
Ի՞նչ է կոմպլեքսը 23
Հասարակագիտուրյան համար ի՞նչ նյուր է առաջարկում
Պ.Գ.Խ.-ի սխեման 25

IV.

ՀՍԽՐԸԿՄԴԻՏԱԼԻԹՅՈՒՆԸ, ՀՍԽՐԸԿԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿԱՆԻԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ՄԻԶԱՎԱՅՐԸ.

Հասարակագիտուրյունը յեզ հասարակական դասիարակուրյունը 27
Հասարակագիտուրյունը յեզ միջավայրը 31
Ի՞նչ է այժմեյուրյունը 33

Հասարակագիտուրյունը յեվ տեղագիտուրյունը	34
Արինցիպներ, վորոնց գրա կառուցված էն Պ. Գ. Խ.-ի ծրագրելու	36
Պ. Գ. Խ.-ի ծրագրելու յեվ տեղական պայմանները	38

V.

ԳՈՐԾԻ ՆՊԵՏԵԿՆԵՐԸ ՅԵՎ ՌԻՍՈՒՑԻՉԸ.

Ինչ է պահանջվում խորհրդային դպրոցի ուսուցչից	41
Աշխատանքի մերողները յեվ հեղափոխուրյունը դպրոցում	44

VI.

ԳՈՐԾԻ ԽԵԳԻԲՆԵՐԸ ՅԵՎ ԸՆԹԱԾՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ.

Յերեխայի հասակը յեվ աշխատանքի մերողները	46
Աշխատանքային մերող	50
Դիտողական մերող	54
Ենթուրափոն մերող	57
Դրամատիզացիայի մերող	61
Հասարակագիտուրյան վերաբերյալ գրեր	65

VII.

ԸՆԹԱԾՆՔՆԵՐԸ ԻՆ ԳՈՐԾԻ ՌԻՍՈՒՑԻՉԸ.

Ուսուցիչը վորպես կազմակերպող	67
Ուսուցիչը վորպես արտապրոցական աշխատող	72
Ուսուցիչը վորպես տեղապես	73
Աշխատանքի նախապատրաստուրյուն	77
Ուսուցիչը յեվ պիոներական շարժումը	79
Ուսուցիչն իր աշխատանքում ինչի՞ց պետք է ոգտվի	79
Աշխատանքի հաշվառումը	80

**ԽՈՐԾՐԴԱՅԻՆ ՍՈՅԻԱՀԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿ20ԻԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՐԵԴ ՆԻԿՈԼՍԿԻ ՓՈԼ. 10.**

- Ի. ԱՏՈԼԻՆ.—Գյուղացիական հարց: Գինը 50 կոպ.
 Ի. ԱՏՈԼԻՆ.—Ազգային հարց: (Տպագրվում է):
 Վ. ԼԵՆԻՆ.—Պատգամներ յերիտասարդուրյան. գինը 15 կ.
 Ի. ՖԼԵՐՈՎԱԿԱՅՅԻՑ—Մեր առաջին բանվ.-գյուղ. հեղափոխուրյունը.
 Ն. ԿՐՈՒՊՈՎԱՅՅՈՒ. —Լենինի պատգամները ժողովրդական լուսավորուրյան մասին: Գինը 20 կ.
 Լ. Վ. ՎԵՆՏՅԵՎ.—Ինչպես աշխատանքել խորհուրդները.
 Զ. ՅԱՎՈՐՍԿԱՅՅՈՒ. —Կարա Յեսկին (կենսագր.): Գինը 10 կ.
 Ն. ՏՅՈՒՐՅՈՎԱԿՈՒԼՈՎ.—Ազգային հարցը յեվ դպրոցը: Գինը 40 կ.:
 Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ.—Հասարակագիտուրյունը և ասինանի դպրոցում:
 Ն. ՅԵԼԻԶՈՅՈՐՈՎ.—Ինչ վորոշեց կուս. XIV համագ. 112 էջ, գ. 30 կ.:
 Ա. ԴՄԻՏՐՅԵՎ. —Տպիտուրյունը յեվ սնահավատուրյունը: Գինը 15 կ.
 Մ. ԼԻՎԵՆՅԿԻ.—Գյուղաճնեսական հարկ: Գինը 20 կ.
 ՅԵՍԻՊՈՎ.—Գյուղացիուրյան պահանջները յեվ խորհրդային դպրոցի ծրագրելու: Գինը 12 կոպ.
 Պ. Վ. Ա. ՍՈՎ.—Հողի մշակումը յերացի ժամանակ: Գինը 40 կոպ.
 Լ. ՅՈԶԵՖՈՎԻՉ. —Գյուղ կանգնի գերան կլոտրի (կոռպերացիան գյուղում): Գինը 30 կոպ.
 Ի. ՊՈԴՅՈՎՈԼՅԿԻ.—Ասձու կամքը թե՝ գյուղաճնեսական գիտուրյունը: Գինը 20 կ.
 ԳՈՒԳԼԻՆ.—Փորող փայտից մինչեվ տրակուր:
 Ա. ԿՐՈՎԶԵՆԿՈ. —Թէ ինչպես կարելի յե գյուղում ելեքտրականուրյուն անցկացնել: Գինը 15 կ.
 Պ. ԼԻԽՈԶԵՎ.—Խոզը գյուղացիների կերպուղի է:
 Ն. ԲՐԱՌԻՏՏԻ. —Թէ ինչպես գերմանացին սիպեց, վոր կովը տարին յերկու անգամ ծնի.
 Ա. ՍԿՈՄՈՐՈԽՈՎ. —Ողնաշին ոգնուրյունը հիվ. կենդանուն, գ. 17 կ.
 Ա. ԲՐԱՆՍԲՈՒԹԻ. —Ընտանի կենդանին կամ ուսակի իշ հիվանդուրյունները: Գինը 17 կ.



- Ն. ՍԵՄԾԿՈՒԹԻՒՆ.—Թոփախս. (պատկերազարդ): Գինը 25 կ.
Բ. ԳԻՆԾԲՈՒԹԻՒՆ.—Յերեխաների վարակիչ նիվանդուրյունները. գ. 30կ.
Վ. ԲՐՈՆՆԵՐ.—Վեճերական ախտեր. Գինը 25 կ.
Ա. ՍՊԵՐՈՆԾԿԻ. —Մոր ալբենարանը. (պատկ.):

- Ն. ՍԵՄԵԿԻՆ. —Արեվիք, երա վորդիները յեվ բռնները: (Տպագր.):
Ա. ՌՈՒԲԻՆՇԵՑԵՅՆ. —Ռւդից մինչեվ այերոպլան: (Տպագր.):
Վ. ՅԱԶՎԻՑԿԻՅՅ, —Մարդկային բնակարանի պատմուք.: Գինը 15 կ.
Դ. ԳՐՈՎԵ—Ինչպես ե սարեված սիլեզերքը. (Տպագր.).
Գ. ԲՄՑԱՅԿԻՅՅ—Վորոն, կայծակ յեվ ելեքտրականուրյուն (Տպագր.):
Ա. ԳՈԼ. —Կենդանիների յեվ մարդու ծագումը: (Տպագր.):
- Մ. ԳՈՐԿԻՅ. —Յերիտասարդ գրողը: Մարդը: Գինը 15 կ.
Ա. ՍԵՐՍՖԻՄՈՎԻՉ. —Պատմվածքներ:

- Դ. ՄԱՄԻՆ-ՄԻԲԻՐՅԱԿ. —Մոծակի յեվ արջի մասին: (Պատկ.), գ. 15 կ.
Պ. ՈՐԼՈՎԵՅՅ. —Ճամբորդուրյուն այերոպլանով: (Պատկ.) Գինը 22 կ.
Պ. ՈՐԼՈՎԵՅՅ. —Քիմիկոս Կուզկան: (Պատկերազարդ): Գինը 28 կոպ.:
Ա. ԿՈՒՊՐԻԻՆ. —Յերկրի խորենում: (Պատկերազարդ): Գինը 15 կոպ.
Ա. ՆԵՎԵՐՈՎ. —Ինչպես եյն ապրում տիկնիկները յեվ ինչ արեց
արնինե զինվորը: (Պարկերազարդ): Գինը 16 կոպ.:
Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ. —Ինչպես Սահնն կարմիր բանակային դարձավ: գ. 35կ.
Ֆ. ՖՈԲՈՒ. —Մինիստր մեկ ժամով: (Պատկերազարդ): Գինը 18 կոպեկ:
ՅԵ. ՌԱԴԻՆ. —Պիոներ, պահպանիր առողջուրյունդ: Գինը 10 կոպեկ:
ՌԻԺՈՎ. —Պատաճի պիոներ: (Ժողովածու):
Պ. ԽԵԲՆԻԿՈՎ. —Կարմրամորները:

ԳԻԱԸ 65 ԿՈՊ.



Б. ЖАВОРОНКОВ

Обществоведение в школе
I ступени.

На армянском языке.

Центральное Издательство Народов Союза ССР
Москва

Никольская, 10.



